ուղտ Արարատի

Թիվ 1 (12), մարտ - ապրիլ, 2007 թ.



ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանի հետ հարցազրույցը կարդացեք էջ 6-8-ում

ՀԱՅՈՑ ՆՅՈՒՐՆԲԵՐԳԸ ԴԵՌԵՎՍ ՉԻ ԿԱՅԱՑԵԼ

Հայոց Նյուրնբերգը դեռևս չի կայացել: Հրեաները, ովքեր ողջակիզվեցին Եվրոպայում, հայրենիք ունենալու իրավունք ստացան. հանցագործներն ու կազմակերպիչները պատժվեցին, Հոլոքոստը միջազգայնորեն դատապարտվեց, Իսրայելը վնասի հատուցում է ստանում ցայսօր: Հայոց պարագան բոլորովին այլ տրամաբանությամբ, այլ կերպ դասավորեցին միջազգային քաղաքական հարաբերությունների «ճարտարապետները»: Ցեղասպանության արդյունքում հայերը միջազգայնորեն զրկվեցին հայրենիքից, հայրենիքով և հայրենիքում ապրելու իրավունքից: Ճիշտ է ցեղասպանության կազմակերպիչները դատապարտվեցին, սակայն ճիշտ է նաև այն, որ նրանք ազատ արձակվեցին, իսկ Հայոց ցեղասպանությունը միջազգայնորեն չդատապարտվեց... Ահա սրանք էին այն պատճառները, որոնք դրդեցին հայերին (և, հավանաբար, ապագայում դրդելու են այլ ժողովուրդների), միջազգային քաղաքական ու իրավական անկատար համակարգի «բացթողումները» սեփական միջոցներով լրացնել:

1920-ականներին «Նեմեսիսի» շարքերում ընդգրկված հայ վրիժառուները պատժեցին Հայոց ցեղասպանության գլխավոր կազմակերպիչներին (ցավոք, դեռևս անպատիժ մնացին Հայոց ցեղասպանության գաղափարախոսներն ու ծրագրողները): 1973-ին Գուրգեն Յանիկյանը սկիզբ դրեց Հայ դատի արդարացի լուծման ազատագրական պայքարին. 1975-ին Հայաստանի Ազատագրության Հայ Գաղտնի Բանակը (ASALA) ստանձնեց Հայոց նորագույն զինյալ ազատագրական պայքարի հիմնական ծանրությունը...

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Խմբագրականի փոխարեն	էջ1-3	
1965 թվական, ապրիլի 24. Հայոց ինքնության ու համահավաք հաստատման օր	էջ 4-5	Նաևե Սևան
Ազգային գիտակցությունը ազգի հիշողությունն է...	էջ 6-8	Զեմմա Բաղդադյան
Կոնգրեսում քննարկվող Հայկական նախագիծը թուրք-ամերիկյան հարաբերությունների համատեքստում	էջ 9	Արտակ Շաքարյան
Վրաց-ադրբեջանական դաշինքի շուրջ	էջ 10-11	Հայկ Գաբրիելյան
Ջավախքի ինքնավարության խնդիրը	էջ 12	Էդգար Հելիելյան
Մի ընտանիքի պատմություն կամ Սումգայիթը Թովմասյան եղբայրների աչքերով	էջ 13	Անուշ Ղլղաթյան
Ականատեսի վկայություններ	էջ 14-15	Վերժինե Սվազլյան
Ֆրիտյոֆ Նանսենի հայանպաստ գործունեությունը	էջ 16-17	Արշակ Գաբրիելյան
Պաուլ Ռորբախ	էջ 18	
Հայոց Նյուրնբերգը մասամբ իրագործեցին հայերը	էջ 18	
«Նեմեսիսը» գործողության մեջ	էջ 19	Հակոբ Մանջյան
Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության պատմություն. Նահատակներ հավերժության	էջ 20-21	Ստեփան Պողոսյան
«Կոճռռ» ջոկատ	էջ 22	Լիլիթ Հարությունյան
Անցյալի մեջ է գալիք հավերժականը...	էջ 23	Մկրտիչ Գասպարյան
Հրանտ Դինքն ու հայոց ազգային հերոսի կերպարը	էջ 24-25	Թամարա Վարդանյան
Մտավորականի խոսքը պետք է սպեղանի լինի ժողովրդի վերքին	էջ 26	Դիանա Մակինյան
Գիտնականը տեսնում է սկսած աշխատանքի արժանավոր շարունակողների	էջ 27	Վիկտորյա Բուռնազյան
Սարյանի հետ	էջ 28	Վիլհելմ Մաթևոսյան
Արմենականութիւն եւ Հայք	էջ 29	Վարդան Նիկողոսյան
Քարտեզը ևս պետք է լինի անսխալ	էջ 30	Ռուբեն Սիմոնյան
Ազատության գլխիվայր շրջումն ու խեղաբեկումը մեր օրերում	էջ 31	Սիրանուշ Բաղդասարյան-Թափալցյան
Մանկապատանեկան խմբի անվտանգության շուրջ	էջ 32	Մուշեղ Սարգսյան
Մի քիչ պղպեղ՝ մայրական սիրո մեջ	էջ 33	Նարինե Աբրահամյան
Տարատերև բարդի	էջ 34	Հայկ Խաչատրյան
Արարատ լեռան ճանապարհորդության վերհուշը	էջ 34	Արա Զոհրաբյան
Անահիտ Նարեկացի	էջ 35	Աշխեն Գրիգորյան
Ամուդա բերդ	էջ 36	

Շապիկի լուսանկարը՝ Հարություն Ստեփանյանի

Լրատվական գործունեություն իրականացնող «Ուխտ Արարատի» ՍՊԸ, հասցեն Կասյան 6/19, վկայական N-03A 069706, տրված 12.10.2005թ.

Տպաքանակը՝ 1000
Ծավալը՝ 4.5 տպ. մամուլ

Համարի թողարկման պատասխանատու՝ Տիգրան Փաշաբեզյան

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» տպարանում, ստորագրվել է տպագրության՝ 21.04. 2007

Խմբագրության հասցեն՝ 375010, Երևան, Ագաթանգեղոսի 7բ
Հեռ. (37410) 52-51-90

Official periodical of "Oukht Ararati" LTD

EDITORIAL BOARD
Responsible of the issue:
Tigran Pashabezyan

Address: 375010, Yerevan, Agatangeghos 7b
Tel. (37410) 52-51-90
E-mail: oukhtararadi@yahoo.com

Գինը՝ 300 դրամ

«Ուխտ Արարատի» ամսագրից նյութեր արտատպելիս՝ խնդրում ենք հղում կատարել:

Հարգելով հեղինակային իրավունքը՝ ստացված հոդվածները չենք խմբագրում:

ՀԱՐՎԱԾԻ ԳԼԽԱՎՈՐ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆԸ՝ ՀՀ ԱԺ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Խմբագրականի փոխարեն

Տարօրինակ է այն, որ Հայաստանի Հանրապետության ոչ իշխանություններին, ոչ էլ ընդդիմադիր կուսակցություններին (գոնե այդպիսին է առաջին տպավորությունը) չի անհանգստացնում տարածաշրջանում ուրվագծվող այն սցենարը, որ ի հայտ է գալիս Իսրայել - Լիբանան պատերազմի, իրաքյան փորձառության, ԱՄՆ - Իրան առաջիկա պատերազմի, Ղրիմը Թուրքիային հանձնելու ուկրաինական այս նոր գունավոր հեղափոխական քաոսի բուն տրամաբանությամբ: Այն, որպես Իսրայել - ԱՄՆ - Անգլիա եռանկյան աշխարհաքաղաքական ագրեսիվ նկրտումներ, բաց տեքստով ներկայացրել է Ռալֆ Պիտերսը 2006-ի օգոստոսին, ամերիկյան «Զինված ուժերի հանդես»-ում տպագրված հոդվածում և կից քարտեզներում:

Հրապարակմանը հաջորդող ամիսների ռազմաքաղաքական զարգացումները գալիս են կրկին հաստատելու, որ Եվրոմիություն - ԱՄՆ ալյանսը ավելի քան վճռական է (հիմա էլ Մերձավոր Արևելքը, ամբողջ Հայկական Լեռնաշխարհն ու Հարավային Կովկասը համաշխարհային նոր պատերազմի սկզբնառու թատերաբեմ սարքելու ճանապարհով) համաշխարհային միաբևեռ գերտերություն ստեղծելու այս վերջին հուսահատ քայլը նույնպես փորձարկելու խնդրում:

Մտահոգող է այն, որ մեր ազգային-պետական մտածողությունը առ այսօր, չգիտես ինչո՞ւ (ըստ մեկ ընդհանուր նպատակային տրամաբանության), համեմատական վերլուծություն չի արել, չի փորձել պարզել հայերի 1915-1923թթ. ցեղասպանության հրահրման, կազմակերպման և իրագործման ու 1921թ. մարտի 16-ի ՌՍՖՍՌ - քեմալական (ոչ օրինական) Թուրքիայի (Անկարայի) միջև կնքված Ռուս - թուրքական բարեկամության պայմանագրի ու այն Արևմուտքի կողմից հաստատագրող Լոզանում (1922թ. նոյեմբերի 20-ից 1923թ-ի հուլիսի 24-ը) կայացած կոնֆերանսի արդյունքում կնքված հաշտության երկկողմ (մի կողմից Օսմանյան (օրինական) Թուրքիայի (Ստամբուլի) և մյուս կողմից Մեծ Բրիտանիայի, Ֆրանսիայի, Իտալիայի, Հունաստանի, Ճապոնիայի, Ռումինիայի, և Հարավսլավիայի միջև) պայմանագրի դրդապատճառները, դրանց մոտիվներն ու աշխարհաքաղաքական ակնկալիքները:

Այսօր ոչ պակաս մտահոգիչ է նաև այն, որ անհրաժեշտ էր Մոսկվայի ու Լոզանի պայմանագրերի համատեքստում, ըստ Հայությանը, ՀՀ-ին և ԼՂՀ-ին 1991-ից առ այսօր և առաջիկայում սպառնացող վտանգների ու մարտահրավերների, քննության առնել նաև 1) 2-ը փետրվարի 1920թ. ՌՍՖՍՌ - էստոնիայի միջև խաղաղության պայմանագիրը, 2) 6-ը ապրիլի 1920թ. Հեռավոր Արևելյան Հանրապետության հռչակման ճանապարհով Ռուսաստանը կիսելու իրողությունը, 3) 12-ը հուլիսի 1920թ. ՌՍՖՍՌ - Լիտվայի և 4) 11-ը օգոստոսի 1920թ. ՌՍՖՍՌ - Լատվիայի միջև կնքված խաղաղության պայմանագրերը, 5) 30-ը սեպտեմբերի 1920թ. ՌՍՖՍՌ - Ադրբեջանական ՍՍՀ-ի միջև Միութենական պայմանագիրը, 6) 26-ը փետրվարի 1921թ. ՌՍՖՍՌ - Պարսկաստան և 7) 28-ը փետրվարի 1921թ. ՌՍՖՍՌ - Աֆղանստան պայմանագրերի, 8) 18-ը մարտի 1921թ. ՌՍՖՍՌ - Լեհաստանի միջև Ռիգայում կնքված հաշտության պայմանագիրը, ինչպես և 9) 12-ը մարտի 1922թ. Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության ստեղծման և 10) 3-ը ապրիլի 1922թ. Տրոցկու փոխարեն Ստալինին ՌԿ(բ)Կ Կենտկոմի Գլխավոր քարտուղար ընտրելու իրողությունները, ըստ այդմ՝ 11) 13-ը դեկտեմբերի 1922թ. Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Հանրապետության ստեղծման ու 12) 30-ը դեկտեմբերի 1922թ. ՍՍՀՄ-ի ստեղծման իրողությունը, նաև 13) 1936թ. համաձայն ՍՍՀՄ նոր Սահմանադրության Անդրֆեդերացիայի լուծարման ու Վրացական ՍՍՀ-ի, Ադրբեջանական ՍՍՀ-ի ու Հայկական ՍՍՀ-ի ձևավորման ժամանակ հայկական Նախիջևանն ու Արցախը Ադրբեջանի, իսկ Ջավախքը Վրաստանի կազմում թողնելուն իր վճռական անհամաձայնությունը հայտնած Աղասի Խանջյանին Թբիլիսիում (Անդրֆեդերացիայի կենտրոնում) սպանելու փաստը, 14) Ղրիմը Հրեական ինքնավար մարզ դարձնելու Իսրայելի նորաստեղծ պետության 1948թ. պաշտոնական խնդրանքը ՍՍՀՄ արտաքին անվտանգության տեսանկյունից Ստալինի կողմից մերժելու փաստը (այն հիմնավորմամբ, որ այն կվերածվի ՍՍՀՄ-ի փորի տակ գտնվող ամերիկյան անխորտակելի ականակիր հածանավի) և 15) 1953թ. հուլիսի 26-ից նախապատրաստվող «Կարիբյան»՝ 1959-61թթ., ճգնաժամից (ասել է թե Համաշխարհային Երրորդ՝ ատոմային պատերազմից) տարիներ առաջ՝ 1954թ. փետրվարի 19-ին ռուսական Ղրիմը Ուկրաինային տալու աշխարհաքաղաքական հեռահար տրամաբանությունը:

Պատմաքաղաքական քննության արդյունքում պարզվում է, որ եթե 1880-ականներից մինչև 1917թ. Հայաստանն ու հայությունը աշխարհի մի շարք երկրների (այդ թվում, օրինակ, Իսպանիայի, Հունաստանի, Բուլղարիայի, Լեհաստանի, Ռուսաստանի, Աֆղանստանի և այլնի) հետ «խանգարում էին» Մեծ Բրիտանիայի թագավորությանը համաշխարհային կայսրություն դառնալու հարցում, իսկ 1918-23թթ. ցեղասպանությունից փրկված հայությունն ու Արևելյան Հայաստանը «խանգարել սկսեցին» համաշխարհային պրոլետարիատին՝ համաշխարհային հեղափոխության, դիկտատուրայի ստեղծման ու կոմունիզմին հասնելու հարցերում, ապա 1985-ից արդեն ՀՀ-ն, ԼՂՀ-ն և հայությունը «խանգարում են» համաշխարհային կապիտալիզմին՝ գլոբալիզմի ու համաշխարհային ինտեգրացիոն միաբևեռ ժողովրդավարության ստեղծման «պատմական» գործընթացին: Խնդիր, որը ինչպես երևում է ՀՀ-ի կողմից 1990թ. առ այսօր վարած արտաքին քաղաքականությունից, զանց է առնվել թե ՀՀ գործադիրի և թե օրենսդիրի կողմից:

Այդ են վկայում, օրինակ, ՀՀ-ի կողմից առանց նախապայմանների Թուրքիայի և Ադրբեջանի հետ սահմանները բացելու, դիվանագիտական, առևտրական և այլ հարաբերություններ հաստատելու մշտառկա պատրաստակամության մասին արվող հավաստումները. այն էլ, իբրև թե հանուն ՀՀ շրջափակման վերացման, նաև տարածաշրջանում խաղաղության ու տրանսպորտային հաղորդակցության վերակագնման ու առևտրային համագործակցության հաստատման: Կարելի է կարծել, թե 1) ՀՀ տնտեսության սույն ցավալի իրողության բուն պատճառը հենց միայն Ադրբեջանի հետ առևտուր չանելն է, կամ էլ՝ 2) սահմանների փակ լինելն էր պատճառը, որ Ադրբեջանը Սումգայիթով պատասխանեց ԼՂԻՄ մարզխորհրդի 1988-ի որոշմանը, 1991-ից լայնամասշտաբ պատերազմ սանձազերծեց ԼՂՀ-ի ու ՀՀ-ի դեմ, իսկ պարտությունից տարիներ անց՝ առ այսօր, պետական մակարդակով շարունակում է սպառնալ նոր պատերազմով, կամ էլ՝ 3) 1918-21թթ. առ այսօր հայ-թուրքական սահմանի փակ լինելն է 1991-ից առկա ՀՀ շրջափակման բուն պատճառը (Վրաստանի կողմից ՀՀ-ի երկաթուղային շրջափակման), որից իբրև թե ուզում են փրկել մեզ ԵՄ-ն ու ԱՄՆ-ը Հայաստան-Թուրքիա սահմանը բացելու միջոցով, անտեսելով, անշուշտ, հենց միայն Հայաստանի համար Աբխազիայով անցնող երկաթուղին փակ պահող Վրաստանի կողմից իրականացվող շրջափակման իրողությունը. խնդիր, որը ԱՄՆ և ԵՄ քաղաքականության հետ միասին առ այսօր լռության է մատնում նաև ՀՀ արտաքին քաղաքակա-

նությունը: Հարց է ծագում, ինչո՞ւ …

Այն դեպքում, երբ ինքնախաբեությունից զուրկ եզրահանգումները գալիս են հաստատելու, որ 1985թ. (վերակառուցման անվան տակ) Արևմուտքի կողմից իրագործման է դրվել 1918-23թթ. Ռուսաստանի, Կովկասի, Հայկական Լեռնաշխարհի, Միջին Ասիայի ու Մերձավոր Արևելքի տարածքներում բոլոր կիսատ թողած «գործերը» նորովի ու նոր ռազմաքաղաքական և այլ տեխնոլոգիաներով ծրագրային ավարտին բերելու հրեշավոր խնդիրը:

Արևմուտքի կողմից ծրագրված այս նոր Մեծ Խառնակությունը, որն իրագործվելու է Արևելքի երկրների մասնատումների, հակամարտ լարվածությունների նոր օջախների ստեղծման ճանապարհով, թելադրված է «վաղվա աշխարհը» մեկ կենտրոնից կառավարելու ցանկությամբ: Ռուսաստանի Դաշնությունը վերստին փորձելու են պարզապես մասնատել: ՀՀ-ին ու ԼՂՀ-ին, ըստ արևմտյան՝ դեռևս 1902թ. եկող ծրագրի, սպառնում է չգոյությունը: Ասել է թե՝ առկա է, նորովի (միջազգային տեռորիզմի տակ անցկացվող նոր մեթոդներով ու տեխնոլոգիաներով) Հայության նկատմամբ անցյալում կիսատ թողած ցեղասպանությունը առաջիկայում ավարտին հասցնելու հեռանկարը: Միաբևեռության ձգտող Արևմուտքը փորձում է իրագործել այն, ինչը նրան չհաջողվեց 1918-23թթ., ինչպես նաև հայտնի պատճառներով արգելափակվեց 1923-ից մինչև 1985-ը:

Յուրաքանչյուր հանցագործություն կրկնվում է, քանի դեռ չի դատապարտվել ոչ միայն հանցագործություն կատարողը, այլև հանցագործությունը ծրագրողը, այն քարոզողն ու հրահրողը: Անցյալ դարասկզբի առաջին ցեղասպանությունը, որպես մարդկության դեմ պետականորեն կազմակերպված ու 1915-23թթ. իրագործված հանցագործություն, չէր լինի, եթե հենց 1902թ. Գերմանիայի դատարաններից որևէ մեկում պատասխանատվության կանչվեր գերմանահպատակ Պաուլ Ռորբախը. Արևմտյան Հայաստանում և Օսմանյան Թուրքիայի տիրապետության տակ գտնվող այլ տարածքներում պետության կողմից հայերի նկատմամբ ցեղասպանություն իրագործելու գաղափարը (նաև այն իրագործելու կազմակերպչական ամբողջ ընթացքը վերլուծական հաշվարկներով մանրամասնող տվյալներով) հրապարակավ ներկայացնելու, ինչպես և քարոզչություն անելու համար: Չէին լինի նաև ցեղասպանության ենթակված ժողովրդի երկիրն ու Ազգային Հարստությունը հանցագործի կողմից զավթելն ու սեփականացնելը միջազգայնորեն «դե ֆակտո» արդարացնել և «դե յուրե» օրինականացնել փորձող 1921թ. մարտի 16-ի Ռուս-թուրքական և 1923թ. Լոզանի պայմանագրերը, եթե ժամանակին, հենց 1919թ. Անգլիայում և 1921թ. ՈՒՀՄՌ-ում, հայերին բնաջնջելու՝ ցեղասպանությունը Արևելյան Հայաստանում ավարտին հասցնելու հրապարակային, բացահայտ քարոզչության ու հրահրման մեղադրանքով, մեղադրյալի աթոռին նստեին ու պատասխանատվության ենթարկվեին Լոուրենց Արաբացին և Լեվ Տրոցկին: Հայտնի է՝ պատասխանատվություն չկրած յուրաքանչյուր հանցագործ ծնում է իր հետնորդին: Ուստի, ամենևին էլ անսպասելի չէր, որ Ռորբախին, Արաբացուն, Տրոցկուն, ինչպես և Հիտլերի ու Պոլպոտի գաղափարախոսներին հիմա էլ ԱՄՆ-ում փոխարինելու է եկել ոմն Ռալֆ Պիտերս:

Մեզ համար, արևմտյան անթաքույց լկտիության դրսևորումներով ընթացան 2003-2006թթ., որպես հենց այդ ծրագրի իրագործումը նախապատրաստող (առաջիկա դեպքերի և գործընթացների նկատմամբ ՀՀ-ն և ԼՂՀ-ն միջազգային և ներպետական իրավական առումներով անպաշտպանվածության բերելու) շրջան: Դրա վերջին «վառ» դրսևորումներից են, օրինակ, 2005թ., ընդդեմ համաժողովրդական կամքի (2003թ. ու 2005թ. համաժողովրդական հանրաքվեով մերժված) Մարդու իրավունքներն ու ժողովրդավարությունը ՀՀ-ում արգելող, ՀՀ ամբողջ իշխանությունը ժողովրդից խլող և պետապարատի յուրացմանը տվող, ՀՀ-ն կոռուպցիայի ու հանցագործ աշխարհի երկիր դառնալուն ծառայող, ՀՀ նոր Սահմանադրության նախագիծն ու Երկքաղաքացիության մասին ՀՀ Օրենքը:

Իսկ նախապատրաստական փուլը ընթացել է ոչ միայն օրենսդրական-սահմանադրական ներխուժումների, այլև, այսպես կոչված, միջազգային ահաբեկչության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, ազգային-պետական անվտանգության հարցում պետական կառույցների ոչ գործուն վիճակի բերելու միջոցով:

Տարօրինակ է, որ ՀՀ իշխանություններին այսօր չի անհանգստացնում անգամ այն, որ **1.** ԱՄՆ-ը, չգիտես ինչո՞ւ և հանուն ինչի՞, պատրաստ է կետային միջուկային հարվածներ հասցնել Իրանին, որի ողբերգական հետևանքները իրենց վրա անպայմանորեն զգալու են տարածաշրջանի բոլոր երկրները անխտիր: **2.** Վրաստանում արագորեն կառուցվում են շուրջ 150 հիվանդանոցներ, ո՞ւմ համար, ո՞ր դեպքի համար: **3.** Արցախն ու Նախիջևանը, գոնե քարտեզում, տեղադրվում են ուռճածված, նորաստեղծ նոր ադրբեջանական պետության կազմում: **4.** Ծրագրված Քուրդիստան պետությունը ստեղծման առաջին քայլը, փորձում են կատարել Արևմտյան Հայաստանի տարածքում:

ՀՀ իշխանությունները հիմա էլ հույսերը դրել են թուրքերի վրա ու երևի կարծում են, թե Թուրքիան թույլ չի տա քրդական պետության ստեղծում, ըստ այդմ, ի դեպ, անուշադրության մատնելով Ուկրաինայում ընթացող դեպքերը: Քանզի, ըստ աշխահաքաղաքական իրենց նախագծումների նոր տրամաբանության՝ Արևմուտքը, Թուրքիային ընձեռում է Հյուսիսով՝ պանթուրքիզմի ճանապարհով, ընթանալու հնարավորություն, Հարավը թողնելով քրդերին, ադրբեջանցիներին: Վաղը մենք չենք զարմանա, եթե նախագահ Յուշչենկոն Ղրիմը փորձի հանձնել թուրքերին՝ ի կատարումն Ղրիմի թաթարների պահանջի և համաձայն Ուկրաինայի սահմանադրության տեղական կառավարման օրենքի կետի:

Իրականում շաբաթների, գուցե ամիսների հարց է համաշխարհային ռազմաքաղաքական այս նոր՝ մեծ աղետի սկզբնավորումը, որի ընթացքում, ի շարս այլ երկրների ու ժողովուրդների, կրկին Մեծ վտանգի տակ է հայտվելու հայությունն իր երկու պետությունների և Ջավախքի հատվածով: Չգիտակցել այս ամենը ու ընթանալ դեպքերի հետևից ուղղակի աններելի ոչ միայն ՀՀ իշխանությունների, այլև յուրաքանչյուր հայի ու ՀՀ յուրաքանչյուր հասարակական ու քաղաքական կառույցի համար:

Իսկ Արևմուտքին, ինչպես Եվրո-ամերիկյան միսիոներներն են պահանջում, անհրաժեշտ է մի բան՝ ընտրությունները լինեն լեգիտիմ: Ուշադրություն դարձրեք, ոչ թե ժողովրդավարական այլ «լեգիտիմ». այն դեպքում, երբ լեգիտիմ կամ ոչ լեգիտիմ կարող են լինել միայն իշխանությունները, տվյալ դեպքում Ազգային Ժողովը և ոչ երբեք այն ձևավորող ընտրությունները: Եվրո «հեղինակավոր» բարձրաստիճան պաշտոնյաների սույն «անգրագիտությունը» խորքային հարցադրում և լուրջ սպառնալիք է պարունակում: Իրողություն, որն ինքնին պետք է զգոնացներ ինքնամոռաց ընտրաշրջուի մեջ նետված կուսակցությունների գոնե վերնախավին:

Քանզի Արևմուտքը, առաջնահերթորեն ԵՄ-ն, ժողովրդի կողմից կրկնակի (2003թ. և 2005թ.) մերժված ՀՀ սահմանադրության իրողությունում անհանգստանալու լուրջ հիմքեր ունի, ուստի, իր այս դիտորդական եվրոդեսանտի անանախադեպ ներխուժումով վերջին ճիգերն է գործադրում ՀՀ սահմանադրության ոչ լեգիտիմությունը ինչ-որ կերպ ծածկելու, ասել է թե՝ «լեգիտիմ ընտրությունների» միջոցով առաջիկայում ՀՀ ԱԺ-ին պարտադրվող հակապետական օրենքները օրինականացնելու ակնկալիքով: Մոռանալով, անուշտ, ՀՀ Մայր Օրենքի՝ Հայաստանի Անկախության Հռչակագրի մասին, նաև այն մասին, որ 2005թ. սահմանադրության ոչ լեգիտիմությունից (միջազգային իրավական

կարգով անգամ) հետևում է, որ գործող է մնում 1995թ. ՀՀ սահմանադրությունը:

Փաստ է՝ Արևմուտքը մեծ ջանք է դնում, որպեսզի իր սցենարով ու կազմով ձևավորելիք ՀՀ նորընտիր Ազ-ը, հենց միայն Արևմուտքի համար ու նրա պահանջով, շարունակի գնալ իր նախորդի կողմից հարթված ազգային-պետական խոտոր ճանապարհով: Հարց է. կկարողանա՞, կհաջողի՞ արդյոք Արևմուտքը: Կհաջողի, եթե թույլ տանք...

Երրորդը չի տրված

Ինչ ունենք այսօր: 1988-1991թթ. ազգային զարթոնքի օրերից որպես անօտարելի ձեռքբերում ունենք՝

Ա. 1988թ. նոյեմբերի 22-ին Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված Օրենքը Օսմանյան Թուրքիայում 1915թ. հայերի ցեղասպանությունը դատապարտելու մասին:

Բ. 1989թ. դեկտեմբերի 1-ի Հայկական ԽՍՀ Գերագույն Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ ընդունված պատմական ՈՐՈՇՈՒՄԸ, որը հիմնվելով ազգերի ինքնորոշման համամարդկային սկզբունքների վրա և արձագանքելով բռնի ուժով բաժանված հայ ժողովրդի երկու հատվածների վերամիավորման օրինական ձգտմանը ՀՌՉԱԿԵՑ Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը:

Գ. 1990թ. մայիսի 21-ը. վերամիավորված (ԼՂ-ն ներառած) Հայկ. ԽՍՀ Գեր. Խորհրդի ընտրությունները: Ուր, համաձայն միացյալ Հայկ. ԽՍՀ Գեր. Խորհրդի ընտրական օրենքի, ԼՂ ընտրական օկրուգներում ընտրված 14 դեպուտատները՝ Քոչարյան Ռոբերտը, Աղաջանյան Ռոլեսը, Պետրոսյան Ռազմիկը, Մանուչարով Արկադին, Սարգսյան Սերժիկը, Պետրոսյան Գեորգին, Գրիգորյան Համլետը, Ղուկասյան Էդիկը, Շիրինյան Վիգենը, Իշխանյան Զավենը, Աբաճեսյան Վահրամը, Առուշանյան Սլավիկը, Բախշյան Մանֆրեդը և Բաղյան Գրիշան ներկայացնում էին Լեռնային Ղարաբաղի ժողովրդի համահավաք կամքը:

Դ. 1990թ. օգոստոսի 23-ը. երբ Հայաստանի Հանրապետության Գերագույն Խորհուրդը ԱՐՏԱՀԱՅՏԵԼՈՎ Հայաստանի (վերամիավորված Հայկ. ԽՍՀ և ԼՂ) ժողովրդի միասնական կամքը, ԳԻՏԱԿՑԵԼՈՎ իր պատասխանատվությունը հայ ժողովրդի ճակատագրի առջև համայն հայության իղձերի իրականացման և պատմական արդարության վերականգնման գործում, ՀԻՄՆՎԵԼՈՎ 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» Հայկական ԽՍՀ Գեր. Խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային Խորհրդի համատեղ որոշման վրա, Հռչակելով Անկախ Պետականության հաստատման գործընթացի սկիզբը, ընդունեց ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ:

Ե. 1991թ. հունվար - 1994թ. մայիսի 11. Ադրբեջանի կողմից սանձազերված զավթողական պատերազմ: Սկսեցինք Արցախի ու արցախահայության լինել չլինելու վճռական գոյապայքարով, Հայրենիքի ու Հող Հայրենյացի հերոսական պաշտպանությունով, ավարտեցինք Հայկական Արցախի մասնակի՝ ոչ ամբողջական ազատագրումով:

Զ. 1991թ. սեպտեմբերի 2-ը. Լեռնայի Ղարաբաղի **Անկախության գործընթացի ավարտի ճշգրտումը**, համաձայն որի՝ Լեռնային Ղարաբաղը բնական և միջազգային իրավունքի նորմերին համապատասխան համարելով Հայ ժողովրդի վերամիավորման ձգտումը, հաշվի առնելով իրավիճակի բարդությունն ու հակասականությունը, վստահելով փոխզիջումների մասին միջազգային հորդորներին, որպես առաջին զիջում **Հռչակեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը**. որպես Ազատ, Անկախ և Ինքնիշխան պետություն:

է. 1991թ. սեպտեմբերի 21-ը. Հայաստանի Հանրապետության **Անկախության գործընթացի ավարտը**, երբ համաժողովրդական հանրաքվեն ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱ ՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ հաստագրեց՝ որպես Հայաստանի Հանրապետության ՄԱՅՐ ՕՐԵՆՔ:

Ը. 1991թ. դեկտեմբերի 10-ը. **ԼՂՀ Անկախության Հանրաքվեն,** ուր ԼՂՀ ժողովրդը իր համահավաք կամքի դրսևորումով, վավերացրեց 23 օգոստոսի 1990թ. ՀՀ Գեր. Խորհրդի կողմից ընդունված Հայաստանի Անկախության Հռչակագիրը, նաև համաձայն 2 սեպտեմբերի 1991թ. որոշման, ԼՂՀ Անկախության գործընթացը ավարտեց, որպես ԼՂՀ Մայր Օրենք հաստատագրելով **Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Պետական Անկախության մասին Հռչակագիրը**. այն, համաձայն հանրաքվեի արդյունքների, ԼՂՀ Գեր. Խորհրդի կողմից հաստատվեց 1992թ. հունվարի 6-ին:

Թ. 1994թ. մայիսի 11-ը. ՀԱՂԹԱՆԱԿ, և անժամկետ հրադադարով պահպանվող ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ, որպես ի կատարում հանուն խաղաղության արվող «փոխզիջումների» հորդորների հաղթողի՝ ԼՂՀ-ի և ՀՀ-ի կողմից երկրորդ (կրկին միակողմանի) զիջման արդյունք: Ասել է թե՝ վստահելով միջազգային կառույցներին, անխոհեմաբար խախտեցինք պատերազմը ավարտին հասցնելու և հաղթանակը ամրագրելու դասական (միջազգային հանրության կողմից ճանաչվող) միակ օրենքը, ըստ որի, մեր առաջարկով կամ սեփական նախաձեռնությամբ Ադրբեջանի կողմից իր պարտությունը ճանաչելուց և հանձնվելուց հետո է, միայն որ պետք է համաձայնեինք հրադադարին, որից հետո, միջազգային կարգով ամրագրելով մեր հաղթանակը, պետք է նախաձեռնեինք պատերազմի ավարտն ու ետպատերազմյա խաղաղությունը միջազգային նորմերով կարգավորելու գործընթացը: Հայոց մեծահոգության ԱՆԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՍԽԱԼ, որից այսօր օգտվում են Հայոց Հայրենիքի պատկանելիությունը վիճարկել փորձող Ադրբեջանն ու Թուրքիան, երբեմն էլ կասկածելի հեղինակության միջազգային որոշ կառույցներ:

Ժամանակին եվրոամերիկյան քաղաքականությունը չուզեց հաշտվել ԼՂՀ-ն ՀՀ-ի հետ փաստացի և իրավականորեն միացյալ լինելու 1989–91թթ. 2-ամյա իրողության հետ: Հիմա էլ (իր համար պատերազմի անսպասելի ելքից հետո) չի ուզում հաշտվել ԼՂՀ-ի 16-ամյա փաստացի և իրավական անկախության հետ: Սա արդեն սեփական ցանկությունը բացահայտ չասելու պարզունակ կամակորություն չէ, այլ հենց միայն ՀՀ և ԼՂՀ ժողովրդի դեմ ուղղված ծարագույն հանցագործության միջազգային-դիվանագիտական հրահրում:

Համբերությունն էլ սահման ունի. առավել ևս երբ այն ընթանում է մի աբողջ ժողովրդի կյանքի ու կենսագործունեության բնականոն ռիթմի 20-ամյա խաթարման հաշվին: Արցախի հիմնահարցի խաղաղ կարգավորման փոխզիջումային տարբերակը, որպես ՀՀ և ԼՂՀ միակողմանի արված փաստացի զիջումների գործընթաց, հայոց համար ավարտված է:

Երրորդը չի տրված: Արևմուտքը, եթե նա իրոք ժողովրդավար է ու իրապես ձգտում է աշխարհի խաղաղ համակեցության, կամ պետք է ճանաչի (նաև միջազգային հանրության հետ միասին երաշխավորի) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 1991-2007թթ. «դե ֆակտո» և «դե յուրե» անկախությունը, կամ էլ ճանաչելով ԼՂ և ՀՀ 1989-91թթ. «դե ֆակտո» և «դե յուրե» միացյալ լինելը, առաջարկի ԼՂՀ-ին ու ՀՀ-ին համատեղ քննարկել կրկին վերամիավորվելու առկա հնարավորությունը (կանխավ երաշխավորելով այն միջազգային հանրության կողմից ճանաչելու և տարածաշրջանում առկա խաղաղությունը պահպանելու իր վճռականությունը):

Միակ զիջումը կարող է լինել Ադրբեջանի կողմից սանձազերծված պատերազմի ընթացքում ԼՂՀ-ին և ՀՀ-ին պատճառած նյութական և ոչ նյութական վնասների հատուցումից հրաժարվելը. այն էլ այս անգամ միջազգայնորեն միակողմանի, քանզի պատերազմ սանձազերծողը չի կարող ակնկալել վնասի հատուցում:

Պատառիկներ ՍԻՄՈՆ ԿԱՄՍԱՐԱԿԱՆԻ հուշերից

1965 ԹՎԱԿԱՆ, ԱՊՐԻԼԻ 24. ՀԱՅՈՑ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ՈՒ ՀԱՄԱՀԱՎԱՔ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՕՐ

Ծիծեռնակաբերդ. 1965թ.

Իմ սերնդակիցները, որ 1965-ին 15-20 տարեկան էին, տեսել են իրական հային՝ իր ամբողջության, հզորության ու մաքրության մեջ:

Արդի իրողության խնդիրը նրանում է, որ ծանր կենսավիճակի պատճառով գլուխ են բարձրացնում գոյության՝ սոցիալական խնդիրները: Երբ այս հարցերը չեն լուծվում, մարդու հոգին, բուն՝ հոգևոր էությունը փակվում է, որպես պաշտպանական հակազդեցություն, մարդը կաղապարվում է ներսում, իսկ արտաքինից փորձում է նմանվել վայրի իրականությանը: Անգամ դիմագիծն է փոփոխվում: Սա բնական երևույթ է, անբնականն այն է, որ Հայոց պատմության մեջ առաջին անգամ ենք նման վիճակների առաջ կանգնում, մեր պետության մեջ, մեր իսկ իշխանավորների կողմից: Հայրուրամյակներ շարունակ պետություն, անկախություն չենք ունեցել, սակայն Հայոց պատմության մեջ չկա մի շրջան, որտեղ նշվի, թե մի հայ աղբանոցն էր քրքրում: Դա տեսանք մեր օրերում: Դա նրանից չէ, որ հայերը միշտ հարուստ են եղել: Իմ սերնդակիցների բախտը բերեց, հետպատերազմյան շրջանում հայությունն (և ոչ միայն) ապրեց մեծագույն վերելք, հանկարծահաս արթնացումի ծաղկուն շրջան: Այդ շրջանը բոլորին՝ մեծին ու փոքրին, ունևորին ու չունևորին մի տեսակ բարի դարձրեց: Բավականին առողջ մթնոլորտ էր, կառուցողական ու ստեղծագործական մի շրջան էր: Ավագները, որ տեսել էին ստալինյան հասարակարգը, այնուհանդերձ անկոտրում էին և մեզ ազատ, ինքնուրույն ապրելու, ազգային պետական մոտեցումով մեծանալու հնարավորություն էին տալիս: Նարեկացի, Կոմիտաս, Չարենց էինք վեր հանում: Մեզ համար ազգային բացահայտման շրջան էր, չնայած որ դասագրքերը հին էին (և այդպես էլ չհասցրեցինք ամբողջությամբ փոխել, որովհետև բրեժնևյան շրջանը սկսվեց): Զարմանքով և հիացմունքով բացահայտում ու լրացնում էինք վակուումը. Կոմիտաս, Եկմալյան, հզոր երգ-երաժշտություն, նկարչություն: Մեր տան առաջին գիրքը՝ գրքի սրբության գաղափարը, Րաֆֆու «Սամվել»-ն էր: 1956-ն էր, վեց տարեկան էի, հորս սնդուկն էի մի օր քրքրում, երբ կտորի մեջ փաթաթած ինչ-որ բան տեսա, բացեցի՝ գիրք էր: Հայրս զգուշությամբ ու անթաքույց գուրգուրանքով վերցրեց այն և ասաց. «Սա քոնն է, պիտի մեծանաս, որ կարդաս»: Այն կարդացի, երբ չորրորդ դասարանում էի: Հետո իմացա, որ Րաֆֆին արգելված հեղինակ էր մինչև Երկրորդ աշխարհամարտը, և զինվորական ուսումնարանում սովորելու տարիներին հայրս ընկերների հետ գնում էր Հաղթանակի զբոսայգու նորատունկ անտառ և գաղտագողի Րաֆֆի կարդում:

Ինքնաբացահայտման շրջանը սկսվել է 1956-ից: Դեղին եզրագիծը՝ բուռն զարթոնքի հզոր ղողանջը, եղավ 1965-ի ապրիլի 24-ին: Դա մի հրաշք էր: Հրաշք՝ բառի բուն իմաստով, որովհետև այդ երևույթով, այդ օրվանից սկսած, մենք կարողացանք ազգովի՝ իրար հետ, արդեն չխոսելով, խոսել: 1965-ի ցույցը 1963-ին դեռ արգելված չէր, նախապատրաստվում էր Ծիծեռնակաբերդի հուշարհամալիրը կառուցել և Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը նշել:

1964-ի հոկտեմբերին հեղաշրջում եղավ, Խռուշչովին հանեցին, իշխանության եկավ Բրեժնևը: Պետական կառույցը փոխվեց, մոտեցումն էլ, ապրիլյան ցույցը, ինչպես 1956-59թթ., կրկին արգելվեց:

Ծիծեռնակաբերդի հուշահամալիրի հիմքերը նոր էին գցել. նոր-նոր փոսն էին փորել, մակետը դրված էր, Մոսկվայից շինարարությունը դադարեցնելու հրահանգ եկավ: Իշխանությունն էր փոխվել: 1961-ին Խռուշչովին ու Քենեդիին (երկու գերտերությունների) պետ ապարատները տանում էին դեպի ատոմային պատերազմ: Բարձրակետը եղավ «Կարիբյան» ճգնաժամը, վայրկյաններ էր մնում, որ կոճակները սեղմեին ու ատոմային ռումբեր արձակեին: Սթափվեցին, հասկացան, որ այս ամենը ծրագրված էր: Եվ նրանք որոշեցին խաղաղ համակեցության հատուկ ծրագիր մշակել, որը կոչվում էր «Սերտաճման քաղաքականություն»: Սա էր պատճառը, որ 1962-ին, 1963-ին Ցեղասպանության 50-րդ տարելիցը նշելու հարցին կողմ էին նաև Կրեմլում: 1963-ին Քենեդուն սպանեցին, իսկ 1964-ին Խռուշչովին հանեցին, և ծրագրված քաղաքական շրջադարձը խափանվեց:

Ժողովուրդը գնացել ու հուշահամալիրի մակետը տեսել էր մինչև ցույցը, նա ակտիվորեն, ոգևորված պտտվում էր համալիրի շուրջը: Ընդհանուր վերելք էր, զարթոնք, հնարավոր չէր այն կասեցնել: 1963-ից թույլատրվել էր ճշմարիտ պատկերել 1885-1925թթ. պատմական իրողությունները: Պատմաբանները գրքեր էին գրում, փաստաթղթեր էին հայտնաբերում, կար Զոն Կիրակոսյանը: Ցույցից հետո հրահանգ էր իջել դադարեցնել շինարարական աշխատանքները: Սակայն, շատ պատահական իմացա, որ ուսանողներն ու բանվորները (հիմնականում՝ շաբաթ և կիրակի օրերին) գնում են հուշահամալիրի աշխատանքներին մասնակցելու: Առաջին անգամ, երբ գնացի, մոտ 100-150 մարդ էր աշխատում: Հայաստանի շինարարական հիմնարկները իրենց հնարավորությունների սահմաններում շինանյութ ու տեխնիկա էին ուղարկում: Անկախ արգելքից, ժողովուրդն իր շինարարությունն անում էր: Նման պահ և գիտակցական երևույթ ոչ մի ազգի մեջ չեք տեսնի: Ողջ ժողովուրդը (հատկապես՝ ուսանողությունը) իր երկրի տերն էր: Ինչո՞ւ էր ուսանողությունն այդպիսին, որովհետև ունեինք լավ դասախոսներ, արվեստագետներ, գիտնականներ: Ունեինք մտավորականության մի շերտ, որին պետական չինովնիկը ակնածանքով էր վերաբերվում, խորին հարգանք տածում: Հայրենիքին, ազգին, սերնդին տեր լինելու այս երևույթը մեր սերունդն ուներ: Մենք մեր պետականությունը երբեք չենք կորցրել, այն սերնդե-սերունդ է փոխանցվել: Մենք մեր պետության անկախությունն ենք կորցրել: Այս շրջանը նրանով էր կարևոր և հետաքրքիր, որ մեր ազգային դիմագիծը ամբողջությամբ երևաց:

1965-ի ապրիլյան ցույցի տասնյակ հազարավոր հայերի թափորը՝ որպես ամբողջություն, հզոր, դաստիարակող ուսուցչի դեր ստանձնեց: Տասնհինգս չէր լրացել, բայց ինձ մեծ էի համարում: Այդ օրերին կիսատ ասված խոսքերից զգում էի, որ ինչ-որ բան էր կատարվելու:

1965-ի ապրիլի 24: Անհանգիստ օր էր: Թռուցիկներ էին տարածել, բոլորը վախեցած դրանք պահել էին, իմ ձեռքը չէր ընկել: Զգում էի, որ ինչ-որ բան է կատարվելու: Դպրոցից փախա: Լսել էի, որ ուսանողությունը ցույցի է ելնելու, գնացի համալսարան, միացա նրանց: Դա ուրիշ զգացում էր: Ով այդ ժամանակ եղել է այնտեղ, մեծ, թե փոքր, տեսել է իսկական հային՝ ազնվագույն, հզոր, խիզախող, անվախ, համարձակ: Երթին մասնակցում էին հասարակության բոլոր շերտերը՝ մտավորական, բանվոր, կին ու աղջիկ, տատիկ ու պապիկ: Այնպես ստացվեց, որ մի պահ ընկա ամենաառաջին՝ ճակատային շարքը, որտեղ 20-40 տարեկան հաղթանդամ տղամարդիկ էին՝ ուժեղ ձեռք-ձեռքի սեղմած: Մեկը նկատեց ինձ. «Այս երեխան ինչպե՞ս ընկավ առաջին շարքը»: Եվ սկսեցին ինձ տեղափոխել դեպի խորքը: Առաջին շարքում լինելը վտանգավոր էր, և ոչ ոք չգիտեր, թե ինչ կպատահի: Հետո իմացանք, որ այդ օրը Մոսկվայից Զառուբյանին առաջարկել էին զորք ուղարկել, իսկ վերջինս կտրուկ արգելել էր:

1965-75թթ. համազգային մեկ ամբողջական ըմբռնության, ազգային պետական մտածողության, ինքնահաստատման տասնամյակ կարելի էր համարել: Ամեն տարի՝

մինչև ապրիլի 24-ը, մի քանի հարյուր մարդ էին ձերբակալում, կամ տնային կալանքի ենթարկում. ապրիլի 22-ից Շիրազը տնային կալանքի մեջ էր լինում, երբեմն կարողանում էին նրան փախցնել ու հասցնել Ծիծեռնակաբերդ: Այդպես էինք պայքարում: Ա՛յ, սա է մեր ժողովուրդը, որ կարողանում է առանց հրահանգների, ինքնակամ-համահավաք լինել: Ապրիլի 24-ը ինքնահաստատման օր է, որ մենք կանք, պայքարում ենք և մեր երազին հասնելու ենք: ԵՊՀ-ն մեզ համար սրբատեղի էր ազգային արժեքների ժառանգման առումով, ոտքի էր ելնում ուսանողությունը, դասախոսների մեծ մասը: Երբ ուսանողությունը դուրս էր գալիս, նրան հետևում էր բանվորությունը՝ իր երեխաներին պաշտպանելու: Գիտակցում էր, որ նախ՝ մեզ է պաշտպանում, հետո՝ հաստատում իր ասելիքը: Համազգային այդ լուռ ըմբոստությունը տևեց մինչև 1975-ը:

1966-ին, երբ ցույցն արգելեցին, երիտասարդների շրջանում անհանգստություն նկատվեց...: Երբ պատմության ուսուցչիս՝ Գյուլումյանին հարցրեցի, թե ինչո՞ւմն է բանը: Ինչո՞ւ են արգելում: Չէ՞ որ այս ամենը կատարվել է թուրքերի կողմից, այն էլ այն ժամանակ, երբ ոչ Սովետական Միություն կար և ոչ էլ Սովետական Հայաստան: Նա ինձ երկար նայեց ու ասաց. «Սիմոն, հարցեր կան, որոնց մասին դեռևս չի կարելի խոսել: Կմեծանաս, կիասկանաս»:

1970թ. ապրիլի 24-ի երեկոյան հուշահամալիրից ջահերթ կազմակերպվեց: Մոտ 500-1000 հոգի հանգիստ ու ցածրաձայն երգում էինք՝ «Մայր Արաքսի ափերով...» և ուրիշ ոչինչ, երթևեկությունը չէինք խախտում, մենք մեր զոհերին էինք հիշում: Երբ հասանք այնտեղ, որտեղ ջահերն էինք մարելու, հարձակվեցին մեզ վրա..., երեկոյան ինձ ձերբակալեցին: Վրայիցս նավթի հոտ էր գալիս, պարզ էր, որ ես էլ էի մասնակցել: Մեկուսարանում գրասեղանին մի թուղթ տեսա ԵՊՀ-ի ֆիզիկայի և մաթեմատիկայի ֆակուլտետների 38 ուսանողների անուն-ազգանուններով: Գիշերվա ժամը 3-ին ինձ տեղափոխեցին այլ բաժանմունք. լարված ու դժվարին հարցաքննության ենթարկվեցի...: Երբ քննիչը մեզ ֆաշիստ անվանեց, վկայակոչելով ջահերթը, ես առարկեցի, որ եթե ջահերթը ֆաշիզմ է, մենք էլ՝ ֆաշիստ, այդ դեպքում դուք պարտավոր էիք տարիներ առաջ կոմերիտմիությունը փակել ու բոլորին ձերբակալել՝ որպես ֆաշիստներ: Ջահերով երթ կազմակերպվել էր 1966-ին՝ կոմերիտմիության 55-ամյակին նվիրված: Քննիչը շփոթվեց...: Հաջորդ օրն եկավ մեկ ուրիշ քննիչ, ով ավելի կիրթ էր: Նրան նախորդ օրվա իմ բողոքը ներկայացրի: Ասաց. «Մի՛ անհանգստացեք, նա այլևս չի լինի»: Երրորդ օրը կանչեցին առանձնասենյակ, իմ առջև հաճելի դիմագծերով, ալեհեր, հաղթանդամ ու պատկառազդու տղամարդ էր: Թղթերն էր նայում, ապա նայեց ինձ ու ասաց. «Տղա՛ ջան, մի՛ խառնվեք, այսպիսի բաներով մի՛ զբաղվեք, թողեք մեծերին, ձեր գործը հիմա սովորելն է, ժամանակը կգա, հետո դուք կանեք: Այս անգամ մենք ձեզ փրկեցինք, ամեն անգամ այսպես չի լինի»: Չհասկացա, թե ինչ փրկության մասին էր խոսում, սակայն ձայն չհանեցի: Ազատ արձակվեցի: Երբ դուս եկա, իմացա, որ Ֆիզիկայի ֆակուլտետի ուսանողները հավաքվել ու գնացել էին Ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն Ալիխանյանի մոտ՝ բողոքելու: Նրանց ներկայությամբ Ալիխանյանը վերցրել է ընկալուչն ու ՊԱԿ-ի նախագահին բավական խիստ տոնով ասել. «1937 թվակա՞նն եք սարքում: Կարգի՛ հրավիրեք Չեզ և ազա՛տ արձակեք մեր երեխաներին»: Այստեղ այն պահն է, որ հայ մտավորականը, իր երկրում իրեն երկրի տեր էր զգում: Ո՞վ էր նա: Այսօր կասեին ընդամենը՝ ֆիզիկայի ինստիտուտի տնօրեն:

Ուսանողների ձերբակալման առթով մթնոլորտը լարված էր ոչ միայն ԵՊՀում, այլև գործարաններում, գիտահետազոտական ինստիտուտներում, անգամ Պետանվտանգության Կոմիտեում: Պարզվեց՝ մեզ ազատելու (Սիբիր չուղարկելու) խնդրում մեծ էր ՊԱԿ-ի արտաքին հետախուզության բաժնի դերը, նորանշանակ պետի գլխավորությամբ՝ Դալալյան էր ազգանունը (հետո պարզվեց, որ նա մեր ուսանողական ընկերներից մեկի հայրն էր, նոր էր վերադարձել երկարաև գործուղումից):

Ծիծեռնակաբերդ. 2007թ.

Մեղադրելով մեզ ձեռբակալողներին՝ ՊԱԿ-ի քաղաքացիական բաժնին, նա զայրույթով ասել է. «Մենք դրսում մեր կյանքը զոհում ենք, ո՞ւմ համար, մեր երկրի, մեր երեխաների համար: Դուք այստեղ ի՞նչ եք անում: Մեր երեխաներին հանցագո՞րծ եք դարձնում»: Այդ դեպքից միայն 15 տարի անց տես ընկերոջս: Իմ այն հարցին, թե ո՞ւր ես, նա ինձ ասաց. «Հիշում ես, որ քեզ ձերբակալեցին, դրանից հետո բարձրացրին հորս զինվորական կոչումն ու նոր աշխատանքի նշանակեցին Հեռավոր Արևելքում. մենք ընտանիքով տեղափոխվեցինք այնտեղ»:

Ահա, սա է հայի դիմագիծը, որ հայ հասարակության բոլոր շերտերում էլ կա. հզոր է, նաև բարոյական, ազնիվ, մաքուր ու հաղթող:

Հուշերը տպագրության ներկայացրեց
ՆԱՆԵ ՍԵՎԱՆԸ

Հ.Գ. - Մեծ է խորհուրդը 1965 թ. ապրիլի 24-ի երթի, Հայոց մեծ ցնցումի ուամբողջ մի տասնամյակ ծգվող համազգային համահավաք ու լուռ ընդվզումի: Սակայն ոչ թե տխուր, այլ մտահոգող է այն, որ 1990-ից՝ Հայաստանը Ազատ ու Անկախ հռչակելուց հետո, երբ այլևս չկան երբեմնի արգելքները, երբ Հայաստանի Անկախության Հռչակագրով մեր ժողովուրդը արտահայտեց պատմական արդարության վերականգնման հարցում իր հզոր կամքն ու վճռականությունը առ այսօր կրկին փակ են Հայոց պատմության այդ 10 տարիների էջերը:

Ասես մի աներևույթ ձեռք կրկին շարունակում է արգելել ոչ միայն ներկայիս պատմաբաններին, այլև գրողներին, իրենց հիշողության մեջ այդ ամենը պահած մասնակիցներին, վեր հանել 1965-75թթ., մեր սերնդի հիշողության մեջ դեռ առկա Հայոց պատմության այդ էջերը:

Ուղղակի աններելի է, որ ցեղասպանությանն ու նրա մերօրյա խնդիրներին վերաբերող առաջին և վերջին գեղարվեստական գիրքը եղավ Մոսկվայի ու Բրյուսելի պատվերով գրված Վարդգես Պետրոսյանի «Կրակե շապիկ» կոչվող խայտառակությունը...

ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ 100 ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՊԱՀԱՆՋՈՒՄ Է ՃԱՆԱՉԵԼ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Պահպանողական կուսակցության պատգամավոր Բոբ Սպիները 2006թ. նոյեմբերի 29-ին ստորագրության համար բացեց «1915թ. 1 միլիոնից ավելի հայերի սպանությունը ցեղասպանություն է» բովանդակությամբ հայտարարություն և կառավարությունից պահանջել է այն ճանաչել ցեղասպանություն: Թուրքական «Աքշամը» հայտնել է, որ ձեռնարկմանը 100-ից ավելի պատգամավորներ են միացել: Լեյբորիստ պատգամավոր Նիա Գրիֆիտն էլ 2-րդ հայտարարությունն է արել, որով Թուրքիայից պահանջում է **բացել Հայաստանի հետ սահմանը**: Թերթը գրել է, որ երկրորդ ձեռնարկման տակ նույնպես արդեն 100-ից ավելի պատգամավորներ են ստորագրել: **(04. 04. 2007թ., «Հայաստանի Հանրապետություն»)**

ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱԶԳԻ ՀԻՇՈՂՈՒԹՅՈՒՆՆ Է...

Հայկ Դեմոյանը ծնվել է 1975-ին, Գյումրիում, ավարտել է տեղի թիվ 22 միջնակարգ դպրոցը: 1993-ին ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը, 1998-ին ավարտել և նույն թվականին էլ ընդունվել է նույն ֆակուլտետի ասպիրանտուրան: 2001-ին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ «Թուրքիայի ազատական բարեփոխումները» թեմայի շուրջ: Ներկայումս պատրաստում է իր երկրորդ դոկտորական ատենախոսությունը՝ նվիրված Թուրքիայի արտաքին քաղաքականությանը: Հիմնական գիտական հետազոտություններն են՝ Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը, Թուրքիայի արտաքին քաղաքականությունը և Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը:

Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի դասախոս, ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն:

- Պարոն Դեմոյան, ինչպիսի՞ն էր Ձեր տասնամյա գիտական ճանապարհը: Դոկտորական աշխատանքն իր տեղը «պայմանականորե՞ն» է զիջել ՀՀ ԳԱԱ Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրենի պաշտոնին:

- Եթե փորձեմ առանց ավելորդ համեստության ասել, ապա գիտական կարիերան իմ պարագայում բավականին հաջող մեկնարկ ունեցավ: Թերևս դա պայմանավորված էր մեկ հանգամանքով՝ լարված աշխատանքով, ինչն էլ իմ բնավորության սկզբունքային գծերից մեկն է: Դրանով է պայմանավորված, որ բավականին բարդ ու լուրջ խնդիրներ էի դնում իմ առջև և ջանքերս ուղղում դրանց լուծմանը: Արդյունքում մեծաթիվ ուսումնասիրություններն ու մենագրություններն են, որոնք հրապարակել եմ:

Հնարավոր չէ կարճ ժամանակահատվածում դառնալ լավ գիտնական: Այն համոզմանն եմ, որ գիտնական դառնում են ժամանակի ընթացքում. գիտնականը պետք է աճի և, միաժամանակ, հետադարձ հայացքով նայի իր գիտական ժառանգությանը: Այդ պահը երբեք չեմ կորցնում. միշտ հետադարձ հայացքով քննադատում եմ իմ գիտական համեստ ժառանգությունը: Ներկայիս նոր պատասխանատվությունն ու պաշտոնը ինչ-որ տեղ կազդի իմ գիտական հետագա գործունեության վրա, սակայն կարող եմ հուսալ, որ վարչական աշխատանքի և նման մեծ հիմնարկի տնօրենի պաշտոնում նշանակվելը ծանր հարված չի հասցնի իմ գիտական գործունեությանը: Կփորձեմ որևէ դիրքում, փոխզիջող ձևաչափով, համատեղել թե՛ պաշտոնը և թե՛ գիտական գործունեությունը:

- Պաշտոնավարման ընթացքում հասցրե՞լ եք ծանոթանալ Թանգարան-ինստիտուտի գործունեությանը: Եղե՞լ են բացթողումներ, որոնք կցանկանայիք լրացնել, կամ ինչ-որ բան փոխել:

- Ինձ իրավունք չեմ վերապահում գնահատել նախկին տնօրենի գործունեությանը և էթիկայի տեսանկյունից կոռեկտ չեմ համարում քննադատել, կամ բարեփոխիչի հանգամանքով հանդես գալ: Կարող եմ ասել, որ նախկին տնօրենի կողմից մեծածավալ աշխատանք է կատարվել թե՛ Թանգարան-ինստիտուտի կայացման, թե՛ հետագա բարեփոխումների և շինարարության առումով: Այնուամենայնիվ, նոր տնօրենը, ով էլ որ լիներ, փորձելու էր արդիական նոր ծրագիր իրականացնել: Եվ իմ համաձայնությունը, աշխատել այս պաշտոնում, պայմանավորված էր այդ ծրագրի առկայությամբ: Լինելով իմ երկրի քաղաքացի, հայ գիտնական՝ ես տեսնում էի հնարավորությունը (նախկին տնօրենի գործունեությանն ուղղված քննադատություն չէ սա, այլ՝ անհատական մոտեցում), թե ինչպես կարելի է ներկայացնել հիմնախնդիրը, ինչպես կարելի է թանգարանը դարձնել միջազգային գիտահետազոտական կենտրոն, և բարելավել թանգարանի ցուցադրությունը՝ հետագայում այն հարստացնելով: Դրա արդյունավետությունը ժամանակը ցույց կտա, այնպես որ նախնական գնահատականից ձեռնպահ եմ մնում: Ամենակարևորը տնօրեն - կոլեկտիվ համակեցությունն ու համագործակցությունն է: Վստահ եմ, որ մենք համատեղ կարող ենք մի շարք նոր ու հետաքրքիր ձեռնարկներ կյանքի կոչել:

- **Չկա մի հայ, ում աշխարհընկալման և հոգեբանության վրա չլինի ցեղասպանության կնիքը: Անընդհատ տրտնջալով տասնամյակնե՞ր, դա՞ր շրջել: Եվ որպեսզի Ապրիլի 24-ը մատաղ սերնդի գիտակցության մեջ չարմատավորվի միայն որպես սգո երթ, ի՞նչ է պետք անել:**

- Դա լուրջ հիմնախնդիր է: Ընդհանրապես, որոշակի մի ժամանակահատված, հայ ազգի էթնիկ գիտակցության և էթնիկ հոգեբանության բաղադրիչն էր դարձել ցեղասպանության ընկալումը՝ զոհի կերպարի ընկալման առումով: Թանգարանային ցուցադրության միջոցով փորձելու ենք ոչ միայն մեզ (որպես ներքին քարոզչական կամ կրթաքարոզչական մոտեցում), այլ նաև արտասահմանյան լսարանին ցույց տալ, որ Հայոց ցեղասպանությունը՝ հայերի դեմ իրագործված այդ չարագործությունը, չի սահմանափակվում միայն հայերով ու թուրքերով, այն համամարդկային հիմնախնդիր է՝ որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն, որպես պետականորեն իրագործված ցեղասպանություն: Ուստի, մեր ցուցադրությունը պետք է դուրս գա նեղ հայկական շրջանակներից և ներառի համամարդկային հիմնախնդրի այդ տարրը, որպեսզի դա լինի մեր ազդակը, մեր ազդանշանը:

Փաստորեն, սա կոչ է, և այս ձևով իրականացված հանցագործության անպատժելիությունը կանխել, հանցագործին դատապարտել: Խոսքը վերաբերվում է ոչ միայն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանը: Դա միայն հայկական խնդիր չէ, այլ համամարդկային հիմնախնդիր: Չդատապարտել Հայոց ցեղասպանությունը, հիմնվել վաղեմության տրամաբանությանը, կամ խնդիրը պատմաբաններին թողնել, կնշանակի կանգնել նորանոր ցեղասպանությունների փաստի առաջ (սա դրսի համար): Ներսի համար լուրջ խնդիր է զոհի կերպարից դուրս գալու, գոնե, մեղմելու ընկալումը: Ուստի, թանգարանի ցուցադրությունը նպատակաուղղված է ունենալ նաև դաստիարակչական նշանակություն. կորուստը ողբալու, զոհերի հիշատակը հավերժացնելու այդ անցումը կատարել՝ հենվելով դաստիարակչական հենքին: Այս հարցադրումը պետք է միշտ հնչի՝ մենք, վերապրելով ցեղասպանություն, ինչքանո՞վ ենք կարողանում ապրել որպես հայ մարդ, որպես ազգ և որպես քաղաքակրթության կրող: Որովհետև աշխարհում շատ քիչ քաղաքակրթություններ և ժողովուրդներ ու ազգեր կան, որ անցել են ցեղասպանության գեհենի միջով և վեր են հառնել, վերածնվել են...

Այսօր ունենք պետականություն և այդ պետականության լիարժեքությունն ու կենսունակությունը պետք է ապացույցը լինեն, որ ցեղասպանություն վերապրած ժողովուրդը ի

վիճակի է եղել կառուցել և կրկին, որպես փյունիկ, մոխիրներից հառնել: Մենք անցել ենք այս ամենի միջով և պետք է ուղղակի փայփայենք ունեցածը, գնահատենք այն: Հայի ենթագիտակցության միջով կարմիր թելի պես պիտի անցնի այս գաղափարը:

- Հայկական հարց և Ղարաբաղյան հակամարտություն. անչափ կարևոր այս խնդիրների լուծումն ենք որոնում, փորձում գտնել: Դժվարությունները հաղթահարելի՞ են:

- Ղարաբաղյան հակամարտությունը Հայկական հարցի կարևոր բաղադրիչներից մեկն է: Եվ մեզանում շատ անգամ առկա է այն թյուր կարծիքը, կամ սխալ ըմբռնումը, որ դա բոլորովին անջատ խնդիր է, և այն չպետք է կապել հայ-թուրքական հիմնախնդրին: Իրականում, ակնհայտ է այդ փոխկապակցվածությունը, դա պայմանավորված է Ղարաբաղյան հիմնախնդրի վերաբերյալ Թուրքիայի ընդհանուր դիրքորոշմամբ: Այսինքն՝ Հայաստանի հետ հարաբերությունների հաստատումը Թուրքիան սերտորեն պայմանավորում է Ղարաբաղյան հիմնախնդրով: Թուրքիան Ադրբեջանի հետ մեկտեղ հանդես է գալիս մեկ նշանաբանով՝ «երկու պետություն, մեկ ազգ»: Սա առավել քան ազդանշան է մեզ, որ գործ ունենք նորօրյա պանթուրքիզմի հետ: Պանթուրքիզմ բառը մեզանում լսողները շատ անգամ խորշում են, գտնելով, որ դա վաղեմի պատմական տերմին է և անցած շրջափուլ: Ո՛չ, մեր օրերում այն ունի իր գործնական և կենսական կիրառությունը: Ուստի, Հայկական հարցի լուծումը պետք է տեսնենք ընդհանուր մի ծիրի մեջ: Սա մեկ ընդհանուր հիմնախնդիր է, որի առաջին լուրջ նպատակն է ապահովել հայ ազգի, հայ տարրի, հայոց պետականության հետագա կենսագործունեությունը: Ղարաբաղի, Նախիջևանի, Արևմտյան Հայաստանի կամ Հայ դատի խնդիրներն առանձին լինել չե՛ն կարող:

- Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը իրավական հարթություն տեղափոխելու ժամանակը չէ արդյո՞ք: Ի՞նչ է հարկավոր այն սկսելու համար:

- Մինչ նման նախաձեռնությամբ հանդես գալը, պետք է հաշվի առնել միջազգային հարաբերությունների ընդհանուր կառուցվածքը. խոսքը վերաբերվում է տարածաշրջանային իրադարձություններին: Այսօր Մերձավոր Արևելքը և Հարավային Կովկասը գտնվում են բարդ իրավիճակում. Իրաքյան հակամարտություն, անհանգստություններ Թուրքիայում, Թուրքիային, որպես դաշնակից, կորցնելու խոսակցություններ ԱՄՆ-ի կողմից, Իրանի շուրջ ստեղծված լարված մթնոլորտ, Հարավային Կովկասը վերածնելու տեսակետով վերջին իրադարձություններ ՆԱՏՕ-ի կողմից, որը, փաստորեն, կանաչ լույս վառեց Վրաստանի և Ուկրաինայի համար: Տվյալ դեպքում այսպիսի մի արտահայտություն կա. falsestart (երբ կրակոցից առաջ վազորդը տեղից պոկվում է, ինչը համարվում է սխալ), ինչից վտանգ կա. մենք կարող ենք, ոչ ճիշտ գնահատելով իրադարձությունը, քայլեր կատարել: Տվյալ դեպքում, մինչ նման նախաձեռնությամբ հանդես գալը, պետք է հաշվի առնել տարածաշրջանային և համաշխարհային քաղաքականության զարգացումների բոլոր դրական ու բացասական հետևանքները: Ինչը դրական միտում կարելի է համարել իրավական նախաձեռնությամբ հանդես եկող կողմի համար: Խոսքը վերաբերվում է թեկուզ Հաագայի միջազգային դատարան դիմելու խնդրին, ինչին այսօր Թուրքիան ձգտում է:

Այս տարվա սկզբին բավականին լուրջ նախաձեռնությամբ հանդես եկավ Գերմանիան՝ որպես Եվրոմիությունը նախագահող երկիր, դատապարտել Հոլոքոստը մերժողներին և, ընդհանրապես, ցեղասպանությունները ժխտողներին, այդպիսի հարց է դրված նաև Բունդեսթագի օրակարգում:

Մենք պետք է հաշվենկատ լինենք և ճիշտ գնահատենք իրադրությունը, ընդհանրապես, համաշխարհային քաղաքականությունում տեղի ունեցող իրադարձությունների զարգացումները:

- Ինչպե՞ս կգնահատեք Հայոց ցեղասպանության ուսումնասիրության ուղղությամբ հայ պատմաբանների կատարած աշխատանքները:

- Թե՛ հայ և թե օտար պատմաբանների ու հեղինակների կողմից հսկայական աշխատանք է կատարվել. մշակվել և շրջանառության մեջ են դրվել մեզանում դեռևս անհայտ սկզբնաղբյուրներ: Հիմնական խնդիրն, ի վերջո, գալիս է նորից դեպի մեր ներքին իրականություն. որքանո՞վ ենք մենք պատրաստ դրան՝ վերցնելու դատարանի որոշումով մեզ տրվելիք հասանելիքը՝ թեկուզ արդարադատության առումով: Սա լուրջ հիմնախնդիր է, որը բխում է առաջինից՝ որքանո՞վ ենք ճիշտ աշխատում այս ուղղությամբ և հարգում մյուսների աշխատանքը՝ լինի հայ, թե օտար: Այստեղ հարցն առնչվում է համընդհանուր ձեռնարկի, համընդհանուր մոտեցման խնդիրը ըմբռնելուն:

Եթե կա մի կուռ խումբ, կամ մի կառույց, համազգային և ոչ թե անպայման կուսակցական, ապա մենք ավելի մոտ կլինենք հաջողությանը: Ըստ իս, այստեղ պետք է միմիայն աշխատել, այլ ոչ թե աշխատելուց առաջ մտածել, թե ինչպես կարելի է սեփական անձը ներկայացնել այս համատեքստում, որը լուրջ խնդիր է մեր իրականությունում: Այնպես որ, խնդիրը բազմաշերտ է, սակայն կարող եմ հավաստել, որ վերջնական արդյունքում կարող ենք մեր օգտին արձանագրել շատ խոշոր հաղթանակ:

- Ի՞նչ եք կարծում, Թուրքիան առերեսման կգնա՞ կեղծիքներով շղարշված իր անցյալին, հիմա, երբ նա փորձում է «նորովի նավարկել» գլոբալիզացիայի օվկիանոսում:

- Ո՛չ, Թուրքիան չի կարող գնալ նման քայլի. դա կնշանակի Թուրքիայի դանդաղ մահ, որովհետև Թուրքական պետությունը ստեղծվել է այդպիսի ավանդույթի հիման վրա, այսինքն՝ չհարգել այլադավան, այլակրոն, այլալեզու ազգային փոքրամասնություններին, այլ հանդես գալ բռնություններ կիրառող մեքենայի տեսքով: Փաստորեն, սա է եղել Թուրքական պետականության ստեղծման առանցքը: Ուստի, նման մեքենայի հետընթացը նման է շատ արագ ընթացող գնացքը արգելակելուն, որ կարող է ամբողջ շարժակազմը դուրս շպրտել գծերից: Սա լավ են հասկանում Թուրքիայի այսօրվա իշխանությունները և կփորձեն գոյատևելու համար տարբեր եղանակներ կիրառել, որպեսզի նախ՝ խուսափեն պատասխանատվությունից և երկրորդ՝ իրականությունն ու իրադրությունը կփորձեն չբացատրել սեփական ժողովրդին: Ինչո՞ւ է տասնամյակներ շարունակ Թուրքիան ընտրել ժխտողականության քաղաքականություն, փորձելով սեփական ժողովրդին ապացուցել, որ իրականում այդպես չի եղել: Այս հարցադրումն են անում հայերը, աշխարհի անաչառ դիվանագետները, մտավորականները, պատ-

մաբանները: Սակայն, ամբողջ աշխարհը, ի վերջո, կապացուցի և միահամուռ կլինի Թուրքիային պնդելու, որ դա հենց ցեղասպանություն է եղել: Կարող եմ ասել, որ այստեղ ինչ-որ կերպ գործ կունենանք Թուրքիայի քաղաքակրթական մեկուսացման հետ:

- Հարատևման տրամաբանությունն է՝ հաղթանակից ձևավորել վարքագծի բարոյական սկզբունքներ, պարտությունից ոչ թե վհատվել, այլ հաղթանակի ծրագիր մշակել: Արցախյան ազատամարտի բարոյական սկզբունքները յուրացնում ենք արդյո՞ք, և որքանո՞վ են դրանք հիմնավոր ու անքակտելի:

- Այս հարցին կպատասխանեմ մեկ այլ հարթության՝ հիշողության հարթության մեջ, թե որքանո՞վ ենք մենք ճիշտ հիշում և գնահատում դրա հիման վրա կատարվածը: Տեղի ունեցածը ոչ վաղ անցյալում է: Խոսքը վերաբերվում է Հայոց պատմության ամենափայլուն և լուսավոր էջերից մեկին՝ Արցախյան հերոսամարտին. կարողացանք միահամուռ կերպով ապացուցել մեր տեսակը, մեր կարողությունը, ապացուցել ոչ միայն ամբողջ աշխարհին ու մեր թշնամուն, այլ, առաջին հերթին, ինքներս մեզ: Ուստի, այստեղ շատ կարևոր է, որ կարողանանք ճի՛շտ հիշել և ճի՛շտ գնահատել այն մարդկանց ովքեր եղել են այդ պայքարի հորձանուտում: Մեզանում հիվանդագին միտում եմ նկատում, երբ փորձում են շեշտադրումներն ուղղել բոլորովին այլ ուղղությամբ՝ ստվերում թողնելով իրական գործող անձանց, ովքեր «մեղավոր են» այդ հաղթանակի համար:

Այսօր լուրջ խնդիր ունենք Երկրորդ համաշխարհային պատերազմի հետ. Հայոց ցեղասպանությունից հետո երկրորդ մեծ կորուստը, որ կրել ենք 20-րդ դարում, Երկրորդ աշխարհամարտին է եղել՝ քառորդ միլիոն զոհ ենք տվել: Մեր մատաղ սերունդն այսօր ընդհանրապես գաղափար չունի այդ մասին: Շշրջեք ցանկացած գյուղում և կտեսնեք այն հուշարձանները, որոնք ժամանակին տեղադրվել են ի հիշատակ այդ զոհերի, այսօր կամ խարխլված են, կամ ավերված, կամ կանաչապատ, իսկ հուշաղբյուրները վաղուց ցամաքել են: Սա մեր հիշողության մշակույթի մասին է խոսում: Եթե կարողանանք, դպրոցից սկսած, այդ «քարին» կապել այս սերունդը: Հիշելու «քարին», որը մեր հիշողության մշակույթն է, այդ դեպքում, այս իմաստով, լուրջ առաջընթաց կունենանք:

- Ինչո՞ւ է հային պակասում սեփական փորձի գիտակցումն ու արժեքավորումը, ի՞նչն է նրան զրկում անցյալից դասեր քաղելու կարողությունից:

- Դաստիարակությունը: Իր ընդգրկունությամբ՝ ընտանեկան դաստիարակությունը, հասարակական, անհատական դաստիարակությունը, մանկապարտեզ, դպրոց, բուհ...

- Մենք կիրթ ժողովուրդ ենք, բայց չունենք կազմակերպված մտավորականության այնպիսի շերտ, որը, բացի կրթվածությունից, միավորի բարոյական նկարագիրը բարձր գաղափարականության հետ և կարողանա ձևակերպել հայոց աշխարհահայեցողությունը: Ինչո՞ւ:

- Այո՛, ժամանակին ունեինք այդ մտավորականությունը, իսկ այսօր նրանից ունենք պատառիկներ, ովքեր ստվերում են, և որոնց ձայնը լսելի չէ: Շատ դեպքերում, երբ խոսում ենք մտավորականների մասին, հիշում եմ ռուսական հայտնի ասացվածքը. «Կարդացած լինելը, դեռ մտավորական լինելու չափանիշ չէ»: Մեզ մոտ այդ կարդացածներն են հայտնվում հասարակության ուշադրության կենտրոնում. այն դեպքում, երբ իրական մտավորականի կերպար կրողը ստվերում է, այլ կերպ չի կարող լինել, որովհետև մտավորականն առաջին հերթին համեստություն է ենթադրում, մտավորականը ենթադրում է մեծ հոգի, այլ ոչ թե քաղաքական հաշվարկներ կամ ֆինանսական շահագրգռվածություն: Սա մեր հասարակության ամենահիվանդագին դրսևորումներից մեկն է: Փաստորեն, մտավորականության կերպարի նկատմամբ նման մոտեցումը հասարակության ախտորոշումն է:

- Ի՞նչ է Ազգային գիտակցությունը, որոնք են նրա հիմքերը:

- Ազգային գիտակցությունը ազգի հիշողությունն է, դա նրա կրթական մակարդակն է, սերնդի դաստիարակության հիմքերն են՝ ինչի հիման վրա է ձևավորվում նոր սերունդը, ինչով է ապահովվում հաջորդականությունը սերնդի կրթության և նաև գիտակցության առումով: Ազգային գիտակցությունը սեփական պատմության ընկալման, սեփական մշակութային ժառանգության նկատմամբ իմացությունն է ու հոգածությունը: Ազգային գիտակցությունը սեփական պետականության նկատմամբ, սեփական պետականության խորհրդանիշների նկատմամբ հարգանքն է:

«ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ՃԱՆԱՉԵԼ 20-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ»

«21-րդ դարում աշխարհում իրականացվող ցեղասպանությունները կանխելու առաջին գործողությունը պետք է լինի 20-րդ դարի առաջին ցեղասպանության ճանաչումը: Այն, ինչ անում ենք այսօր, միտված է վաղվան»,- Կապիտոլիումում հայտարարել է կոնգրեսական Բրեդ Շերմանը: «Ոմանք ասում են, թե հարկավոր է մոռանալ պատմությունը՝ ներկա իրավիճակը բարելավելու և հարևանների հետ հարաբերությունները կարգավորելու համար: Ուրեմն, պատկերացրեք, թե վաղը Գերմանիայում իշխանության է գալիս մի այնպիսի կառավարություն, որը հրաման է արձակում վերացնել Բեռլինի Հոլոքոստի թանգարանը: Եվ ինչպիսի՞ արձագանք է սրան տալիս ԱՄՆ-ը: Ինչպիսի մոլորված կառավարություններ էլ ժամանակ առ ժամանակ հայտնվեն մեր դաշնակիցների մայրաքաղաքներում՝ ի հեճուկս նրանց դիրքորոշումների, ճշմարտությունը մնում է անփոփոխ: Այսինքն՝ Բեռլինի Հոլոքոստի թանգարանը չպետք է վերացվի, իսկ Հայոց ցեղասպանությունը՝ այլևս ուրացվի»,- ասել է Բ. Շերմանը:

Բ. Շերմանն իր տարակուսանքն է հայտնել Հայոց ցեղասպանությանն ընդդիմանալու հարցում Թուրքիայի նման կեցվածքի առումով: «Սրանով Թուրքիան ոչ թե արգահատում է այստեղ գտնվող մարդկանց և ցեղասպանությունը վերապրածներին, այլ վնասում է հենց իրեն: Ինչպիսի՞ն կլիներ այսօր ԱՄՆ-ը, եթե չպայքարեր ստրկության դեմ և այնուհետև չճանաչեր իր պատմությունը, ինչպիսի՞ն կլիներ Գերմանիան, եթե ուրանար իր պատմությունը: Եվ ինչո՞ւ է Թուրքիան կարծում, որ ինքը կարող է հասնել ժամանակակից աշխարհին, երբ դեռևս խարսխված է օսմանյան մտածողությանը»,- նկատել է կոնգրեսականը: Եվ ավելացրել է, որ ցեղասպանությունը վերապրածները, ովքեր այժմ ավելի քան 90 տարեկան են, հույս են փայփայում, որ քանի դեռ իրենք կենդանի են, Կոնգրեսը և, ի վերջո, Թուրքիան կճանաչեն պատմական ճշմարտությունը:

(31. 03. 2007թ., «Հայաստանի Հանրապետություն»)

ԿՈՆԳՐԵՍՈՒՄ ՔՆՆԱՐԿՎՈՂ ՀԱՅԿԱԿԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ԹՈՒՐՔ-ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Թուրք-ամերիկյան հարաբերությունները վերջին տարիներին ապրել են շատ վայրիվերումներ: Մինչև «Սառը պատերազմի» ավարտը Թուրքիան համարվում էր ԱՄՆ-ի՝ ԽՍՀՄ սահմաններում գտնվող ամենակարևոր դաշնակիցներից մեկը: Անկարան Վաշինգտոնի տարածաշրջանային «ժանդարմն» էր և մասնակցում էր ամերիկյան բոլոր նախագծերին: «Սառը պատերազմի» ավարտից հետո իներցիայով ընթացող հարաբերությունները անվանվեցին նույնիսկ «ռազմավարական»: Սակայն, ԽՍՀՄ-ի փլուզումն ու երկբևեռ աշխարհի վերափոխումը աշխարահառազմավարական շտկումներ մտցրեցին ԱՄՆ-ի ծրագրերում:

Այս ամենը բերեց 2001թ. սեպտեմբերի 11-ին, ինչն էլ տարավ Աֆղանստանում ու Իրաքում ռազմական գործողությունների: Թուրքիան, որը ԽՍՀՄ-ի փլուզումից հետո մնացել էր թատերաբեմից դուրս, գործողությունների Մերձավոր Արևելք տեղափոխվելուց հետո, կրկին կարևորվեց Վաշինգտոնի կողմից: 2003թ. մարտին իր ցամաքային տարածքը ամերիկյան զորքերին չտրամադրելով ու ԱՄՆ-ի Իրաքի վրա հարձակման ծրագրերը խախտելով՝ Անկարան մեծ հարված հասցրեց թուրք-ամերիկյան հարաբերություններին: Պենտագոնը մեղադրեց թուրք զինվորականությանը անհավատարմության մեջ: ԱՄՆ-ն շատ խիստ կերպով քննադատեց Թուրքիային և ամբողջ աշխարհը սկսեց խոսել թուրք-ամերիկյան հարաբերությունների սառեցման մասին:

Ամերիկացիները սկսեցին ավելի սերտորեն համագործակցել քրդերի հետ՝ խոստանալով նրանց նույնիսկ անկախություն, ինչը խիստ անհանգստացրեց թուրք ազգայանականներին:

Այդուհանդերձ, այդ ու դրան հաջորդող ժամանակաշրջանը քննելու համար արժե հատուկ ուշադրություն դարձնել թուրք-ամերիկյան առևտրի հաշվեկշռին:

Թուրքիա - ԱՄՆ արտաքին առևտուր (մլրդ $)			
	Արտահանում	*Ներմուծում*	*Ընդհանուր*
2000	*3,7*	*3.7*	*6.7*
2001	*3,0*	*3,1*	*6,1*
2002	*3,5*	*3,1*	*6,6*
2003	*3,7*	*2,9*	*6,6*
2004	*4,9*	*3,3*	*8,2*
2005	*5,1*	*4,3*	*9,4*

Ինչպես տեսնում ենք, այսպես կոչված, «սառեցված հարաբերությունները» ամենևին բացասաբար չեն անդրադարձել առևտրային հարաբերությունների վրա, նույնիսկ զարգացել են: Ներկայումս հայկական ու քրդական հարցերի պատճառով սուր բնույթ ստացած թուրք-ամերիկյան հարաբերությունների քննարկման կիզակետում պետք է դիտարկել ընդհանուր պատկերի մի քանի մանրամասներ:

Հայոց ցեղասպանության նախագիծը Կոնգրեսում.

ԱՄՆ-ն գիտակցում է, որ թուրք հասարակությունն ու Անկարան շատ լուրջ կերպով կարծագանքեն Հայոց ցեղասպանության վերաբերյալ նախագծի ընդունմանը:

Բուշի վարչակարգը Թուրքիայի արտգործնախարարին խոստացել է աշխատել նախագծի դեմ, միևնույն ժամանակ ԱՄՆ նախագահի Ազգային անվտանգության գծով խորհրդական Սթիվընը Հեդլին հայտարարել է, թե «եթե ուզում եք, որ մենք ձեզ օգնենք, նախ ինքներդ ձեզ օգնեք»՝ ակնարկելով Թուրքիայի Քրեական օրենսգրքի 301-րդ հոդվածի փոփոխման ու Հայաստանի հետ հարաբերությունների նորմալացման ուղիների մասին:

Որքան էլ Թուրքիան կարևորվի ամերիկացիների կողմից, այդուհանդերձ Անկարայի սպառնալիքները, թե «Իրաքում իրավիճակը կարող ենք ապակայունացնել», կոնգրեսականների մոտ առաջացնում են կամ ծիծաղ, կամ զայրույթ, սակայն ոչ լրջություն: Կոնգրեսում մեծամասնությունը հավատում է, որ Օսմանյան կայսրությունը ցեղասպանության է ենթարկել հայերին: Ըստ մի կոնգրեսականի, «հայկական նախագծի բախտը կորոշվի անդամների խղճի ու Անկարային չբարկացնելու միջև հաշվարկների պայքարի արդյունքում»:

Գործարքներ քրդերի դեմ.

Եվրոպայում, Ա. Գյուլի վաշինգտոնյան այցի նախօրեին, Քրդական բանվորական կուսակցություն (ՔԲԿ) կազմակերպության դեմ իրականացված գործողությունները խորհրդանշական իմաստ ունեցան: Անշուշտ, նման գործողություններում ազդեցիկ էր ամերիկյան գործոնը, և սա որակվում է՝ որպես ԱՄՆ-ի ուղերձ Թուրքիային:

ԱՄՆ-ն Գյուլին հայտնել է իր ցանկությունը, որ Անկարան իրաքյան քրդերի հետ մտնի շփումների մեջ ու առավել սերտ համագործակցի: Ըստ չճշտված աղբյուրների, որոնց տեղեկատվությունն այդուամենայնիվ հաստատվել է որոշ ամերիկացի ու թուրք պաշտոնյաների կողմից, Բարզանիի հետ ոչ պաշտոնական բանակցությունների ժամանակ վերջինս հայտնել է, որ կարող է քայլեր անել Հյուսիսային Իրաքից ՔԲԿ-ն վտարելու ուղղությամբ:

Գյուլի այցից առաջ ԱՄՆ-ն «դեղին լույս» վառեց Թուրքիայի Իրաքի սահմանն անցնելու ու քրդերի դեմ գործողություններ իրականացնելու ծրագրերին: ԱՄՆ պետքարտուղարության բարձրաստիճան պաշտոնյա Մ. Բրայզան այս մասին ասել է. «Ինչ էլ որ արվի, պետք է կատարվի Իրաքի, ԱՄՆ-ի ու Թուրքիայի միջև լիարժեք կոորդինացման միջոցով»: Դրանից հետո թուրքական ԶԼՄ-ներում սկսեցին հոդվածներ ու հարցազրույցներ ամերիկացի մասնագետների ու պաշտոնյաների հետ, որտեղ ասվում է, թե ԱՄՆ-ն նույնիսկ կարող է «կանաչ լույս» վառել Թուրքիայի առաջ: Ակնհայտ է, որ «լուսափորային դիվանագիտությունը» ևս մի ծանրաքաշ է դնում թուրք-ամերիկյան բանակցությունների կշեռքի վրա: Օրինակ՝ «Մենք կընդունենք հայկական նախագծի թեթև տարբերակը, փոխարենը, թույլ կտանք, որ մի քանի օրով ներխուժեք Իրաք»:

Նախընտրական հաշվարկներ.

Այս տարի՝ աշնանը, Թուրքիայի խորհրդարանական ընտրություններ են, որոնք մեծապես ազդելու են տարածաշրջանի առաջիկա տարիների կյանքի վրա: Թուրքիայում աստիճանաբար հզորանում են ազգայնականները, ինչը վախեցնում է ԱՄՆ-ին: Վաշինգտոնի համար, որն իշխանության բերեց ներկայումս ղեկին գտնվող Արդարություն ու զարգացում իսլամամետ կուսակցությանը (ԱԶԿ), ազգայնականներն ավելի քիչ կառավարելի են: ԱՄՆ-ն գիտակցում է, որ եթե ընդունի հայկական նախագիծ, ապա մեծ հարված կհասցնի ԱԶԿ-ին, սակայն Իրաք ներխուժման թույլտվությունը կարող է մեծապես օգտակար լինել:

Մինչ խորհրդարանական ընտրությունները՝ գարնանը, սպասվում են նախագահական ընտրություններ: Վաշինգտոնը չի ցանկանում, որ Թուրքիայում ժողովրդավարացման գործընթացը կաղի: ԱՄՆ-ն ցանկանում է, որ նախագահական ընտրությունները չհանգեցնեն նոր ճգնաժամի, ինչից չկարողանան օգտվել ազգայնականները: Այդ պատճառով էլ նրանք կողմնակից են մի թեկնածուի, որը հավասարապես ընդունելի կլինի բոլորի կողմից: Ակնհայտ է, որ այդ թեկնածուն ներկայիս վարչապետ Էրդողանը չէ:

Այսպիսով, հպանցիկ քննարկելով թուրք-ամերիկյան real politics-ի հարցերը՝ կարծում ենք, որ Հայոց ցեղասպանության նախագծի ընդունումը կախված է թուրք-ամերիկյան սակարկություններից, այսինքն՝ Թուրքիայի հնարավոր զիջումներից, ինչպես նաև տվյալ պահին Մերձավոր Արևելքում զարգացող իրավիճակից: Որքան ուզում է ասենք, թե «մենք եվրոպական երկիր ենք», փաստը մնում է փաստ, որ մեր ապագայի վրա ավելի մեծ ազդեցություն է թողնում մեկ կրակոցը Թուրքիայում կամ Իրաքում, քան թե մի ամբողջ գնացքի պայթեցումը Իսպանիայում:

ԱՐՏԱԿ ՇԱՔԱՐՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՎՐԱՑ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՇՈՒՐՋ

2006թ. սեպտեմբերի վերջին Վրաստանում լրտեսության մեղադրանքով ձերբակալվեցին ռուս զինծառայողներ: Նրանք մեղադրվեցին նաև դիվերսիաներ ու ահաբեկչական գործողություններ կատարելու մեջ: Ռուսաստանի պատասխանը չուշացավ. հոկտեմբերի 2-ին նա որոշեց շրջափակել Վրաստանը: Նույն օրը ձերբակալված ռուս զինծառայողները հանձնվեցին ռուսական կողմին, իսկ հաջորդ օրվանից սկսած Ռուսաստանն իրականացրեց Վրաստանի տրանսպորտային և փոստային շրջափակումը: Դրան հաջորդեց Գազպրոմի հայտարարությունը, որ այսուհետ Վրաստանը 1000 մ^3 ռուսական գազի համար պետք է վճարի ոչ թե 110, այլ՝ 230 դոլար: Բոյկոտվեցին վրացական գինիներն ու հանքային ջրերը: Իր հերթին Վրաստանը հայտարարեց, որ ինքն իրավունք ունի վետո դնել Համաշխարհային Առևտրի Կազմակերպություն Ռուսաստանի մտնելուն:

Վրաստանի հակառուսական դիրքորոշումն ունի իր սահմանները: Ի վերջո, նա ստիպված կլինի փոխել իր արտաքին քաղաքականության ռուսական ուղղությունը, սակայն ստեղծված իրավիճակում վրացական կողմի գործողությունները շատ բանով կախված կլինեն Մոսկվայից: Վերջինս բացասաբար է վերաբերվում նաև Վրաստանի ու ՆԱՏՕ-ի համագործակցությանը: Հենց այս հանգամանքն է ընկած Ռուսաստանի ու Վրաստանի հարաբերությունների հերթական սրման հիմքում: Ընդ որում, Մոսկվան այնպես է խրվել Վրաստանի հետ «քաղաքական ճակատամարտում», որ «ստվերում» է մնացել Ադրբեջանը, որը Արևմուտքի համար ավելի մեծ հետաքրքրություն է առաջացնում, քան Հարավային Կովկասի մյուս երկրները: Միևնույն ժամանակ Բաքուն ռուս-վրացական սկանդալի ստվերի տակ շարունակում է ՆԱՏՕ-ին ինտեգրվելու գործընթացը: Եվ այդ ամենը տեղի է ունենում առանց բարձր արևմտամետ արտահայտությունների:

Անկասկած, Ռուսաստանի համար կարևոր է հակամարտությունը չվերածել ԱՄՆ-ի ու Արևմուտքի հետ ընդհանրապես: Իր գործողություններով հենց այդպիսի նպատակ էր հետապնդում Սահակաշվիլին: Վերջինս քաջ գիտակցում էր, որ գնալով այդպիսի քայլի, Ռուսաստանի պատասխանը կտրուկ կլինի և հենց դա էլ ակնկալում էր: Օսեթական ու աբխազական խնդիրների ուժային լուծումը նրա համար հարմար կլինի ներկայացնել որպես պայքար Ռուսաստանի կայսերական նկրտումների դեմ: Այժմ Մոսկվային անհրաժեշտ է հստակ գիտակցել, որ Սահակաշվիլիի թիկունքին կանգնած է Վրաստանի մեծ մասը: Այսօր հենց այդպիսին են վրացիների մեծամասնության պատկերացումները սեփական պետական քաղաքականության նպատակների ու առաջադրանքների վերաբերյալ: Ռուս-վրացական հարաբերությունների խնդիրն Արևմուտքում չէ, խնդիրը վրացական քաղաքական էլիտայի մեջ է, որը ձգտում է սեփական խնդիրները լուծել ուրիշների օգնությամբ: 1990-ականների սկզբին նա ցանկանում էր դա իրականացնել Ռուսաստանի օգնությամբ, իսկ այժմ՝ ԱՄՆ-ի: Այսօր ամերիկյան ազդեցությունը Թբիլիսիի վրա զգալիորեն գերազանցում է ռուսականին, և դա լրջորեն անհանգստացնում է Մոսկվային:

Այս խնդիրը վերաբերում է ոչ միայն ռուս-վրացական երկկողմ հարաբերություններին, այլև կարող է էականորեն ազդել Հարավային Կովկասի ողջ գեոքաղաքական ուրվագծի վրա: Ռուսաստանի կոշտ գործողությունները Վրաստանին հարկադրում են տարածաշրջանում իր հարևանների մեջ դաշնակիցներ փնտրել: Դա կհանգեցնի նրան, որ մոտ ապագայում Թբիլիսին ձեռնամուխ կլինի Բաքվի հետ հարաբերությունների բարելավմանը: Ներկայումս ՆԱՏՕ-ի անդամներից և ոչ մեկը Հարավային Օսեթիայի ու Աբխազիայի նկատմամբ վրացական հավակնությունների պատճառով չի պատրաստվում ակնհայտ հակամարտության մեջ մտնել Ռուսաստանի հետ:

Դրա համար էլ Վրաստանը շահագրգռված է ուժեղ դաշնակից գտնել հենց Անդրկովկասում: Ում հետ հեշտ կլինի բողոքարկել ԱՄՆ ու Եվրոմիություն՝ դա դիտարկելով որպես փրկություն «ռուսական վտանգից»: Ադրբեջանի հետ համատեղ Վրաստանին հեշտ է ստեղծել անհրաժեշտ տեղեկատվական ֆոն «սառեցված հակամարտությունների» խնդիրների շուրջ: Ներկայումս Ադրբեջանն իր առջև խնդիր է դրել՝ իր ռազմական բյուջեն հասցնել Հայաստանի ազգային բյուջեի չափին: Չպետք է մոռանալ նաև Ադրբեջանի լավ հարաբերությունները ԱՄՆ-ի հետ: Նախագահ Ի. Ալիևի Վաշինգտոն կատարած վերջին այցի ժամանակ Ադրբեջանն անվանվեց «ԱՄՆ-ի իսլամական դաշնակիցը»: Նախկինում այդպիսի պատվի արժանացել էր միայն Թուրքիան:

Ինչպես Վրաստանը, այնպես էլ Ադրբեջանն ունեն լուրջ խնդիրներ՝ կապված տարածքային ամբողջականության հետ: Ադրբեջանական ու վրացական քաղաքական շրջանակներում բացասական կարծիք է ձևավորվել Ռուսաստանի դերի մասին, որը միակողմանիորեն աջակցում է «ագրեսիվ անջատողականներին»: Դրա համար էլ պատահական չեն Ադրբեջանում իշխող կուսակցության՝ «Ենի Ադրբեջանի» ներկայացուցիչների բազմաթիվ դրական հայտարարությունները 2006-ի հուլիս-օգոստոսին Մ. Սահակաշվիլու ձեռնարկած «կոդորյան օպերացիայի» վերաբերյալ: Այսօր Թբիլիսին Բաքվին դիտում է որպես հնարավոր զինակից՝ արևմտյան գործընկերների օգնությամբ տարածաշրջանում Ռուսաստանին զսպելու համար:

Այս ծրագիրը ոչ վաղ անցյալում Վրաստանում Հայաստանի քաղաքացիների ձերբակալությունը դիտարկվում էր որպես Ադրբեջանին հաճոյանալու ու մերձենալու փորձ: Առայժմ հայկական կողմը պահպանում է անհրաժեշտ քաղաքական ուղղվածություն: Հայաստանի Ազ փոխխոսնակ Վ. Հովհաննիսյանն այդ կապակցությամբ հայտարարել է, որ Վրաստանում Հայաստանի քաղաքացիների ձերբակալությունը Երևանի համար չի կարելի դիտարկել որպես ազդանշան, քանի որ նրանք իսկապես խախտել են վրացական օրենքը: Պետք է նշել, որ վրացական տարածքում Հայաստանի քաղաքացիների ձերբակալությունները կապված են նրանց կողմից վրաց-ռուսական սահմանը անլեգալ անցնելու հետ. նրանք հայտնվել են Հարավային Օսեթիայում և Աբխազիայում ռուսական տարածքի միջով: Ամեն դեպքում, Թբիլիսիի գործողությունները հավանության կարժանանան Բաքվում, քանի որ Վրաստանը ոչ միայն ձերբակալում է հայերին, այլև ցուցադրաբար պաշտպանում է իր տարածքային ամբողջականությունը:

Անհրաժեշտ է նշել մի շարք հանգամանքներ, որոնք բացասական ազդեցություն են թողնում հայ-վրացական հարաբերությունների վրա: Վրացական իշխանությունները վարում են ազգայնամոլական քաղաքականություն, ինչն էլ առաջացնում է էթնիկական հակամարտություններ, քարոզչություն է տարվում հայերի վերաբերյալ բացասական կարծիք ձևավորելու համար՝ նշելով, որ նրանք բարեկամաբար չեն տրամադրված Վրաստանի հանդեպ: Փորձ է արվում երկրում բռնի ծուլել հայերին՝ նրանց հայկական ազգանունները փոխելով վրացականով: Խնդիրներ ունեն նաև կապված Վրաստանում հայկական եկեղեցու գործունեության հետ: Վրաստանը հրաժարվեց իրավական կարգավիճակ տրամադրել հայկական եկեղեցական թեմին: Եվ վերջապես հակահայկական տրամադրություններ են առաջացնում հայ-ռուսական հարաբերությունները:

Օգտագործելով հայ-թուրքական ու հայ-ադրբեջանական հակամարտությունները՝ Վրաստանը ձգտում է

տրանսպորտային միջանցքի դեր կատարել Արևելք-Արևմուտք հարաբերություններում: Խոսքը, մասնավորապես, վերաբերում է Բաքու-Թբիլիսի-Ջեյհան նավթամուղին, Բաքու-Թբիլիսի-Էրզրում գազատարին և Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու երկաթգծին:

Մինչդեռ վրաց-ադրբեջանական դաշինքը, չնայած Թբիլիսիի ու Բաքվի միջև հարաբերությունների ջերմացմանը, չունի լուրջ հեռանկարներ: Սակայն դա չի նշանակում, որ այդ դաշինքին չեն ձգտելու: Այդպիսի դաշինքը առավել իրատեսական էր 1990-ականների սկզբներին ու կեսերին: Սակայն տվյալ ժամանակահատվածում Վրաստանը Ռուսաստանի հանդեպ պատրանքներ էր տածում վրացական տարածքային ամբողջականության պահպանման հարցում: Պետք է նշել, որ 1994-ին Վրաստանը ԱՊՀ է մտել հանուն դրա և հավանության է արժանացրել վրաց-աբխազական կոնֆլիկտի գոտում խաղաղասիրական օպերացիա անցկացնելուն: Այդ ժամանակ ռուս խաղաղապահները հրաժարվեցին «գործիք դառնալ» օտարի ձեռքում, և Վրաստանը վերջնականապես կողմնորոշվեց դեպի Արևմուտք:

Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա այսօր Բաքվով Մոսկվան շահագրգռված է ոչ քիչ, քան ԱՄՆ-ը և Եվրոմիությունը: Ադրբեջանի կողմնորոշումը դեպի Արևմուտք ունի կոնկրետ սահմաններ. Բաքվում վախենում են նրանից, որ Ադրբեջանի ծայրահեղ արևմտականացումը կհանգեցնի նրան, որ կվերածվի հակաիրանյան հարթակի: Բաքվում վախենում են ոչ միայն Թեհրանի դեմ ձեռնարկվելիք օպերացիայի տնտեսական հետևանքներից, այլև նրանից, որ Թեհրանը հայտարարել է, որ կհարվածի այն երկրին, որտեղից ամերիկացիները հարված կհասցնեն Իրանին: Ադրբեջանն իսլամական երկիր է, իսկ ծայրահեղ արևմտականացումը վատ կերպ կընկալվի Արևելքում: Դրա համար Բաքվին անհրաժեշտ է համարժեք հարաբերություններ պահպանել Ռուսաստանի հետ, որպեսզի չդառնա ԱՄՆ-ի ռազմական դաշնակիցը հակաիրանյան կոմպանիայի ժամանակ: Ամեն դեպքում Ռուսաստանից արմատական բաժանմանը և նույնպիսի արմատական «փախուստին տարածաշրջանից», ինչպիսին Վրաստանի պարագայում է, ադրբեջանական քաղաքական գործիչները պատրաստ չեն:

Բաքվի ու Թբիլիսիի միջև դաշինքը բարդացնող երկրորդ կարևոր գործոնը, դա վրացական «տարածքային ամբողջականության» խնդիրն է: Վրաստանի կազմում է գտնվում ադրբեջանախոս Բորչալուի շրջանը, որին վրացիներն անվանում են Կվեմո Քարթլի: Այստեղ Վրաստանի ադրբեջանցիների իրավունքները ոտնահարվում են (մասնավորապես՝ սոցիալ-տնտեսական իրավունքները) և առկա է վրացական գաղթեցման քաղաքականություն:

Ադրբեջանի հետ դաշինք կնքելու համար Վրաստանը ստիպված կլինի լուրջ զիջումների գնալ նրանց իրավունքների պաշտպանության ուղղությամբ: Սակայն այդ դեպքում արդեն կարող է սրվել Ջավախքի հայ բնակչության խնդիրը, որը դեպքերի նման զարգացման դեպքում կպահանջի իր իրավունքների արմատական բարեփոխումը:

Ընդհանրացումներ

Այժմ Վրաստանն իր ռազմավարական գործընկերներն է համարում Թուրքիային ու Ադրբեջանին, ինչի պատճառով էլ ստիպված է լինում զիջումների գնալ նրանց պահանջներին՝ ի վնաս հայերի: Այդպիսի օրինակներից մեկը վերաբերում է Աբխազական երկաթուղու բացմանը. ինչին դեմ է Ադրբեջանը, քանզի դրանով Հայաստանը երկաթուղային կապ կհաստատի Ռուսաստանի հետ: Պետք է նշել, որ աբխազական երկաթուղու փակ լինելու պատճառով այժմ Վրաստանի ու Ռուսաստանի միջև երկաթուղային կապն իրականանում է ադրբեջանական երկաթգծի միջոցով:

Իր հերթին վրաց-ռուսական հարաբերությունների բարդացումը և, հատկապես, Ռուսաստանի կողմից իրականացվող շրջափակումը Վրաստանին դնում է Ադրբեջանից կախյալ իրավիճակի մեջ: Խոսքը վերաբերում է գազի խնդրին. հրաժարվելով ռուսական գազից՝ Վրաստանը, որպես այլընտրանք՝ ստիպված կլինի գազ ներկրել Ադրբեջանից ու դրանով զիջումների գնալ վերջինիս պահանջներին:

Այսպիսով, Ադրբեջանը սկսում է ակտիվորեն միջամտել Վրաստանի ներքին գործերին: Ուշագրավ է, որ այդ միջամտությունը գնալով կարող է մեծանալ, և Վրաստանը ստիպված կլինի մեծ զիջումների գնալ թուրք-ադրբեջանական կողմին, հատկապես, թուրք-մեսխեթցիների վերաբնակեցումից հետո:

ՀԱՅԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ



ՋԱՎԱԽՔ. ՎՐԱՑԵՐԵՆ ԻՄԱՆԱԼՈՒ ՊԱՀԱՆՋԸ՝ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅՈՒՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԴԵՊ

Ջավախքում առաջնային խնդիրներ են լեզվի հարցն ու ինքնավարությունը. սա է Ախալքալաքի շրջանի ներկայացուցչական մարմնի՝ շրջանային ժողովի անդամ, «Վիրք» չգրանցված կուսակցության համանախագահ Դավիթ Ռստակյանի մոտեցումը: «Վրաստանը պարտավորվածություններ ունի Եվրոխորհրդի առաջ փոքրամասնությունների իրավունքների առումով, օրինակ, լեզվի կապակցությամբ, որ չի կատարում: Ընդունվել է փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիան, բայց չի ընդունվել լեզվի խարտիան: Մենք պահանջում ենք, որ դա արագացվի, որովհետև տարածաշրջանում այնպիսի գործընթացներ են տեղի ունենում, որ եթե այդ խնդիրները չլուծվեն և միջազգային կոնվենցիաները չվավերացվեն, մենք շատ կտուժենք»,- համոզված է Դավիթ Ռստակյանը:

Աշխատանքի ընդունվելու համար պարտադիր է վրացերենը, մինչդեռ Ջավախքում հայերը չեն տիրապետում այդ լեզվին, կառավարությունն էլ ժամանակ չի տալիս սովորելու: «Դա համարում եմ օրենսդրական տեռոր Ջավախքի ազգաբնակչության համար: Լեզվին չենք տիրապետում, որովհետև Ջավախքը անկախ Վրաստանի կազմում մի քանի տարվա պատմություն ունի: Դրանից առաջ ուղղակի տարբերակ չի եղել տիրապետել վրացերեն լեզվին, նման հարց չի եղել: Հիմա մեզանից պահանջում են իմանալ վրացերեն և իբր ինտեգրվել պետությանը: Դա անհեթեթություն է: Ջավախքում արվում է ամեն ինչ, որ հայ երիտասարդները դուրս մնան կառավարման գործընթացներից: Եթե պատճառը վրացերենն է, ապա ինչպե՞ս հասկանալ, որ Վրաստանի այլ շրջաններում, օրինակ, Թբիլիսիում հայերը ներգրավված չեն ներկայացուցչական մարմիններում, չնայած գիտեն վրացերեն: Գործադիրում ընդհանրապես հայ չկա: Վերջերս Վրաստանում ներկայացվեց Միջազգային ճգնաժամային խմբի Ջավախքի առնչությամբ կատարած հետազոտությունը, որտեղ ասվում է այն խնդիրների մասին, որոնք մենք ենք նշում: Ընդ որում, զեկույցում Վրաստանին առաջարկվում է լրջորեն վերանայել փոքրամասնությունների հանդեպ տարվող քաղաքականությունը»,- մտահոգվում է Դ. Ռստակյանը:

Ինչ վերաբերում է Կարս-Ախալքալաք-Թբիլիսի-Բաքու նախագծին, Դ. Ռստակյանը միանշանակ քաղաքական նախագիծ համարեց, որը ոչ միայն մեկուսացնում է Հայաստանը, այլև վնասում է Ջավախքի հայերի շահերը: « Ջավախքը գյուղատնտեսական շրջան է, և այդ նախագծի իրագործմամբ կոչնչացվեն զգալի հողատարածքներ: Ստեղծված աշխատատեղերում, համոզված եմ, հայերին չեն աշխատեցնելու՝ թեկուզ «անվտանգության» պատճառաբանությամբ: Վարվող քաղաքականության տրամաբանությունն այն է, որ հայերի աշխատելը այդ նախագծում անվտանգ չէ: Չի ընդունվել Հայոց ցեղասպանությունը ոչ միայն Թուրքիայի, այլև Վրաստանի կողմից: Ընդ որում, տվյալ դեպքում չի երաշխավորվում նաև հայերի անվտանգությունը»,- հավատացած է Դ. Ռստակյանը: **(13. 03. 2007թ., «Ազգ»)**

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՋԱՎԱԽՔԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ

Խորհրդային Միության կազմում Վրացական ԽՍՀ-ն ուներ առանձնահատուկ կարգավիճակ, որը պայմանավորված էր այդ երկրում մի քանի ինքնավարությունների առկայությամբ: Սովետական Միության վարչական տարածքի 0,31%-ը կամ 69,7 հազար քառ. կմ տարածք զբաղեցնող այդ փոքր հանրապետությունում գոյություն ունեին երեք ինքնավարություններ (Աբխազական ինքնավար հանրապետությունը՝ 8,6 հազար քառ. կմ, Աջարական ինքնավար հանրապետությունը 2,9 հազար քառ. կմ և Հարավ-օսեթական ինքնավար մարզը 3,9 հազար քառ. կմ) 15,4 հազար քառ. կմ ընդհանուր մակերեսով, որը կազմում էր Վրացական ԽՍՀ-ի վաչական տարածքի 22%-ը:

1921թ. դեկտեմբերի 16-ին Վրաստանին միացավ Աբխազական ինքնավար հանրապետությունը, մինչ այդ՝ 1921թ. հունիսի 16-ին Վրաստանին էր միացել Աջարական ինքնավար հանրապետությունը, իսկ 1922թ. ապրիլին՝ Հարավ-օսեթական ինքնավար մարզը:

1922թ. դեկտեմբերին ձևավորվեց ԽՍՀՄ-ը: Վրաստանը, որպես Անդրֆեդերացիան ներկայացնող երեք երկրներից մեկը, մտավ ԽՍՀՄ կազմի մեջ: Այդ պահից սկսած Վրաստանի սահմանները մնացին անփոփոխ՝ առ այսօր:

ԽՍՀՄ կազմում կային մի քանի տասնյակ ինքնավար միավորներ՝ ինքնավար հանրապետություններ, օրինակ՝ Բաշկիրական ԻԽՍՀ-ն, Դաղստանի ԻԽՍՀ-ն, Ուրդմուրդական ԻԽՍՀ-ն, Չեչենո-ինգուշական և Հյուսիս-օսեթական ԻԽՍՀ-ները և այլն: Ինքնավար մարզեր՝ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզը, Հրեական ինքնավար մարզը և այլն: Ինքնավար շրջաններ՝ Կորեական ինքնավար շրջանը, Չուկոտիայի ինքնավար շրջանը և այլն: Այս և մյուս բոլոր ինքնավար միավորները ձևավորվել էին ազգային համախումբ բնակչության և ազգային մեծամասնության գործոններով պայմանավորված: Եթե հաշվի առնենք այս հանգամանքը և ԽՍՀՄ «ազգային» քաղաքականության տրամաբանությունը, ապա գործնականում Վրացական ԽՍՀ-ի կազմում պետք է ձևավորվեր ևս մեկ՝ հայկական ինքնավար միավոր:

Փաստացի, Ախալքալաքի և Բոգդանովկայի (այժմ՝ Նինոծմինդա) շրջաններում համախումբ ձևով բնակվում էին 200 հազար հայեր: Տարածքային առումով Ախալքալաքի շրջանը զբաղեցնում էր 1,233 հազար քառ. կմ տարածք, իսկ Բոգդանովկայի շրջանը՝ 1,879 հազար քառ. կմ: Եթե անգամ հաշվի չառնենք Հայ ազգի բնիկ լինելու հանգամանքը և այն, որ Ջավախքի մյուս շրջաններում (մասնավորապես՝ Ախալցխայում և Ծալկայում) ևս հոծ հայ բնակչություն էր ապրում, արդեն միայն Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների 200 հազար հայ ազգաբնակչության առկայությունը գործնականում առաջացնում էր նոր ինքնավար միավորի ստեղծման անհրաժեշտություն: Չնայած այս ամենին՝ Ջավախքն ինքնավարություն չստացավ: Վրաստանն ամբողջ ԽՍՀՄ-ի կազմում դարձավ միակ հանրապետությունը որտեղ ավելի քան 200 հազար բնիկ բնակչություն ունեցող էթնիկ շրջանը ինքնավարություն չստացավ: Սա պայմանավորված էր երկու հանգամանքով. նախ՝ ԽՍՀՄ իշխանությունները, մասնավորապես՝ ստալինյան «փափուկ մատիտը» չափից ավելին էր արել հայրենի Վրաստանի համար՝ այդ փոքր հանրապետությանը միավորելով և նրա կազմում ձևավորելով երեք ինքնավարություններ: Իսկ չորրորդ՝ Հայկական ինքնավրության ստեղծումը Վրացական ԽՍՀ-ի կազմում ի ցույց կդներ Վրաստանի արհեստական լինելը և նրա «տարածքային ամբողջականության կարկատանները»: Երկրորդ՝ ԼՂԻՄ-ին և Նախիջևանի ինքնավար հանրապետությանը զուգահեռ՝ այն էլ Հայկական ԽՍՀ հյուսիսային սահմանի անմիջական հարևանությամբ, արդեն չորրորդ հայկական միավորի ձևավորումը ակնհայտ կդարձներ ԽՍՀՄ ղեկավարության կողմից հայկական հողերը մասնատելու քաղաքականությունը: Հենց այս օբյեկտիվ պատճառներով էր նաև պայմանավորված Ջավախքի ինքնավարությունը պահանջող երրորդ կողմի բացակայությամբ՝ Ախալքալաքի և Բոգդանովկայի շրջանների 90%-ից ավելի կազմ և բացարձակ մեծամասնություն հանդիսացող հայ բնակչությունը ինքնավարություն չստացավ:

Ինքնավարության հասնելու հստակ հնարավորություն Ջավախքում կար նաև 1900-ականների առաջին կեսին, սակայն այս անգամ ևս երրորդ կողմի՝ Հայաստանի Հանրապետության, անվճռականության պատճառով հարցը լուծում չստացավ:

Հետխորհրդային տարիներին ևս Ջավախքը ձգտում էր ինքնավարության, սակայն վրացական կողմի հակահրավական պահվածքի պատճառով այդ հարցը մինչ օր էլ լուծում չի ստանում: Վրաստանի վարչապետ Զուրաբ Նողայիդելին Երևանում՝ իր պաշտոնական այցի ժամանակ, հայտարարեց. «Վրաստանում կլինեն միայն երեք ինքնվարություններ՝ Աբխազիա, Աջարիա և Ցխինվալի»: Նրան երկրորդեց ՀՀ-ում Վրաստանի դեսպանը՝ ասելով, որ Ջավախքն արդեն ունի մշակութային ինքնավարություն, դրանից ավելին չի լինի, դա հակասում է Վրաստանի ազգային անվտանգությանը: Եվ այս ամենն այն դեպքում, երբ 1992թ. հուլիսի 31-ին, լինելով ՄԱԿ-ի անդամ, Վրաստանը ստորագրել է ՄԱԿ-ի հիմնարար փաստաթղթերը, որոնց համաձայն՝ Վրաստանը ոչ միայն չպետք է խոչընդոտի, այլև «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրի» և «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի» դաշնագրի երկու հոդվածների 3-րդ կետերը միանշանակորեն նշում են, որ «Դաշնագրի մասնակից պետությունները պետք է ՄԱԿ-ի կանոնադրության դրույթներին համապատասխան խրախուսեն ինքնորոշման իրավունքի իրականացումը և հարգեն այդ իրավունքը»: Այս և նմանատիպ բազմաթիվ փաստաթղթեր ստորագրած Վրաստանը խոչընդոտում է Ջավախքի հայության ինքնորոշման և իրավահավասարության սկզբունքները: Եվ այսպես կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ ջավախահայությունը չի գիտակցի, որ ազգային ու քաղաքական իրավունքները չեն մուրում, այլ նվաճում են: Եվ իր իրավունքները նվաճելու համար ոչ միայն պատճառ ու հնարավորություն, այլև իրավունք և իրավական հիմք ունի: «ՄԱԿ-ի կանոնադրությունում ամրագրված ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի ուժով բոլոր ժողովուրդներն իրավունք ունեն առանց կողմնակի միջամտության որոշել իրենց քաղաքական կարգավիճակը» նշված է «Միջազգային իրավունքի սկզբունքների մասին» հռչակագրի «Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքում», իսկ նույն սկզբունքի Բ կետի 3-րդ մասի համաձայն՝ «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանն ազատորեն միավորելը կամ վերամիավորելը այդ ժողովրդի (այս դեպքում՝ ջավախահայության) ինքնորոշման սկզբունքի իրականացման իրավունքն է»:

Ինչևէ, այսօր էլ ջավախահայությունը պահանջում է ինքնավարություն, պահանջում է ազգային անվտանգության, մշակութային, կրթական ազատության երաշխիքներ, և այս դեպքում պաշտոնական Երևանի ու Թբիլիսիի վարած «ջայլամային քաղաքականությունը» և «ցավոտ կողմերը» չտեսնելու մարտավարությունը, կարծում եմ, այս հարցի լուծման լավագույն տարբերակը չէ: Քանզի օգտվելով ընձեռնված հնարավորությունից՝ ցանկացած պահի «բերքը հնձել» կարող է երրորդ մի ուժ, ինչը հարվածելու է և՛ Ջավախքի, և՛ Հայաստանի Հանրապետության, և՛ Վրաստանի շահերին:

ԷԴԳԱՐ ՀԵԼՀԵԼՅԱՆ

ՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԿԱՄ ՍՈՒՄԳԱՅԻԹԸ ԹՈՎՄԱՍՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐԻ ԱՉՔԵՐՈՎ

Սումգայիթ... գեղեցիկ, ծովափնյա քաղաք՝ կառուցված 1950-ականներին: Մոտ 300 հազար բնակչության 18-20 հազարը հայեր են եղել: Քաղաքում զարգացած էր հատկապես քիմիական արդյունաբերությունը: Այն ինտերնացիոնալ քաղաք է եղել, ուր բնակվել են մոտ 76 ազգերի ներկայացուցիչներ: Կարելի է ասել՝ տիպիկ խորհրդային քաղաք, որտեղ մարդկանց միավորել է մեկ ընդհանուր աշխատանքը:

Մինչև 1988թ. փետրվարի 26-ի իրիկունը բազմազգ այս քաղաքում մարդիկ ապրել են խաղաղ ու համերաշխ:

Թովմասյանների ընտանիքը այն հազարավոր հայ ընտանիքներից մեկն էր, որ աշխատանքի բերումով բնակություն էր հաստատել Սումգայիթում: Երևի կշարունակեին ապրել, եթե չլինեին 1988-ի չարաբաստիկ դեպքերը: Այդ ժամանակ Թովմասյան եղբայրներից էդգարը 12 տարեկան էր, իսկ Ռոմանը՝ 10, սակայն ամեն ինչ հիշում են...

Ամեն ինչ սկսվել է 1988թ. փետրվարի 26-ի իրիկունը, երբ մի խումբ ազերիներ իր մեքենայի մեջ գազանաբար այրել են մի հայի: Դա զգուշացում էր հայերին, որ հնարավորինս շուտ հեռանան երկրից, հակառակ դեպքում բոլորին նույն վախճանն է սպասվում: Հաջորդ օրը ցույցերի մեծ ալիք էր սկսվում: 100-150 հոգանոց խմբերով ազերիները անցնում են հայաշատ փողոցներով, իրենց ձեռքերին կրելով բազմաթիվ ցուցանակներ, որոնք, սպառնալիքներ ու զգուշացումներ էին՝ ուղղված հայերին:

Բայց դա դեռ սկիզբն էր, և հենց այդ պատճառով էլ գիշերը խաղաղ է անցնում, ինչը, նրանց վկայությամբ, մի տեսակ հույս է ներշնչել, որ այդ ամենը, պարզապես, սխալմունք է, և որ ամեն ինչ շուտով կպարզվի:

«Հարազատների զգուշացումներին, անգամ, թերահավատորեն էինք վերաբերվում, որովհետև գիտեինք, որ ոչ մի վատ բան չեինք արել, և հենց այնպես ինչո՞ւ պիտի մեր ազերի հարևանները հարձակվեին մեզ վրա»,- պատմում է Ռոմանը:

Հաջորդ առավոտյան ընտանիքի հայրը՝ Ալեքսանդր Թովմասյանը, որ աշխատում էր քիմիական գործարանում, սովորականի պես գնում է աշխատանքի: Մեկ ժամ չանցած, վերադառնում է. նրա խոսքերով՝ գործարանի մոտ իրենց տնօրենը (ազգությամբ՝ թուրք) ետ է դարձնում նրան՝ չցանկանալով կրել իր բազմամյա աշխատակիցների սպանության պատասխանատվությունը:

«Մորեղբայրս, որ նույնպես աշխատում էր քիմիական գործարանում, զանգահարեց մեզ և ասաց, որ տանից դուրս չգանք ու սպասենք իրեն: Շատ չանցած նա եկավ մեր ետևից և մեզ տարավ իր տուն: Այնտեղ էին հավաքվել նաև մեր բոլոր բարեկամները: Հիշում եմ, որ տղամարդիկ ասում էին, որ անպայման կպաշտպանվեն, եթե ազերիները հարձակվեն իրենց վրա»,- պատմում է Ռոմանը:

Այդ ընթացքում ազերի հրոսակախմբերը հարձակվում են հայերի բնակարանների վրա և, գազանաբար խոշտանգելով նրանց, սպանում: Նրանք դիմում էին ցանկացած միջոցի, որպեսզի պարզեն հայերի բնակության վայրերը: Ռոմանի վկայությամբ՝ նրանք դրամ էին տալիս երեխաներին, որ վերջիններս ցույց տային հայերի տները:

«Հայտնի չէ, թե որքան հայ ընտանիքների կարողացան ոչնչացնել նրանք, և էլի քանի հազար հայեր կկոտորվեին, եթե ռուսները չմտնեին քաղաք և չպաշտպաներին մեզ»,- ցավով ասում է Ռոմանը:

Եվ իսկապես, մարտի 2-ի լույս 3-ի գիշերը Ռյազան քաղաքի դեսանտային 10 հազարանոց ջոկատը իջեցվում է քաղաք: Երկու օր անց ողջ մնացած հայերին ռուս զինվորականները տեղափոխում են մի անվտանգ վայր, որը շրջապատել էին ռուս դեսանտայինները, նրանց մեջ են եղել նաև ազերիների փոքր խմբեր:

«Հիշում եմ, որ դա մի հսկա ակումբ էր՝ բարձր պատերով, և մի փոքր աղմուկը տարածվում էր ողջ շենքով մեկ: Ներս մտնելով՝ բոլորս սարսուռ ապրեցինք. սահմռկեցուցիչ տեսարան էր. ներսում տարբեր տարիքի մարդիկ խելացնոր լաց էին լինում՝ կորցրել էին հարազատներին: Գրեթե բոլորը վիրավոր էին: Դա մղձավանջային իրականություն է, մի տեսարան, որ մինչև հիմա կանգնած է աչքերիս առաջ:

Ամենասարսափելին վախն է, մահվան սպառնալիքի վախը, որն իր դրոշմը թողեց բոլորիս դեմքերին ու աչքերում: Այդ ամբոխի մեջ առանձնանում էր մի ծերունի, որը լաց էր լինում՝ շարունակ կրկնելով, թե իր ձեռքերով է սպանել իր տղային...: Մեր հարցին, թե ինչո՞ւ է այդպես ասում, պատասխանեց, թե ինքը դարբին է, և իր տնօրենը (ազգությամբ՝ թուրք) մի շաբաթ առաջ իրեն պատվիրել էր պատրաստել երկաթե սրածայր գործիքներ, իբր թե իր մոր շիրիմի պատրաստման համար: Եվ նա մոտ հազար հատ նմանատիպ գործիքներ է պատրաստել: Իսկ հետո՝ իր աչքերի առաջ, իր ձեռքերով սարքած գործիքներով սպանել են իր տղային»,- ահա թե ինչ է հիշում Ռոմանը իր մանկությունից:

Ազերիների մեջ հայերը ճանաչել են նախկին բանտարկյալներին: Հետո պարզ է դառնում, որ տեղի ներքին գործերի նախարարության աշխատակիցները բանտերից ազատել են բոլոր բանտարկյալներին, զինել նրանց և ուղարկել խաղաղ հայ բնակչության դեմ: Իսկ դեսանտային ջոկատի ռուս զինվորները անելանելի դրության մեջ են հայտնվել: Էդգարի խոսքերով՝ նրանք նույնպես լուրջ վնասվածքներ են ունեցել: Միայն հետո են իմացել, որ տեղի «հայերին իբր պաշտպանելու» խորհրդային իշխանության այդ գործողությունները ձևական բնույթ են կրել: Ռուս զինվորները գրեթե անզեն հայտնվել են գազազած թուրքական խուժանի դեմ, քանի որ նրանց զենքերը մարտական չեն եղել:

Հայերն ակումբում մնացել են մինչև մարտի 8-ը, իսկ մարտի 10-16-ը ողջ մնացած բոլոր հայերը տեղափոխվել են Հայաստան: Այսպես կարողացել են փրկվել շատ ընտանիքներ, որոնք այժմ բնակություն են հաստատել Հայաստանի տարբեր մարզերում: Ռոմանը պատմում է, թե ինչ վայրագություններ են տեսել և թե բարեկամներից ինչե՞ր են իմացել: Երբեք չեն մոռանա այդ սարսափելի օրերը. Սումգայիթի պողպատածուլման գործարանում փետրվարի 28-ի լույս մարտի 1-ի գիշերը հսկա վառարանների մեջ այրել են այդ պահին աշխատող բոլոր հայերին: Բազմաթիվ դիակներ են տեսել ծովի մեջ...

Հայտնի է նաև, որ այդ ամբողջ խռովությունը սկսվել էր մի խաբեությամբ. իբր թե հայերը Ղափան քաղաքում մի ազերի կնոջ են բռնաբարել: Եվ սա էլ հիմք համարելով՝ հարձակվել են խաղաղ հայ բնակչության վրա...:

Ինչևէ, կարևորն այս պարագայում այն է, որ Թովմասյանների ընտանիքը փրկվել է, և հիմա նրանք ապրում են Գյումրիում: Եվ կարելի է ասել, որ ազերիներն իրենց ծրագիրը ինչ-որ մասով կարող են չիրագործված համարել: Սակայն հուսանք, որ Սումգայիթյան եղեռնագործությունը և նրա կազմակերպիչները անպատիժ չեն մնա:

ԱՆՈՒՇ ՀԼՂԱԹՅԱՆ

ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավելի քան 50 տարիների ընթացքում, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի առաջատար գիտաշխատող, բանասիրական գիտությունների դոկտոր, Վերժինե Սվազլյանն իր անձնական նախաձեռնությամբ և արևմտահայի արյան կանչով, անձանձիր ու հետևողական պրպտումներով Հայաստանի Հանրապետության շրջաններից և հայ սփյուռքի տարբեր համայնքներից (Հունաստան, Ֆրանսիա, Սիրիա, Լիբանան, Եգիպտոս, Կանադա, ԱՄՆ, Թուրքիա) գրի է առնել, ձայնագրել, տեսագրել և ուսումնասիրել ժողովրդագիտական նյութեր և հատկապես Հայոց ցեղասպանությունը վերապրած ականատես վկաների պատմած հուշերն ու նրանց հաղորդած պատմական բնույթի երգերը (հայերեն և թուրքալեզու), որոնցից յուրաքանչյուրը ոչ միայն պատմաճանաչողական, փաստավավերական, այլև՝ իրավաբանական արժեք ու ապացուցողական նշանակություն ունի Հայ դատի արդարացի լուծման և Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործում:

Ստորև ներկայացնում ենք նրա գրառած 700 վկայություններից ՍԿՐՏԻՉ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻ (ծնվ. 1910 թ., Տիգրանակերտ) պատմած հուշը, որը մեջբերվում է **Վ. Սվազլյանի «Հայոց ցեղասպանություն. Ականատես վերապրողների վկայություններ»** (Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2000, հուշ թիվ 128, էջ 242-244) գրքից:

Վերժինե Սվազլյանի բազմամյա գիտական գործունեությունը 2006թ. արժանացել է «Հայոց ցեղասպանության ճանաչման գործում նշանակալի ավանդ ներդնելու» համար ՀՀ Նախագահի մրցանակին, որը նա ամբողջությամբ տրամադրել է վերոհիշյալ ստվար գրքի անգլերեն և թուրքերեն թարգմանություններին:

Խմբագրության կողմից

Սկրտիչ Կարապետյան

Ի ս կ ա կ ա ն Տիգրանակերտը Ֆարղինն է, որը քսանհինգ կիլոմետր դեպի Ա ր ա ր ա տ յ ա ն դաշտի կողմն է: Մեծն Տիգրան թագավորի պալատը էնտեղ է եղել, բայց երկրաշարժի պատճառով խորտակվել է:

Տիգրանակերտեն կերևար Արարատ լեռը: Հոնտեղեն կանցներ Տիգրիս գետը: Մենք բնիկ տիգրանակերտցի ենք: Ես ամեն ինչ լավ կհիշեմ, մանրամասնությամբ: 1915թ. հանկարծակի մեզ աքսորեցին: Ես շատ փոքր էի, բայց կհիշեմ՝ որքան ժողովուրդ կար Տիգրանակերտի մեջ, հանեցին դուրս: Քեռիս, որ տասնհինգ տարեկան հազիվ կար, ինձ վերցրեց ուսերին: Մայրս ալ պուճուր եղբորս գիրկն առած, քայլում էր: Սրանք հիշում եմ լավ: Մեծ եղբայրս՝ Նշանը, որ ինձմե վեց տարով մեծ էր, ան ալ քայլում էր մեծ մորս ձեռքը բռնած: Քայլելու ժամանակ մեզի խփում էին գավազանով, մտրակով և սուրերով: Վերջապես էկանք, հասանք Դեր Զորի անապատի վերևի մասը՝ Մերդին քաղաքը, որտեղ գնացքը կուգար, Հալեպ կերթար: Անտեղ մեզ իջեցուցին, կանաչ դաշտ էր: Ներքևը ձոր կար: Մեզ՝ փոքրերիս, ջոկեցին, իսկ մեծերին՝ տարին ձորի կողմը հերթ կայնեցրին. երեք-չորս հարյուր հոգիի չափ մեծեր էին, այդքան ալ երեխաներ էինք: Ուրեմն, մեզ՝ էրեխեքիս, կանաչ դաշտի վրա նստեցրին. մենք չգիտենք՝ ինչ պիտի ըլլա…

Մայրս, իր հերթը խախտելով, գալիս էր մեզի համբուրու՜մ, համբուրու՜մ, գնում էր: Մենք՝ ես, մեծ եղբայրս և փոքր եղբայրս, որը մեկ տարեկան էր, հեռվից տեսնում էինք մի շարան կանայք հերթի մեջ շարժվում են. մեր մայրը անոնց մեջն էր: Տունեն, երբ էլանք, մեր մայրը ազգային տարազներով էր՝ թավիշ, ոսկեկար հագուստներով, գլուխը զարդարված էր ոսկեդրամներով, վիզը ոսկե շղթա կար, հագուստներուն մեջը երկու կողմը քսանհինգ-քսանհինգ ոսկի էր կարած՝ գաղտնի…

Վերջին անգամ, երբ մեր մայրը էկավ մեզի խենթի պես համբուրեց, կհիշեմ, արդեն միայն տակի ճերմակ ներքնազգեստով էր. ո՛չ զարդ կար, ո՛չ ոսկի, ոչ ալ թավիշե հագուստները…

Մենք՝ էրեխեքս, բանից անտեղյակ ենք: Էնտեղ բաներ մը կատարվում են, բայց չգիտենք ի՞նչ է կատարվում: Դու մի ըսեր՝ հերթով բոլորի հագուստները հանում էին, մի կողմի վրա շարում, բոլորին մերկացնում էին, կացինով գլուխները կտրում, նետում էին ձորը:

Մայրս վերջին անգամ էկավ մեզի համբուրեց, գնաց: Ամեն անգամ գալուն պահակին մի դեղին ոսկի կուտա եղեր, որ մեր մոտ գա, իր երեք փոքր էրեխեքին տեսնելու, մեզի համբուրելու: Էդ միջոցին, որ մայրս մեզ մոտ էկավ վերջին անգամ մեզ համբուրելու, մեկ փաքըրթը մը էլավ, դու մի ըսեր, զինված պարսիկները էկան էդ թուրք ժանդարմաներին սկսան կոտորել: Եվ մեզի՝ բոլորիս, ազատեցին: Մեզ՝ էրեխեքիս, հետ նաև մայրս և մի քանի մեծեր, որոնց հերթը դեռ չէր հասած:

Էդ ժամանակ պարսից շահը հրաման է արձակել, որ ով որ մի հատ հայ բերի՝ ըլլա երեխա, ըլլա մեծ, թե փոքր՝ մեկ կարմիր ոսկի կստանա իրմէ՝ մարդ գլուխ: Էս պարսիկ զինվորները մեզի հավաքեցին, որ տանեն Պարսկաստան. շահին հրամանը պիտի կատարեն: Էկան, որ տանեն մեզ, շարքով շարեցին: Էդ միջոցին մի փառավոր ծերուկ, մորուքը ծունկերին հասնող մարդ մը էկավ. անոր անունը շեյխ Աբդըլ ազըր Գեյլանի էր: Էկավ պարսիկներուն ըսավ. - Էս կանանց մեջ դերձակ չիկա՞:

Մայրս, որ հմուտ դերձակ էր, ըսավ. - Ես դերձա՜կ եմ:

Փառավոր շեյխը ըսավ. - Աղջի՜կս, աս երեխաներուն ո՞ւր կտանիս, արի վրաններու մեջ ման արի, Դեր Զորի շրջակայքում բնակվող արաբ կանանց հագուստ կկարես, անոնք քեզ ցորեն, ուտելիք կուտան,- հետո շուռ էկավ դեպի պարսիկ զինվորների մեծավորի կողմը, ըսավ. - սրանց ամեն մեկի համար մեյ-մեկ ոսկի պիտի առնեիր չէ՞ շահից, ա՜ռ, - ըսավ, հանեց չորս ոսկի տվավ, մեզի ազատեց:

Էն փառավոր շեյխը մեզի տարավ վրանների մեջ և ըսավ իր մարդոցը. - Եթե սրանց մազից մեկ թել պակսի, ձեր գլուխը կկտրեմ:

Մամաս կէրթար վրանների տակը արաբ կանանց կար կկարեր, ուտելիք կբերեր: Մի կերպ կապրեինք: Գիշերները մեզ հետ կպառկեր կռնակի վրա. փոքր եղբորս կուրծքին վրա կդներ, որ կաթ ուտի, արդեն կուրծք ալ չէր մնացած, որ ուտեր, խեղճ մայրս, թևերը բացած, խաչվածի պես կպառկեր՝ մեկ թևին՝ իմ գլուխը, մյուս թևին՝ մեծ եղբորս գլուխը, պզտիկն ալ՝ կուրծքին վրա, որ մի բան չպատահի: Քանի որ չէր վստահում ոչ մեկին, աչքը վախեցած էր արդեն: Մայրս շա՜տ գեղեցիկ կին էր, օր մը էս շեյխի եղբայրը կսիրահարվի մորս: Մայրս՝ կհրաժարվի: Նա կասի. - Եթե չհամաձայնես, քո երեխաներին պիտի սպանեմ:

Մայրս ըսավ. - Սպանե՜, միևնույն է, քեզ չե՜մ ուզի:

Այդ միջոցին մի մարդ գնաց լուր տվավ շեյխին: Շեյխը էկավ, ըսավ. - Սրիկա՜, ի՞նչ ես ուզում, ես սրանց բարիք արեցի մեղքացա, չորս ոսկի տվի ազատեցի, որ դուն սպանե՞ս: Ուրիշ աղջիկ չիկա՞, որ ամուսնանաս: Հանեց ատրճանակը՝ թա՜խ-թա՜խ-թա՜խ, մեր աչքի առջևը սպանեց իր եղբորը:

Արդեն մայրս շատ նիհարցել էր, կուրծքը ցամքել էր, պզտիկ եղբայրս

չդիմացավ՝ մեռավ: Լաթ մը չիկար, որ փաթաթեինք մեջը, թաղեինք: Մայրս իր ներքնաշորը պատռեց, մեջը ոլորեց, հողի մեջ թաղեցինք:

Հոն բավականին մնացինք՝ մինչև 1918 թիվը, մինչ այդ՝ ներում էկավ, որ ամեն մարդ, ով կուզե, թող վերադառնա իր երկիրը: Մայրս մեկ հատ ուղտ մը առած էր, ադ ուղտը ծախեցինք, մի հատ էշ առինք, մեր ունեցած-չունեցածը վրան դրինք, մայրս ալ վրան նստավ, ելանք ճամփա դեպի Մերդին: Մերդինի ճանապարհին մամաս մեզի քովը կանչեց, ծնկի եկավ փոսի մը վրա, որուն մեջը շատ մը մարդկային ոսկորներ կային, հանեց, համբուրեց, մենք բան չհասկացանք, ըսինք. - Դայե՜, ավչի՞ յա (մա՜յր, այս ի՞նչ է), - հարցրինք քրդերեն, քանի որ մենք հայերեն խոսիլը մոռցեր էինք:

Մամաս ըսավ. - Ասոնք մեր քույրերուն և եղբայրներուն նշխարներն են:

Վերջապես ադ էշով բարձրացանք Մերդին, որտեղեն գնացքը գնում էր Հալեպ: Էդ միջոցին մեզ հայտնեցին, որ ամերիկացիները էկած են, հայերուն կօգնեն: Մենք արդեն մարդկութենեն դուրս էլած էինք՝ մազերնիս երկարած, վրանիս կարգին հագուստ չիկա: Մեզի ըսին՝ տանե՞ք ձեզի Ամերիկա:

Մայրս խելացի կին էր, բայց այդ տեղը սխալվեց, հրաժարվեց: Էրթայինք նե, գոնե մարդ կդառնայինք: Բայց մայրս պատճառ ուներ հրաժարվելու: Քանի որ չարչիների միջոցով իր եղբորը գտել էր, որը Տիգրանակերտում մեր տունը կարգի էր բերել ու ան ալ գալու էր Մերդին՝ մեզ դիմավորելու:

Մեկ ալ տեսանք՝ մայրս համբուրվում է մեկու մը հետ: Գացինք, տեսանք հորեղբորս տղան էր, Տիգրանակերտեն էկել էր, պիտի գնար Հալեպ, պատահաբար մեզ էր հանդիպել: Նա գնաց իր տոմսը փոխեց, մեզ ալ էշով տարավ, Տիգրանակերտի խանը իջանք: Մամաս տվավ երկու ղուրուշ, ըսավ. - Գնա՛, Մարտիրո՛ս, (որի անունը Մուհամեդ էին դարձրել արաբները), գնա, ըսե եղբորս՝ քույրդ եկել է, թող գա:

Տղան գնում տեսնում է՝ քեռիս մանգաղն է տաշում: Մենք նստած հաց, խաղող էինք ուտում Տիգրանակերտի խանին մեջը: Ողորմած քեռիս էկավ, մեզ գտավ: Քեռիս գլխաբաց, ոտքերը բոբիկ վազել, էկել էր մեզ գտնելու: Եղբայրս ճանաչեց քեռուս: Ալ նկարագրելու՞ բան չէ: Առավ մեզի, մորս հետ, տարավ իր տունը:

Մայրս շատ ջահել մեռավ: Ես քնած էի. առել, տարել, թաղել են, հե՛չ չեմ էլ իմացել:

Մինչև 1923 թիվը Տիգրանակերտ մնացինք: Մայրս արդեն չիկար: Քեռիս երեք երեխայով մնաց շվարած: Արդեն կնոջը թուրքերը աքսորում սպանել էին: Քեռիս ստիպված նորեն ամուսնացավ: Շատ լավ հարս մը բերավ: Ան մեզի հարազատ զավակներուն պես նայեցավ…

Արդեն քեմալականները էկան, մենք ստիպված էինք դուրս գալ Թուրքիայեն: Քեռիս գաղտնի գնաց, որ Հալեպ էրթալու ճար գտնա: Բայց ճանապարհին տեսնում են նրան, քանի որ աչքը շիլ էր, ճանաչում են: Քանի որ ինքը լավ երկաթագործ վարպետ էր և երկրին պետք էր, կոմանդորը ըսեր է. «Դու մեզի պետք ես, ո՞ւր ես գնում»: Բռնում են, շղթաներով ետ բերում: Բայց քեռիս չհանգստացավ, պասպորտ հանեց, մենք ալ քեռուս հետ գնացինք Հալեպ:

Հալեպում մեկը էկավ քեռուս ըսավ՝ էս տղային տուր, տանեմ խոզերս արածացնի: Հոն քիչ մը մնացի: Վերջը լսեցի, որ հորեղբորս դեմիրյոլը (Նկատի ունի Բեռլին-Բաղդադ երկաթուղու կառույցը – Վ.Ս.) տարել էին, աշխատացրել էին ու վերջն ալ սպանել: Հոն սպանվել էին նաև հայրս ու մեծ քեռիս:

Գացի հորեղբորս այրի կնոջը գտա, բայց նա էլ երեխաներով ծանրաբեռնված էր, ինձ տարավ որբանոց: Որբանոցին մեջը ութսուն հոգի էին՝ քառասուն տղա, քառասուն աղջիկ: Ես որբանոցին գետինը կլվայի: Օր մը եկավ հորեղբորս կինը, ըսավ՝ ախպարդ Ֆրանսա կերթա: Ես զարմացա, ջրի դույլը ձեռքես ինկավ: Ախպերս էլավ, Ֆրանսա գնաց: Հոն ալ շա՜տ առաջ գնաց, քանի որ մենք ընտանիքով լավ երկաթագործ վարպետներ էինք, ան ալ Ֆրանսայի մեջ շեֆ կոմպանիոն եղավ:

Վերջը որբանոցին խոզապահը դարձա: Խոզերը կտանեի արածացնելու: Երբ պետք ըլլար, կհավաքեի, ախոռ կտանեի: Իսկ օրվա մեջ կելլայի ծառի մը վրա, կերգեի: Ներքևից գլուխին թանով կճուճ դրած սևազգեստ կիներ էին գալիս: Օր մը ասոնցմե մեկը իմ երգած երգիս պատասխանեց: Ես իջա ծառեն, ըսի. - Ո՞վ ես դուն:

Ըսավ. - Ես Գևորգ Չավուշի քույրն եմ:

Ես վազեցի, Գևորգ Չավուշին լուր տվի. - Գևո՜րգ Չավուշ, քույրդ հոս է:

Ան վազեց, էկավ, արդեն սև հագած արաբ կնիկները գնացել էին: Փնտրեցինք, շուկան, խաները՝ չիկա: Ես նորեն շարունակեցի խոզերը արածացնել, ծառի վրա ելլել, երգել: Քանի որ գիտեմ, ան սևեր հագած աղջիկը գա ևե, պիտի ինձի պատասխանե իմ երգովս: Օր մըն ալ եկավ, բարձր պոռացի. - Գևո՜րգ Չավուշ, ա՛ս է քույրդ: - Գևորգ Չավուշը վազեց, էկավ: Ան կքաշե աղջկան ձեռքը, քովի կնիկը կքաշե աղջկա մյուս ձեռքը: Մի կողմեն՝ արաբ կնիկը կքաշե, մյուս կողմեն՝ եղբայրը: Գևորգ Չավուշը առավ քրոջը, տարավ: Մի հատ խփեց արաբ կնոջը, որը ուզում էր ադ հայ աղջկան իր եղբորը հետ ամուսնացնել:

Հաջորդ օրը արաբները հավաքվեցան, բայց Գևորգ Չավուշը զինվորական էր, արաբ զինվորների Քըռըք խանի մեջ կծառայեր, էկավ ըսավ արաբներին. - Հիմա գնդացիրը կբերեմ, բոլորիդ կջնջեմ:

Ասոնք վախցան, փախան: Աղջիկը մնաց եղբոր մոտ: Ես վերադարձա Հալեպ: Լսեցի, որ ախպերս կուզե ինձի տանել Ֆրանսա: Օր մը հանդիպեցի իմ որբանոցի ընկերներուս, որոնք ուսանելու պիտի երթային Ֆրանսա: Սպասեցի, որ եղբայրս պասպորտ ղրկե, չղրկեց: Ադ ընկերներս գնացին Ֆրանսա, ետ եկան՝ քանի որ փախստական էին գնացած: Ես չուզեցի փախստական էրթալ, մնացի, հետո անցա Բեյրութ: Բեյրութ ամուսնացա, 1947 թվին ընտանիքով եկա Հայաստան: Երևանում՝ Կիլիկիայում, տուն շինեցի: Լավ, փորձված վարպետ էի, Մատենադարանի, Երևանի գինու գործարանի մառանի, Հանրապետության հրապարակի և այլ մեծ շենքերի պատուհանների մետաղյա գեղեցիկ վանդակապատումները իմ ձեռքի գործերն են: Ես շատ հարգված ու փորձված երկաթագործ վարպետ էի:

Օր մը սև մեքենա մը եկավ կանգնեց մեր աշխատանքին տեղը: Մարդ մը եկավ դիրեկտորի կաբինետում նստեց, ինձ կանչեցին: Այդ մարդը ինձ ըսավ. - Դուք Ֆրանսա եղբա՞յր ունիք:

Ըսի. - Այո՛:

- Պետք է հրաժարվիք, թե չէ՝ վատ կլինի: Ձեր անկետայի մեջ պետք է գրեք՝ արտասահմանում հարազատ չունեմ:

Ես սկսա մտածել՝ հապա եղբայրս որ լսի, ի՞նչ կմտածե:

- Դուք գիտեք. կա՛մ հրաժարվեք, կա՛մ սև մեքենան կնստեք: - Ես նայեցի իմ դիրեկտորիս երեսը, ան աչքով ըրավ, որ հրաժարվիմ:

- Լավ,- ըսի,- չունեմ եղբայր,- մարդը անկետային մեջ գրեց, որ հարազատ չունեմ արտասահմանում: Իբր թե երկինքեն եմ իջած: Քանի որ ես Մինիստրների սովետին կից արհեստանոցը կաշխատեի, ադ տեսակ պետք է գրվի եղեր: 1949թ. մեկ գիշերվա մեջ հազարավոր հայեր աքսորեցին: Իմ դիրեկտորի մեկ աչքի թարթումի շնորհիվ մեր ընտանիքը ազատվեց աքսորեն: Ողորմած քեռիիս եմ պարտական իմ նուրբ արհեստը: Ան ինձի տվել էր ոսկերիչի մոտ աշխատելու: Արդեն մեր գերդաստանն ալ երկաթագործ էր: Լավ մասնագետ վարպետ էի, մինչև վերջերս կաշխատեի: Աղջիկս՝ Տիգրանուհին, հաշվապահ դարձավ, իսկ թոռներես մեկը պոլիտեխնիկում դասախոս է, մյուսն ալ ասպիրանտ է կոմպյուտերի գծով, շատ ընդունակ երեխաներ են, ես ալ իրենց հետ կապրիմ, ողորմած կնոջս մահից հետո իրենցմով կմխիթարվիմ…

ՖՐԻՏՅՈՖ ՆԱՆՍԵՆԻ ՀԱՅԱՆՊԱՍՏ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ



Ֆրիտյոֆ Նանսենը, որպես կրթված մարդ, հանրագիտակ ու հումանիստ, վաղուց գիտեր հայ ժողովրդին, ծանոթ էր նրա եղերական ու հերոսական պատմությանը և մշտապես ու ամբողջ հոգով պաշտպանեց նրան: Բազմախորհուրդ են նրա խոսքերը. «Ինձ դժվար է հավատալ, որ որևէ մեկը կարող է ծանոթանալ այդ նշանավոր ժողովրդի պատմությանը, առանց խորապես ցնցվելու նրա մեծ ողբերգությունից»: Շատերի հետ միասին Նանսենը հայ ժողովրդի կյանքին իրազեկ դարձավ ոչ միայն բազմապիսի գրականությամբ, այլև իրական դեպքերի ազդեցության տակ, դեպքեր, որոնք սրտակեղեք էին ու զայրացուցիչ: Խոսքը թուրքերի հայասպան ոճրագործությունների մասին է, որոնք ուժեղացան 19-րդ դարի վերջերից՝ այն ժամանակաշրջանից, երբ լայնորեն ծավալվեց Նանսենի գիտական ու հասարակական գործունեությունը: Այդպիսի նրբազգաց մարդասերը ոչ միայն չէր կարող անտարբեր մնալ Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող աներևակայելի վայրագությունների հանդեպ, այլև վճռականորեն դատապարտեց թուրքական «զուլումը»: Դրա կատաղի կիրառողն էր սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը, որին Նանսենը անվանեց «արյունարբու հրեշ, որը հաճույք էր զգում հազարավոր հայերի ոչնչացումից»:

Առաջին համաշխարհային պատերազմից հետո հաղթական դաշնակիցները նստեցին հաշտության «կլոր սեղանի» շուրջ: Թվում էր, թե նրանք չէին մոռանա իրենց «փոքր դաշնակցին», ինչպես կոչում էին Հայաստանին պատերազմի ժամանակ, սակայն դեպքերն ապացուցեցին հակառակը:

Նանսենը փաստերի ուժով մերկացնում է մեծ տերությունների դիվանագիտական խաղերը Հայկական հարցի շուրջ, երբ նրանք ամեն առիթով օգտագործում էին այն, որպեսզի, ճնշում գործադրելով Թուրքիայի կամ միմյանց վրա, ապահովեին իրենց շահերն ու դիրքերը: Այստեղից էլ նրանց շատ որոշակի գործելակերպը՝ խոսքով ձևանալ բարերար, հանդես գալ մարդկայնության անունից, նույնիսկ բազմապիսի խոստումներ տալ, իսկ գործով կատարել հակառակը՝ հոսեցնել անմեղ մարդկանց արյունը, հարստանալ ու հղփանալ նրանց կյանքի գնով: Հենց այդպես վարվեցին նրանք նաև հայ ժողովրդի հետ, պատերազմի ժամանակ նրան օգտագործեցին որպես թնդանոթի միս, փաստորեն, նպաստեցին հայասպանության թուրքական ծրագրի կենսագործմանը, իսկ հետո էլ բոլորովին «թաղեցին» Հայկական հարցը, անգամ նվազագույն օգնություն ցույց չտվեցին հայ գաղթականներին, որոնք զրկված իրենց հայրենական օջախներից, ցրվել էին աշխարհով մեկ:

Լիովին սահմանազատվելով իմպերիալիստական պետությունների նենգամիտ հաշիվներից՝ Ֆ. Նանսենը ամենայն անկեղծությամբ նվիրվեց հայ գաղթականների վիճակի բարելավմանը: Հայ ժողովրդի պաշտպանության համար նա օգտագործեց իր խոր գիտելիքներն ու անհողդողդ կամքը, համաշխարհային հեղինակությունն ու պաշտոնական դիրքը: Միաժամանակ արտասահմանում շփվեց հայ գործիչների ու օտարերկրյա հայասերների հետ և ձգտեց կազմակերպված հունի մեջ դնել Հայ դատի սատարումը, մասնավորապես՝ օգնությունը հայ գաղթականներին: Երբ 1920թ. հուլիսին Ժնևում կազմավորվեց հայասերների միջազգային լիգան (մարդասիրական կազմակերպություն), Եվրոպայի ու Ամերիկայի մի շարք երկրների առաջադեմ հասարակայնության ներկայացուցիչների հետ միասին նրա մեջ մտավ նաև Նանսենը և ակտիվորեն մասնակցեց նրա հայանպաստ գործունեությանը:

Նանսենը սկզբում մեծ հույսեր էր կապում Ազգերի լիգայի հետ: Ազգերի լիգան բազմիցս զբաղվեց Հայաստանով ու Հայկական հարցով, սակայն ապարդյուն, լավագույն դեպքում ընդունվեցին այսպես կոչված «կարեկցական» ու «սփոփանքի» բանաձևեր: Մինչդեռ Նանսենն ուզում էր հավատալ Ազգերի լիգայի գաղափարին և նույնիսկ նրա միջոցով օգտակար լինել հայ ժողովրդին, իսկ երբ դա չստացվեց, նա լցվեց խոր զայրույթով դեպի «աշխարհի տերերը», վեր կանգնեց նրանց քաղաքական ու տնտեսական հաշվենկատությունից և շարունակեց իր հայանպաստ գործը: 1922թ. սեպտեմբերին Ժնևում Ազգերի լիգային կոչ արեց փրկարար օգնության ձեռք մեկնել աղետյալներին և ապա ինքը Ֆ. Նոել-Բեկերի հետ մեկնեց Կ. Պոլիս, ուր խռնված էին գաղթականների զանգվածները և մասսայաբար մահանում էին քաղցից ու հիվանդություններից: Նա կազմակերպեց պարենային ու բժշկական օգնություն և միաժամանակ համապատասխան լիազորություններով (Հունական կառավարության, Անգլիայի և Ֆրանսիայի համաձայնությամբ) հաղորդակցվեց թուրքական իշխանությունների հետ կարգավորելու թե՛ ռազմագերիների և թե՛ գաղթականների գործերը: Չնայած հնարավորությունների ու միջոցների սղությա՝ Նանսենը մեծ գործ արեց, բայց նա գոհ չէր արվածի չափից: Այդուհանդերձ, նա չհուսահատվեց, այլ հետևողականորեն շարունակեց իր մարդասիրական գործը և ամեն կերպ օժանդակեց հայ գաղթականների դրության բարելավմանը:

Առաջին համաշխարհային պատերազմի ծանր հետևանքներից մեկը գաղթականների հոծ ծանգվածներն էին, որոնք օգնության խիստ կարիք ունեին: Նրանց թիվը հասնում էր 3 միլիոնի: Ընդհանուր գաղթականների զգալի մասը կազմում էին հայ փախստականները, որոնք, մահից մազապուրծ, հայրենի հողից վտարված, մի կերպ ապաստանել էին տարբեր երկրներում և, փաստորեն, քարշ էին տալիս իրենց խղճուկ գոյությունը: Ի տարբերություն Ռուսաստանում և Անդրկովկասում ապաստանած հայ գաղթականների, որոնց վիճակը աստիճանաբար բարելավվում էր, կապիտալիստական աշխարհում ապաստանած արևմտահայ գաղթականները գտնվում էին տնտեսական անապահովության և քաղաքական իրավազրկության մեջ: Նրանք հայրենազուրկ էին և չունեին որևէ պետության քաղաքացիության իրավունք, իրենց հպատակությունը հաստատող համապատասխան փաստաթղթեր, սեփական օջախները վերադառնալու արտոնություն կամ հնարավորություն: Նման իրավիճակը գաղթականների դրությունը դարձնում էր դժոխային: Հարկավոր էր շտապ օգնություն և առաջին հերթին գաղթականներին ապահովել համապատասխան անձնական վկայականներով, որպիսիք չէր ուզում տալ բուրժուական ոչ մի կառավարություն: Այդ Գորդյան հանգույցը Նանսենը լուծեց յուրովի՝ սեփական գրչի հարվածով: Նրա համար պարզ էր, որ աշխարհացրիվ գաղթականների կենտրոնացումը իրենց հայրենիքում դժվար ու բարդ գործ է: Անհրաժեշտ էր դիմել կոնկրետ միջոցառումների՝ արտասահմանում նրանց դրությունը գոնե տանելի դարձնելու համար: Նրա առաջին հոգսերից մեկն էր գաղթականներին համապատասխան փաստաթղթերով ապահովելը, որը նրանց կտար ինչ-որ «քաղաքացիության իրավունք» այս կամ այն երկրում: Դրա համար Նանսենի նախաձեռնությամբ 1922թ. հունիսին Ժնևում հրավիրվեց հատուկ կոնֆերանս, որին մասնակցեցին այն երկրների ներկայացուցիչները, որտեղ գաղթականներ կային: Վերջիններիս համար նա առաջարկեց սահմանել անձնական վկայական, որն ընդունվեց և պատմության մեջ մտավ «Նանսենյան անձնագիր» անունով: Դա բոլորովին նոր երևույթ էր մարդկության

երկարաձիգ տարեգրության մեջ, անձնագրի նոր տեսակ, որի մեջ այս կամ այն երկրի պետական զինանշանի փոխարեն փակցված էր դրոշմանիշ՝ Նանսենի նկարով և «Ազգերի լիգա» գրությամբ: Այդ վկայականը տրվում էր գաղթականներին երկու լեզվով (այն երկրի, որտեղ ապրում կամ ապրել էր և ֆրանսերեն՝ որպես միջազգային լեզու): Ստացողները դառնում էին «Նանսենականներ», որոնց իրավականությունն ընդունեցին 52 երկրների կառավարություններ:

Նանսենյան անձնագիրը կարելի էր ձեռք բերել 5 ֆրանկ մուծելով, ընդ որում, պետք էր այն ամեն տարի վերանորոգել: Դա բերում էր որոշակի եկամուտ, որը Նանսենյան հանձնաժողովն օգտագործում էր առավել վատթար վիճակում գտնվող գաղթականներին օգնելու համար: Իսկ Աշխատանքի միջազգային բյուրոյին կից ստեղծվեց գաղթականներին աշխատանքով ապահովելու մարմին, որն իր մասնաճյուղերն ուներ տարբեր երկրներում: Դրանք պահանջում էին միջոցներ և Նանսենն անձամբ տրամադրեց 3000 ֆունտ՝ «շրջանառու ֆոնդ» ստեղծելու համար:

Արևմտահայ ազգային պատվիրակությունը 1922թ. դիմում է Ազգերի լիգային՝ փաստաթղթերից զուրկ հայ գաղթականներին ապահովել Նանսենյան անձնագրերով: Արևմտահայ ազգային պատվիրակությունը Գ. Նորատունկյանի գլխավորությամբ մեկնում է Ժնև և դիմում Ազգերի լիգային: Ազգերի լիգայի խորհուրդը 1923թ. սեպտեմբերի 25-ին և 28-ին մանրամասն քննարկում է այդ հարցը, և Նանսենն իր ելույթում ամեն կերպ հիմնավորում է հայ գաղթականներին օգնելու, նրանց անձնագրերով ապահովելու անհրաժեշտությունը: Հայ ազգային պատվիրակությունը Խորհրդում բարձրացրեց նաև հիսուն հազար հայ գաղթականներին Հայաստան (Սարդարապատի դաշտ) տեղափոխելու հարցը, բայց այդ ոգով կոնկրետ որոշում չընդունվեց: Պատվիրակության նախագահ Գ. Նորատունկյանը 1923թ. հոկտեմբերի 5-ին նշեց, որ Ազգերի լիգան կատարել է «մեր խնդրանքը» և որոշումներ ընդունել հայ գաղթականների իրավական դրության և հիսուն հազար հոգու Հայաստան ուղարկելու մասին:

Հակառակ հայ ազգայինների դյուրահավատության՝ դաշնակիցները չզբաղվեցին հայ գաղթականների վիճակի բարելավմամբ, բայց չառարկեցին նրանց էլ Նանսենյան անձնագրեր տալ: Ինչն ապահովվեց Նանսենի եռանդուն ջանքերով: Վերջապես, Ազգերի լիգայի Խորհուրդը 1924թ. հունիսի 12-ի որոշմամբ հաստատում է «Նանսենի նախաձեռնությունը՝ ինքնության վկայագրեր տալ հայ գաղթականներին» և դիմում է Ազգերի լիգայի անդամ-պետություններին ու «մյուս շահագրգիռ կառավարություններին» դրականորեն լուծելու այդ հարցը: Սեպտեմբերի 9-ին Նանսենը զեկուցում է, որ բազմաթիվ պետություններ իրենց համաձայնությունն են տվել հայ գաղթականներին ապահովել «ինքնության վկայագրերով»:

Նախատեսվում էր Նանսենյան անձնագրեր տալ բոլոր հայրենազուրկ հայ գաղթականներին, իսկ խիստ կարիքավորները պետք է ստանային ձրի: Բայց այս հարցում էլ առկա էր խզում բուրժուական կառավարությունների խոսքի ու գործի միջև: Նախ՝ նրանք հայերին Նանսենյան անձնագրեր դժվարությամբ էին տալիս, երկրորդ՝ ստացողները ավելի շուտ ունեին սոսկ «մշակ» լինելու իրավունք և հեռացված էին տվյալ երկրի կյանքին ակտիվորեն մասնակցելուց, երրորդ՝ բուրժուական իշխանությունները ցանկացած ժամանակ կարող էին հաշվի չնստել այդ «անձնագրի» հետ կամ հարուցել հազար ու մի խոչընդոտ:

Նանսենյան անձնագրերը զգալիորեն թեթևացրին գաղթականների դրությունը, սակայն «նանսենականները» չէին համարվում լիիրավ քաղաքացիներ: Անշուշտ, գաղթականների այդ վիճակի համար Նանսենը բոլորովին մեղք չուներ: Ընդհակառակը, նա ամեն ինչ արեց նրանց դրությունը թեթևացնելու համար: Դրան էր ծառայում նաև Նանսենյան անձնագիրը, որից օգտվեցին բազմահազար հայ գաղթականներ աշխարհի տարբեր երկրներում:

Ֆ. Նանսենը ոգեշնչվել էր նոր Հայաստանով, ուր եղավ 1925թ.: Նա մի ամբողջ գիրք է նվիրել հայ ժողովրդի պատմությանը («Հայաստանում»), նկարագրել նրա ողբերգական ու հերոսական ուղին, բացահայտել հայ մշակույթի տեղն ու դերը համաշխարհային քաղաքակրթության մեջ, անդրադարձել առավել սուր քաղաքական խնդիրներին, դատապարտել օտարերկրյա զավթիչների դաժան տիրապետությունն ու անլուր հալածանքները, մերկացրել արևմտյան կառավարողների կեղծ խոստումներն ու նենգամիտ դավերը:

Հայ ժողովուրդը միշտ հատուկ գորովանքով է հիշում առաջավոր մարդկության առաքյալին: Հայացք ձգելով Ֆրիտյոֆ Նանսենի կյանքի հերոսական ուղուն և ամփոփելով նրա բազմաբեղուն գործունեության արդյունքները, գիտական խիզախումներն ու մարդասիրական սխրանքները՝ չի կարելի չտեսնել մի բարի ու իմաստուն դյուցազնի, որը մարդկության և՛ ծառան էր, և՛ տիրակալը: Այո՛, Նանսենի կյանքը մարդկային սխրանքի հիմն էր, և նրա անունը մշտապես ջերմացնում է մարդկանց սրտերը, կամրջում ժողովուրդներին…

ԱՐՇԱԿ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՋՈՆ ԷՎԱՆՍՆ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԽՈՍՈՒՄ Է ԻՐ ՓՈՐՁԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երբ ես 1915-ի իրադարձությունները կոչեցի իրենց պատմական ճշգրիտ բառով՝ ցեղասպանությամբ..., գիտեի՝ ինչ եմ անում և ինչ հետևանքներ կարող էր ունենալ իմ կարիերայի համար: Որոշումը ամբողջովին իմն էր, ոչ ոք չի ստիպել ինձ և ես շարունակում եմ մնալ իմ կարծիքին: Դրա պատասխանատվությունը ստանձնել եմ, վճարել գինը և այսօր ազատ եմ...

Բոլորս գիտակցում ենք, որ ճշմարտության հասնելն ու սահմանումներ տալը հեշտ չեն լինում: Ավելի քան 90 տարի առաջ կատարված իրադարձությունները մեկնաբանելիս՝ չպետք է առաջնորդվենք մեր տեսածով, այլ նրանց վկայություններով, ովքեր ականատես են եղել այդ բոլորին, ինչպես Հենրի Մորգենթաուն և հյուպատոս Լեսլի Դեյվիսը: Մենք պետք է առաջնորդվենք դիվանագիտական արխիվների և վերապրածների հիշողությունների փաստական իրողություններով:

Դժբախտաբար, այդ իրողությունը, որ մեզ հստակորեն ասում է, որ 1915-ի կատարվածը ցեղասպանություն էր, ամենուրեք ազատ չէ այսօր պայքարելու կեղծ պնդումների դեմ: Ցեղասպանությունը ժխտելու մի երկրի պաշտոնական քաղաքականությունը խոչընդոտ է ճշմարտության որոնման գործընթացին:

Բայց երբ Հայաստանի դեսպան նշանակվեցի, դեմ-հանդիման եկա Հայոց ցեղասպանության դժվարին խնդրին: Այժմ գիրք եմ գրում մտավոր զարգացման այն ուղու մասին, որ անցել եմ Հայաստանի, հայերի և ցեղասպանության մասին ոչինչ չիմանալուց դեպի այն կետը, երբ ես պարտավորված զգացի բարձրաձայն հակառակվել կառավարության քաղաքականությանը: Հուսով եմ, իմ փորձառությունը կօգնի ուրիշներին, նաև նրանց, ում ազգանունները, ինչպիսին իմը, չեն վերջանում «յան»-ով, հասնելու նման եզրակացության: **(20. 03. 2007թ., «Հայաստանի Հանրապետություն»)**

ՊԱՈՒԼ ՌՈՐԲԱԽ

Գերմանական քաղաքական և հասարակական գործիչ

Գերմանա-հայկական ընկերության նախագահի տեղակալներից: Գրել է մի շարք աշխատություններ՝ նվիրված Մերձավոր Արևելքում Գերմանիայի քաղաքականությանը, որոնցում գնահատել է Արևմտյան Հայաստանի նշանակությունը Գերմանիայի տնտեսական և քաղաքական շահերի տեսանկյունից: «Բաղդադի երկաթուղի» (1902թ.) աշխատության մեջ հիմնավորել է այդ շինության նշանակությունը Մերձավոր և Միջին Արևելքում Գերմանիայի նվաճողական քաղաքականության դիրքերից, նշել Արևմտյան Հայաստանով այն անցկացնելու նպատակահարմարությունը, որը կնպաստեր այդ տարածաշրջանում Գերմանիայի ազդեցության ամրապնդմանը: Ռորբախը գրել է. «Նա ով տիրում է Հայաստանին, անմիջականորեն տիրում է ինչպես Փոքր Ասիայի արևելյան մասին, այնպես էլ Միջագետքին» (“Âîéíà è ãåðìàíñêàÿ ïîëèòèêà”, 1915, ñ. 63): Ընդգծելով այն կարևոր նշանակությունը, որ ուներ Հայաստանը Օսմանյան կայսրության համար, Ռորբախը շեշտել է, որ «Թուրքիան թե քաղաքական և թե ռազմական առումով կկորցնի իր կենսունակությունը հենց որ կորցնի Հայաստանը, հատկապես եթե այն կորցնի հօգուտ Ռուսաստանի» (նույն տեղում, էջ 62): **Ելնելով դրանից՝ Ռորբախը դեմ էր Արևմտյան Հայաստանի անկախությանը, պաշտպանել է այդտեղից հայերի տեղահանության մասին Թուրքիայի իշխող շրջանների ծրագրերը: Նշել է, որ «Արևմտյան Հայաստանից պետք է դուրս անել բնիկ հայերին», իսկ նրանց տեղում բնակեցնել Թրակիայից և Ռուսաստանից բերված մահմեդականների: Եթե այդպես վարվեին, ապա Հայաստանը մեկ հարվածով կպոկվեր Ռուսաստանի ձեռքից»:** Ռորբախը առաջարկել է արևմտահայերին գաղթեցնել Միջագետք, ինչը, նրա կարծիքով, կնպաստեր «Ճանապարհի տնտեսական զարգացմանը»:

Ս. ՍՏԵՓԱՆՅԱՆ

Գրկ. Die Bagdadbahn, B., 1902; Âîéíà è âåðìàíñêàÿ ïîëèòèêà, Ì., 1915.

ՀԱՅՕՑ ՆՅՈՒՐՆԲԵՐԳԸ ՄՂՄՂՄԲ ԻՐՂԳՈՐԾԵՑԻՆ ՀԱՅԵՐԸ

Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի պարտությունից հետո երիտթուրք պարագլուխները գերմանական սուզանավով փախան Գերմանիա: 1918թ. դեկտեմբերի 16-ին Օսմանյան կայսրությունը հատուկ դեկրետով դատավորություն սկսեց «Միություն և առաջադիմություն» կուսակցության ղեկավարության դեմ: Թալեաթը, Էնվերը, Ջեմալը, Սայիդ Հալիմը, Նազըմը, Շաքիրը, Ջեմալ Ազմին և մյուսները մեղադրվում էին Օսմանյան կայսրությանը պատերազմի մեջ ներքաշելու, քրիստոնյա (հայ) հպատակների ջարդի և տեղահանության կազմակերպման մեջ: Դատավարությունը տևեց մոտ երկու ամիս՝ 1919-ի ապրիլի 28-ից հունիսի 26-ը: Անգլիական հրամանատարությունը 77 մեղադրյալների տեղափոխեց Մալթա կղզի, որոնց հետագայում փոխանակեց անգլիացի ռազմագերիների հետ: Դատավճիռը հրապարակվեց հուլիսի 5-ին. 31 մեղադրյալներից 4-ը (Թալեաթը, Էնվերը, Նազըմը և Ջեմալը) հեռակա կարգով դատապարտվեցին մահվան, մյուսները՝ տարբեր տարիների բանտարկության: Մալթայում ներկայվածները չհիշատակվեցին անգամ դատավճռի մեջ: Իթթիհատի շրջանային 36 քարտուղարների նկատմամբ կայացվեց առանձին դատավարություն, որի դատավճիռը հրապարակվեց 1920-ի հունվարի 8-ին: 3 հոգի դատապարտվեց 10, մնացյալը՝ տարբեր տարիների բանտարկության: Փաստորեն, այս ամենը կեղծիք էր: Ուստի, հայ քաղաքական շրջանակները ստիպված էին իրենք պատժել թուրք ոճրագործներին: Միաժամանակ անհրաժեշտ էր մեծ պետությունների հասարակական-քաղաքական շրջաններին բացահայտել հայկական ջարդերում ունեցած այդ երկրների մեղսակցությունը: Հայերը դժգոհ էին նաև Փարիզի հաշտության կոնֆերանսի որոշումներից:

Ահա այսպես, հայերը որոշեցին իրենք իրագործել արդարադատությունը: Հին հունական դիցաբանության վրեժի աստվածուհի Նեմեսիսի անունով էր կոչվում թուրք դահիճներին պատժելու գործողությունը: Նախատեսվում էր պատժել երիտթուրքական «Միություն և առաջադիմություն» («Իթթիհատ վե թերաքե») կուսակցության ղեկավարությունը՝ 1915թ. հայերի ցեղասպանության կազմակերպիչներին: **(Տե՛ս նաև էջ 19-ը)**

ՀԱԱԳԱՅԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԴԱՏԵԼՈՒ ԲՈՒՇԻՆ ԵՎ ԲԼԵԵՐԻՆ

Հաագայի Միջազգային քրեական դատարանը պատրաստակամություն է հայտնել քննելու Բուշի և Բլեների դերը պատերազմական հանցագործություններում:

Ինչպես հայտարարել է միջազգային դատարանի գլխավոր դատախազ Լուիս Մոներո-Օկամպոն, եթե արաբական երկրները, առաջին հերթին Իրաքը, դիմեն դատարան համապատասխան հայցով, ապա Հաագայի տրիբունալը կզբաղվի դրանց հետաքննությամբ:

Այդպիսի գործերի հետաքննության հեռանկարը գլխավոր դատախազը ընկալում է ոգևորությամբ և պատասխանելով այն հարցին, թե կարող է ինքը պատկերացնել, որ պատերազմական հանցագործությունների մեղադրանքով դատապարտյալի աթոռին կարող են հայտնվել Թոնի Բլեները և Ջորջ Բուշը՝ Մոներո-Օկամպոն ասել է. «Անշուշտ, այդպիսի իրադրությունը լիովին հնարավոր է»:

Նա նշել է, որ արդեն իսկ քննարկել է Իրաքի կողմից համապատասխան հայցի ներկայացումը «Արևմուտքի երկրների դեմ»: Գլխավոր դատախազի խոսքերով, իրաքյան կողմը հայտարարել է, որ «ակտիվ ուսումնասիրում է» այդ հնարավորությունը: Միաժամանակ Մոներո-Օկամպոն կոչ է արել արաբական երկրներին «առավել ակտիվ օգտագործել դատարանի հնարավորությունները» իրենց կողմնորոշումները արտահայտելու նպատակով:

Միջազգային քրեական դատարանը ստեղծվել է 1998 թվականի ամռանը, սկսել է գործել 2002 թվականի կեսերից: Նա սեփական դատական նախաձեռնությունների իրավունք չունի և քննարկում է միայն ազգային պետությունների հայցերը, ինչպես նաև կատարում ՄԱԿ-ի որոշումները՝ հարուցել միջազգային քրեական գործեր:

20. 03. 2007, Ñàéò “Îáîçðåâàòåëü”

«ՆԵՄԵՍԻՍԸ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ

«Մենք կսպասենք ՎՐԵԺԻ դատաստանին և կհավատանք, որ մեր տառապանքեն հայկական նոր փոթորիկը պետք է պայթի, և որ այդ վերջինեն պիտի ծնին հսկաները, հայ կամքի վրեժխնդիրները, տիտան զորավարները՝ մահացու գիտություններով սպառազեն»:

Գարեգին Նժդեհ

Արշավիր Շիրակյան

Արշավիր Շիրակյանը ծնվել է 1900-ին, Պոլսում: Դեռ մանուկ հասակից նա հայրական տանը տեսել է հեղափոխական դեմքերի, ինչն էլ պատճառ է հանդիսացել՝ համալրելու ՀՅԴ շարքերը: Արշավիրը հասակ առավ հայ հեղափոխական մտավորականության լավագույն ներկայացուցիչների մոտ, որոնք վճռորոշ ազդեցություն թողեցին նրա հոգեկան ու գաղափարական ձևավորման վրա: Նա իր հեղափոխական գործունեությունը սկսել որպես նամակատար-թղթատար՝ սուրհանդակ, ապա զինամթերք փոխադրող: 1917-18թթ. և զինադադարից հետո զենք փոխադրելու գաղտնի աշխատանքի է լծվում: Ապա իրեն է վստահվում հայանուն դավաճան ու մատնիչ Վահե Իսհանի ահաբեկումը Պոլսում: Հետագայում իր թեկնածությունն է առաջարկում մասնակցելու եղեռնը կազմակերպող և իրականացնող երիտթուրքերի հանցագործ ղեկավարների ահաբեկման գործին:

1921-ի դեկտեմբերի 5-ին Հռոմում Արշավիրը նետվում է ընթացող կառքն ու ահաբեկում թուրք վեզիր Սայիդ Հալիմին՝ արևմտահայության բնաջնջման ծրագիրը ստորագրողին:

1922-ի ապրիլի 17-ին (Սբ. Զատիկի օրը), Բեռլինում՝ Թալեաթ փաշայի բնակարանի առջև, Արշավիր Շիրակյանը Արամ Երկանյանի հետ գնդակահարեցին «Թեշքիլաթ-ը մահսուսե» կազմակերպության հիմնադիր, «Թուրքիան՝ թուրքերին» գաղափարի ամենամոլեռանդ հեղինակ Բեհաէդդին Շաքիրին ու Տրապիզոնի նախկին նահանգապետ Ջեմալ Ազմիին: Առաջինը հղացել էր հայ մանուկներին Սև ծովում խեղդելու հրեշային ծրագիրը, իսկ երկրորդը՝ իրագործել: Նրանք եկել էին մխիթարելու մեկ տարի առաջ Բեռլինում սպանված թուրք դահիճ Թալեաթի կնոջը: Ահաբեկումը կատարվեց կեսգիշերին, Թալեաթի կնոջ սարսափահար աչքերի առաջ...:

Ժողովրդական վրիժառուն 1923-ին հաստատվել է ԱՄՆ-ում, որտեղ ապրել ու գործել է մինչև մահը՝ 1973 թվականը:

«ՀԱՅԿԱԿԱՆ ՆԻՒՐԵՄՊԵՐԿԸ»

(հատուած)

Եւ յանկարծ վերէն լսուեցաւ կառքի մը դղրդիւնը: Մէկէն մարմնէս անծանօթ սարսուռ մը անցաւ, երբ տեսայ հսկայ ձիերը, որոնց բաշերը հովէն կ'ալեծփէին: Կառքին մէջն էր Սայիտ Հալիմը փաշան՝ իր թիկնապահին հետ: Փողոցին միւս ծայրը նայեցայ. Մ. դեռ հասած չէր: Վայրկեանապէս «ցտեսութիւն» ըսի Հելենային, պատուիրելով որ շուտ ներս մտնէ, քանի որ «հայրս» կու գար...

Անմիջապէս քայլեցի միւս մայթը, որպէսզի լաւագոյն դիրքով մը ահաբեկումը կատարեմ, բայց քանի մը ակնթարթ ուշացած ըլլալուս, քիչ մնաց ձիերու տակ մնայի. ձեռքս վերցուցի, բռունցքս ցցած. ձիերը խրտչեցան եւ ծառացան: Այդ իրարանցումին մէջ, արագ ոստումով մը անցայ եւ ցատկեցի կառքին վրայ, կոխելով ոտնատեղին: Մէկ ձեռքով բռնեցի կառքին յենարանը, քիչ մը երերացի, բայց հաւասարակշռութիւնս կրցայ պահել: Մինչ թիկնապահը կառապանին կը նայէր ու բաներ մը կ'ըսեր, երեւի հասկանալու համար ձիերուն խրտչիլը, Սայիտ Հալիմ փաշային աչքերը հանդիպեցան աչքերուս:

«Երէն»,- ըսաւ թիկնապահին:

Այս եղաւ Սատրաղամին վերջին բառը: Աչքերը սարսափով լեցուն էին, երբ ատրճանակիս փողը ուղղեցի աջ քունքին եւ փաշան նստած տեղէն տապալեցաւ կառքին մէջ, գլուխը իմ կողմս՝ գրեթե ոտքերուս տակ:

Կառքը դեռ կ'արշաւէր:

Թէվֆիք Ազմին, առաջին շփոթէն սթափած, ատրճանակ մը հանեց ու կը պատրաստուէր կրակել, երբ ատրճանակիս փողը անոր ալ ճակտին ուղղելով, գոռացի թուրքերենով.

- Աթ աշաղը, կեպերթիրիրըմ (նետէ զէնքդ, կը սատկեցնեմ) ...

Հնազանդեցաւ եւ ատրճանակը կառքէն դուրս նետեց ահաբեկ դէմքով: Ատրճանակիս կոթով այս անգամ սկսայ հարուածել կառապանին կռնակին, պոռալով իտալերէն. «Ասրեթա, ասրեթա» (Կեցի՛ր, կեցի՛ր): Խեղճ կառապանը վախէն կը դողար եւ յուսահատական ճիչերով զիս վկայութեան կը կանչէ՝ ըսել ուզելով.

- Տե՛ս, կեցնել կ'ուզեմ, բայց ձիերը չեն կենար:

Կը վերյիշեմ տակաւին. տարօրինակ ու անհաւատալի տեսարան մըն էր: Ձիերուն խելակորոյս վազքը, փաշային կախ ինկած գլուխը, որ կը ճօճէր կառքէն դուրս, սարսափահար թիկնապահը, որ ձեռքերը վեր՝ նստած կը մնար, մոմի պէս խուճապահար կառապանը եւ ես՝ մէկ ոտքս կոխելիք տեղին վրայ եւ միւսը ներս ու ատրճանակը ձեռքս: Ուժգին հովէն վերարկուս կը ծածկէր կռնակիս վրայ, հսկայ թռչունի մը ձեւը տալով ինծի: Այս պատկերը, որ կ'ամբողջացնէր դէմքիս իջած սեւ գլխարկս, անցորդներէն ոմանց երեւակայութիւնը գրգռած էր եւ հետագային ոստիկանական հարցաքննութեան ընթացքին, առիթ տուած էր անոնց ըսելու, թէ սպանողը ուրուական մըն էր՝ ֆանթօմա...

Նյութերը տպագրության պատրաստեց
ՀԱԿՈԲ ՄԱՆՋԱՆԸ

✒Մեծ են այն հերոսները, որոնց սխրանքների մասին լսելիս ոչ ոք չի հավատում, որ հնարավոր են նման քաջագործություններ:

✒Ես քեզ չեմ մոռացել Հայ ֆիդայի, իմ երակներում միշտ էլ եռալու է քո յասումից հրագույն դարձած արյունը: Քո վրեժը՝ իմ վրեժն է:

ՆԱՐԵԿ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ. ՆԱՀԱՏԱԿՆԵՐ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ

Երկրորդ աշխարհամարտից հետո աշխարհում Հայոց ցեղասպանության և սփյուռքահայերի շուրջ ձևավորվեց, մեղմ ասած, տարօրինակ մթնոլորտ: Պատճառները թե ներազգային էին և թե միջազգային: Աշխարհի բաժանվելը երկու հակադիր ճամբարների մասնատեց նաև Սփյուռքը, մասնավորապես, նրա քաղաքական ուժերին: Որոշ վերապահումներով Հնչակյան և Ռամկավար կուսակցությունները վարում էին Խորհրդային Միության հետ կապերը զարգացնելու քաղաքականություն, իսկ ՀՅԴ-ն դեմ էր դրան, ինչին նպաստեց նաև այն, որ ցեղասպանության զոհը՝ Սփյուռքը, գործնականում մերժվում էր ոչ միայն Թուրքիայի, այլև Խորհրդային Միության կողմից:

Ընդ որում, Սփյուռքը միատարր կարգավիճակ չունի: Եթե Մերձավոր Արևելքում մահմեդական միջավայրը սփյուռքահայերին մղեց կազմակերպվելու, ազգային դիմագիծը պահպանելու, ապա Եվրոպայում և Ամերիկայում պատկերը բոլորովին այլ էր: «Սպիտակ ջարդը» մաշում, հյուծում էր հայկական գաղթօջախները:

Իհարկե, Սփյուռքին ծանր կացության մեջ էր դնում նաև այն, որ Մոսկվայի հարկադրանքով Խորհրդային Հայաստանը հրաժարվեց Արևմտյան Հայաստանից: Երկրորդ աշխարհամարտից հետո ԽՍՀՄ կառավարությունը բացեիբաց հայտարարեց, թե Թուրքիայից տարածքային պահանջներ չունի, ինչը նշանակում էր, որ Խորհրդային Հայաստանը պարտադրված էր հրաժարվել Հայկական հարցից և իր պատմական հայրենիքի տարածքների 80%-ից: Որն իր հերթին հարկադրում էր Սփյուռքին վերապահումներով վերաբերվել հիմնահարցին, հայտնվել անորոշ կացության մեջ:

Այդ էր պատճառներից մեկը, որ աշխարհամարտից հետո Մերձավոր Արևելքում ծավալված շարժումները անակնկալի բերեցին Սփյուռքին, նրա քաղաքական կուսակցություններին, միանգամայն բացորոշ դարձրեցին իրողությունը, որ ավանդական քաղաքականությունը, գործունեության եղանակներն այլևս վնասակար ու վտանգավոր էին հայության համար, որ ազգային խնդիրների լուծումը պահանջում է ոչ թե մուրացկանություն, դատարկաբանություն, շաղակրատանք, այլ՝ միասնություն, պայքարի կամք ու գործելու պատրաստակամություն: Դժբախտաբար ավանդական կուսակցությունները չընկալեցին նոր ժամանակների հրամայականը, մնացին անորոշության ճիրաններում, իսկ հայության դուռը թակում էր Մեծ եղեռնի 50-րդ տարելիցը, որը եկավ ձևավորելու նոր իրավիճակ Հայկական հարցի շուրջ, ինչին թե՛ հայաստանաբնակ հայերը և թե՛ սփյուռքահայությունը բացարձակապես պատրաստ չէին:

Ահա այդ «անպատրաստ անորոշությունը» ծնեց անհատական բռնի գործունեություն, ծայրահեղություն:

Երբ «Վան» գործողության հերոսներից Վ. Սիսլյանին ասում են, թե իրենց գործունեությունը գնահատվում է որպես ահաբեկչություն, պատասխանը լինում է. «Թերորը ակտ մըն է, որը կը կատարուի խմբակի կամ անհատի մը կողմէ, իսկ հասարակութիւնը ան չի ընդունիր: Մինչդեռ մեր գործողութիւնը կը հովանաւորէր հասարակութիւնը»[1]:

Վ. Սիսլյանն իրավացի էր: Երբ նրան ու իր երեք ընկերներին բանտ նետեցին, Փարիզում բազմամարդ հանրահավաքներ տեղի ունեցան: Հայկական եկեղեցու մերձակայքում կայացած հանրահավաքում ելույթ ունեցավ նաև նահատակված Եղիա Քեշիշյանի հայրը: Նա իր հիացմունքն արտահայտեց «Վան» գործողությունն իրականացնողներին: Հոկտեմբերի 1-ին և 24-ին ավելի մարդաշատ հանրահավաքներ կայացան ձերբակալված տղաներին քաղաքական ապաստան տալու պահանջով: Դրանք կրկնվեցին նոյեմբերի 19-ին: Այս զանգվածային աջակցությունն ու Չորսի հացադուլը ֆրանսիական կառավարությանը հարկադրեցին հայտարարելու, որ բավարարում է առաջադրված պահանջը: Սակայն այդ նույն օրերին ֆրանսիական համապատասխան ծառայությունները ձերբակալեցին Մոնթե Մելքոնյանին, ինչը իշխանություններ դարձրին պատրվակ ու հետ կանգնեցին տված խոստումից:

Կրկնում ենք, ով ազատագրական նպատակադրումներով կամ անարդարության դեմ հարկադրված է կռվել ահաբեկչական եղանակներով, ահաբեկիչ չէ, այլ՝ ազատագրական պայքարի մարտիկ: Նաև սխալ է բռնարարքների մի ամբողջ շարք եղանակներ, որոնք ունեն միմյանցից միանգամայն հակադիր առաքելություն ու հասարակական հնչեղություն, հավաքել մի բառի տակ՝ **ահաբեկչություն՝ տեռոր:**

Հարկ է նկատի ունենալ նաև հետևյալ հանգամանքները՝ աշխարհում հաստատված է մի չգրված օրենք, ահաբեկչությունը թիվ 1 սպառնալիք հռչակած գերտերություններն իրենք են հովանավորում այլևայլ ահաբեկչական կազմակերպությունների: Մյուս կողմից՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված հանցագործություն է, դրա հեղինակներին պատժելու անհրաժեշտությունն ամրագրված է միջազգային իրավունքով, մինչդեռ ցեղասպանություն իրականացրած Թուրքիան մինչ օրս ոչ միայն չի ճանաչել ու դատապարտել հայոց զանգվածային ջարդերն ու դրանց կազմակերպիչներին, այլև կատարվածը ներկայացնում է որպես ի շահ Թուրքիայի իրականացված հերոսական բնույթի միջոցառում, որ «եթե որևէ ժողովրդի պատմության այս կամ այն հանգրվանում օտարի տիրապետության դեմ բռնություն, այդ թվում նաև ահաբեկչություն, իրականացրած անհատներին նույնացնենք ժամանակակից» բոլոր ու ամեն տեսակի ահաբեկիչների հետ և նրանց մեղադրանքներ ներկայացնենք, ապա նշանակում է՝ պահանջել ժողովուրդներից ոտի տակ տալ իրենց շատ ու շատ սրբություններ:

Ու նաև անհրաժեշտ է, անպայման, նկատի ունենալ «հայկական ահաբեկչության» բնույթը. այն պատմությանը հայտնի ամենափոքր արյունահեղություն պարունակողն է: Ութ տարում սպանվել է 40-45 մարդ, ընդ որում, այսպես կոչված «ահաբեկիչների» կորուստներն ավելի մեծ էին, քան բռնության ենթարկվածներինը: Ցինիզմ ասել, թե նման ինչ որ բան՝ 1,5 միլիոն մարդու սպանության շուրջ լռության պատ են կառուցել, իսկ մի քանի տասնյակի համար համաշխարհային աղմուկ են բարձրացնում:

«Հայկական ահաբեկչությունը,- գրում է լեհական «Վիդնոկրենգի» ամսագիրը իր 1981թ. թիվ 2-ում,- առանձնահատուկ երևույթ է միջազգային ահաբեկչության համակարգում: Ահաբեկչական գործողությունները կատարվում են արտասահմանում, առանց տարածքային սահմանափակման՝ ամենատարբեր մայրցամաքներում: Դա պայքար չէ ստեղծելու սեփական պետականություն և չունի նաև հասարակական կամ գաղափարախոսական այլևայլ նպատակ: Դա բողոքի ծայրահեղ եղանակ է ամբողջ աշխարհի կողմից արհամարհական վերաբերմունքի դեմ՝ ազգի վրեժխնդրություն, առաջին հերթին բարոյական արդարացի իրավունքի հանդեպ... Առանց միջազգային կազմակերպությունների կողմից հանցագործության իրավաբանական ճանաչման... խոսք լինել չի կարող որևէ փոխհատուցում ստանալու մասին...»:

Ամերիկյան հրապարակախոսներից մեկը հայկական ահաբեկչությունն անվանեց «պատերազմ առանց ռազմաճակատի»: Քանի որ հարձակումներ տեղի էին ունենում ամենատարբեր քաղաքներում ու երկրներում, առաջացնում համընդհանուր, եթե ոչ անհանգստություն, ապա անպայման հետաքրքրություն: Կ. Գուրսկին տագնապ հնչեցրեց, թե «վտանգը շատ լուրջ է, իսկ ահաբեկչությունը թուրքական դիվանագետների դեմ գնալով աճում է»:

Այո, Հայ գաղտնի բանակի տղաների գործողությունները ոչ թե արյունահեղության ծավալներով, այլ իրենց բնույթով ցնցեցին լայն հասարակությանը, որովհետև դրանց նպատակը ոչ թե սպանելն էր, այլ որպես հակաթուրք քարոզչության բաղադրիչ հանդես գալը:

Հարկ է նաև անպայման նկատի ունենալ, որ «հայկական ահաբեկչությունը» մյուս ահաբեկչություններից տարբերվում է նաև նրանով, որ միտված չէ ստեղծելու անկայունություն և չի հետապնդում գաղափարախոսական ինչ-որ գծի առաջ մղում, իրականացում: Նրա տատմերը թուրքական կառավարության չկամությունն ու համառությունն են, որ օգտվելով պետությունների թողտվությունից շարունակում է մերժել Հայոց ցեղասպանության իրողությունը: «Ան խըզում մըն է նաև նախորդ սերունդներու անկարողութենեն: Երիտասարդ սերունդները կապրին ժամանակաշրջան մը, յատկանշուող ինքնորոշման եւ մարդկային իրավանց հրամայականներով, ինչպես նաեւ քարոզչական ահաբեկչութեան ներկայութեամբ, եւ չեն ընդունիր Հայկական ցեղասպանութիւնը իբրեւ «պատմական ճակատագիր»[2]:

Բռնի գործողությունները նպատակ ունեին վերակենդանացնելու հոգեվարք ապրող Հայկական հարցը: Եվ որ սպանում էին թուրք դիվանագետներին, ասալայականները պատճառաբանում էին, թե նրանք ծառայում էին ցեղասպան վարչակարգին, թե իրենց ահաբեկիչ գործողությունները միաժամանակ ապտակ էին միջազգային իրավունքի երեսին, որին մեկ դար ժամանակը բավական չեղավ տալու կատարվածի իրավական գնահատականը:

Հայը, որ աշխարհամասում էլ որ ապրելիս լիներ, փարվեց ՀԱՀԳ Բանակի մարտիկներին ոչ թե նրա համար, որ հավանություն էր տալիս բռնարարքներին, մանավանդ, ահաբեկչությանը, ո՛չ և հազար անգամ ո՛չ: Նա միշտ դեմ է եղել բռնությանը: Բայց կառչեց նրանց, ինչպես խեղդվողն է ձեռք ձգում փրկարարին: Նրան բռնության մղեց փակուղին, անելանելի վիճակը: Նա ուշադրության, այո՛, մարդկային սովորական ուշադրության կարիք ուներ և զարմանում ու զայրանում էր, որ իրեն քաղաքակիրթ համարող աշխարհը հանդես է գալիս միջնադարյան ավատատիրական մասնատվածությանը բնորոշ կեցվածքով: Դա ոչ այնքան գիտակցված, որքան ենթագիտակցությունից բխող քայլ էր Թուրքիայի տմարդի գոռոզությունը խորտակելու և հարկադրելու նրան պաշտպանվելու, ապացուցելու, որ մարդու իրավունք ասածը բովանդակությունից զուրկ հաշմանդամ չէ, այլ ներքին վիթխարի ուժ ունեցող ճշմարտություն: Բացի բիրտ գործողություններից ուրիշ ոչինչ չէր կարող անցյալի փոշիների տակից դուրս քաշել աշխարհի հիշողությունից անհայտացող Հայկական հարցը:

Արաբական «Ալ-Մուստակբալը» 1984թ. մայիսի 12-ին գրում է. «Զարմանալի պատահականությամբ դեպի արաբական աշխարհ թուրքերի շարժմանը զուգընթաց ուժեղացավ նրանց դեմ հայերի խստությունները ու նաև տեղի ունեցավ հայկական շարժման միավորում...»:

Թերթը նաև նկատում է. «Ճիշտ է, որ հայերն անցած 50 տարում պահպանել են իրենց մշակութային ու կրոնական միասնությունը... բայց քաղաքական միասնությունը պահպանել չկարողացան... Հայկական հին կուսակցությունները շարունակեցին իրենց ավանդական վեճերը և այդպես էլ չկարողացան ընդհանուր քաղաքական գիծ մշակել:

Երբ ՀԱՀԳԲ-ը սկսեց իր գործունեությունը,- շարունակում է թերթը,- Եվրոպայում Հայկական հարցի մասին ոչ լսել էին և ոչ էլ մտածել»:

ՍՏԵՓԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

1. «Ժողովրդային պայքար», 1990, հուլիս-օգոստոս-սեպտեմբեր:

2. Շալեան Ժ., Տարի մը յատկանշուած հակաթիւրք ահաբեկչութեամբ: Տես՝ «Ազդակ», 1988, հ. 1:

«ԿՈՃՈՌ» ՋՈԿԱՏ

«Կոճոռ» ջոկատը ձևավորվել է 1989թ. նոյեմբերին: Ռուբիկ Գալստյան (Չաուշ), Վաչագան Գալստյան, Լաերտ Ղավալյան, Սամվել Գաբրիելյան, Մերուժան Խաչատրյան, Սլավիկ Նիկողոսյան, Գրիգոր Ստեփանյան, Ժաննա Մելքոնյան, ահա այս և էլի շատ-շատ նվիրյալներ են ընդգրկված եղել «Կոճոռ»-ում: 1990թ. հունվարի 14-ին, ընդգրկվելով ՀՀ Երկրապահ կամավորականների միության մեջ, հունվարի 16-ին Սասուն Միքայելյանի հրամանատարությամբ մասնակցում է Երասխավանի ընդհարումներին: 1990թ. փետրվարի 10-ին Չաուշի և Միշա Պետրոսյանի հրամանատարությամբ ջոկատը մեկնում է Նոյեմբերյանի Բերդավան գյուղը թշնամու ոտնձգություններից պաշտպանելու: Ջոկատի կեսը մնում է Բերդավանում, իսկ մնացածներն օգնության են հասնում Շամշադինի (այժմ՝ Տավուշ) Այգեպար գյուղի պաշտպանությանը մասնակցող «Ալաշկերտ» ջոկատին: Հայ ազատամարտիկները զինված էին որսորդական հրացաններով: Ունեին նվեր ստացած մի կարաբին, որին երեխայի պես փայփայում էին: Դիրքային կռիվը տևեց մինչև ուշ երեկո: Կռվի թեժ պահին տղաները իրար հույս էին տալիս, քաջալերում և անգամ կատակում: Ընկերներին օգնության հասավ Գառնիկ Թորոսյանը և կես լուրջ, կես կատակ բացականչեց. «Տղաներ, չվախենաք, մեր Գագոյի հայրը՝ էստոն, գյուղում է»: Երեկոյան, երբ իջան շտաբ, տեսան, որ էստոյի ճակատն արյունոտ էր. դարանակալած թշնամու արձակած գնդակը կպել էր քարին, փոխել էր ուղղությունը և ծլեպի հետ «համբուրել էր» նրա ճակատը: Զինամթերքի պակասն իրեն խիստ զգացնել էր տալիս: Չաուշը հեռախոսով Հրազդանից օգնություն է խնդրում, որը ստանում է գիշերով, չնչին քանակությամբ:

Ռուբիկ Գալստյան (Չաուշ)

Ռուբիկ Գալստյան (Չաուշ), Վաչիկ Գալստյան, Էդիկ Դանոյան

Շուտով Միշա Պետրոսյանը ընդգրկվում է Սլավիկ Ժամհարյանի վաշտում, իսկ «Կոճոռ»-ի հրամանատարությունը ստանձնում է Չաուշը և մեկնում Ոսկեպար՝ մասնակցելու Կոթի գյուղի պաշտպանական մարտերին: Երբ խորհրդային բանակի օգնությամբ ազերիները Ոսկեպարն առան օղակի մեջ, մերոնք մեծաթիվ զոհեր և վիրավորներ տվեցին, այդ թվում նաև Նոյեմբերյանի ներքին գործերի բաժնի 13 աշխատակիցներ, որոնք հերոսաբար դիմադրել էին մինչև ատամները զինված թշնամուն:

Լուր ստացվեց, որ Շահումյանից Վարդենիս վերադարձող ուղղաթիռը խփվել է ազերիների կողմից և ընկել թշնամու տարածքում: «Սպիտակ» փրկարարական ջոկատի տղաների հետ դեպքի վայր մեկնեցին «Կոճոռ»-ից Չաուշն ու Սմբատը, Վարդենիսի ջոկատից՝ Արսենը, Աստվածատուր Պետրոսյանը, Սամվել Խաչատրյանը և ուրիշներ: Ուղղաթիռը վայրէջք կատարեց խփված ուղղաթիռից հարյուր մետր հեռավորության վրա: Այն ընկել էր Քարվաճառի տարածքում՝ Օմարի լեռնանցքից մի փոքր այն կողմ: Առանց ժամանակ կորցնելու սկսեցին աշխատանքները. դիրքավորվեցին, հեռվից լսվում էր թշնամու գնդակների սուլոցը: Ուղղաթիռից տասը-քսան մետր հեռավորության վրա գազանների համար կարծես շաղ էին տվել մսակտորներ՝ վառված մարդու ձեռքեր, ոտքեր, մարմնի մասեր: Խանճահոտը ցնցնում էր: Մեծ ճիգերի գնով հավաքեցին դիակները, մարմնի մասերը և սավաններով տեղափոխեցին ուղղաթիռ: Կային նաև վիրավորներ, որոնք, ամբողջ գիշեր մնալով, տանջամահ էին եղել: Մինչև երեկո կարողացան ավարտել այդ ծանր պարտականությունը և վերադարձան Վարդենիս:

1991թ. «Կոճոռ»-ը մի քանի անգամ ևս մասնակցեց Նոյեմբերյանի շրջանի սահմանամերձ գյուղերի պաշտպանական մարտերին, որից հետո տղաներից մի քանիսը Սասուն Միքայելյանի հետ մեկնեցին Արցախ, մասնակցեցին Հաթերքի մարտերին: 1992թ. փետրվարին նրանք մասնակցեցին նաև Խոջալուի ազատագրմանը:

Մայիսի 7-ին «26-ի դիրքերից» սկսվեց հարձակումը թշնամու կրակակետերի վրա, որով Շուշիի ազատագրման սկիզբը դրվեց: Շուշիի ուղղությամբ հարձակման չորս հիմնական խմբավորումներից մեկի հրամանատարը Յուրան էր: Ապրիլի 29-ին ծրագրված էր գրավել 12-րդ բարձունքը, որը դժվարամատչելի էր: Առավոտյան ժամը չորսին յոթանասուն ազատամարտիկներ՝ Սուրիկ Սարգսյանի ու Ռոմիկ Գալարյանի հրամանատարությամբ, շարժվեցին առաջ:

Մեր ջոկատների ճնշմանը չդիմանալով՝ թշնամին ստիպված էր նահանջել: Ղարաբաղի 8-րդ, 9-րդ վաշտերը մնում են 12-րդ դիրքերում, իսկ մնացածները շարժվում են Քյուալարի ուղղությամբ: Ստանալով լրացուցիչ ուժեր՝ թշնամին 12-րդ, 3-րդ և 1-ին դիրքերի ուղղությամբ հարձակման է անցնում: Մեր տղաները պահեստային ուժեր չունեին և գնալով վիճակը ծանրանում էր: Զինամթերքը պակասում էր, մարտադաշտում վիրավորներ շատ կային, զոհեր էլ: Մեր մարտիկներն անկոտրում նվիրվածությամբ կատարեցին իրենց սրբազան պարտքը:

Մայիսի 13-ին Լաչինլար-Խայֆալար ուղղությամբ անզիջում ու դաժան մարտեր սկսվեցին: Անընդհատ տեղացող անձրևը, ցեխը, սննդի և զինամթերքի պակասը դժվարացնում էին ջոկատների առաջխաղացումը: Լաչինլար գյուղից տեղեկություններ ստանալով՝ Չաուշը իր վեց ընկերներով գնում է դեպի վառվող դպրոցը: Բակում կանգնած «Ուազ» ավտոմեքենայի թափքում նստած էին Սևանի ջոկատի էդոն, Վաղոն, Ֆիդելը: Չաուշը բարձրացավ թափք և չհասցրեց տեղավորվել, երբ տեղի ունեցավ պայթյուն: Պայթյունի ուժգնությունից բեռնատարի թափքում գտնվող վեց ազատամարտիկ ծանր վիրավորվեցին: Չաուշը թավալգլոր ընկավ գետնին ու ինքնաբերաբար կանգնեց՝ չգիտակցելով, թե իր հետ ինչ է կատարվում: Ավելի ուշ զգաց, որ աջ ձեռքն իրեն չէր ենթարկվում: Վաղոյի աչքը բեկորի հարվածից դուրս էր թռել: Նա թաշկինակով բռնել էր վերքը և ձայն չէր հանում, հասկանալով, որ մյուսների վիճակը ավելի ծանր էր: Ամենածանր վիճակում Սերյոժա Պետրոսյանն էր՝ Ֆիդելը: Վնասվել էր նրա աճուկի մասում գտնվող արյունատար անոթը: Տեսնելով Ֆիդելի վիճակը՝ Չաուշը գոռաց: Նրա անմարդկային գոռոցից Ֆիդելն ուշքի եկավ, սակայն արնաքամությունից շնչահեղձ էր լինում: Գնալով վիճակն ավելի էր ծանրանում: Ծանր էր նաև Չաուշի վիճակը: Նա մերթընդմերթ ուշագնաց էր լինում: Բժիշկները նրա մարմնից հեռացրեցին արկի երեսուն բեկոր և, որպես ծանր վիրավոր, ուղարկեցին Երևան՝ վիրահատության: Ֆիդելը մահացավ:

1992թ. հունիսին Հրազդանի «Կոճոռ» ջոկատի տղաները մեկնեցին Նոյեմբերյան և մասնակցեցին Ներքին Ոսկեպար գյուղի մարտերին: Այնուհետև ջոկատը մեկնեց Լաչին և մասնակցեց Ղոշասու և Թիղիկ գյուղերի ահեղ մարտերին: 1993թ. հունվարին՝ «Կոբրա» կոչվող դիրքերի պաշտպանական մարտերին: Այս մարտերի ժամանակ մեր ազատամարտիկներից շատերը զոհվեցին, վիրավորվեցին, հաշմանդամ դարձան: Սակայն նրանք մինչև վերջ կռվել են՝ իրենց քրտինքով ու այրամբ կնքելով այն հողը, որն իրենց հայրենին է, իրենց սեփականը, որ չի՛ կարող և չպե՛տք է գտնվի թշնամու ձեռքին:

ԼԻԼԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՆՑՅԱԼԻ ՄԵՋ Է ԳԱԼԻՔ ՀԱՎԵՐԺԱԿԱՆԸ...

Հայրենադարձներ Սոկրատ և Արեգնազ Ղազարյաններ-ը երևի չէին էլ ենթադրում, որ թախծանուշ ու ոսկեգանգուր աշունն իրենց անչափելի ու անսահման սիրելի բարիք է բերելու. Մայր Հայրենիքում՝ Վեդու շրջանի Կիրովի սովխոզ կոչվող բանավանում, 1951թ. սեպտեմբերի 15-ին



լույս աշխարհ եկավ նրանց որդին, որին գորովանքով ու ջերմությամբ Նորիկ կոչեցին:

Մանկասե՞ր, քիչ է ասել. մանկապաշտ էին նրանք: Եվ Նորիկին, ինչպես նաև մյուս զավակներին շրջապատեցին սիրով ու նվիրումով: Եվ ի՞նչ իմանային նրանք, որ հետո այդ նվիրումը Նորիկի համար դառնալու էր հավատամք ու դրսևորում:

Դպրոցում էլ նա սիրվեց ու հարգվեց, որովհետև աչքի էր ընկնում պարտաճանաչությամբ, համեստությամբ, հանգիստ ու մեղմ բնավորությամբ, ընկերներին օգնության ձեռք մեկնելու պատրաստակամությամբ և բոլորի նկատմամբ հարգալից վերաբերմունքով: Նա դպրոցն ավարտեց և ընդունվեց Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտ, որն ավարտելուց հետո էլ վերադարձավ հայրենի գյուղ՝ աշխատելու: Գյուղի շինարարական գործերը վստահվեցին Նորիկին և նա սիրով նվիրվեց իր աշխատանքին. երազում էր գյուղը շեն ու ծաղկուն տեսնել, իսկ մտքում՝ նոր, երկհարկանի շենքերի և ասֆալտապատ փողոցների ուրվագծերն էին:

Նրա երազանքները սկսեցին կյանքի կոչվել և մարմնավորում ստանալ:

Նվիրո՜ւմ... Ահա թե ինչու որևէ ձեռնարկ ծանր ու թեթև անելուց և նպատակ դառնալուց հետո նրա մոտ իրականանում էր: Մեկը մյուսի հետևից բարձրանում էին քարե երկհարկանի առանձնատները: Գոհ ու ուրախ էին համագյուղացիները, գոհ էր նաև Նորիկը: Մեծ ու Փոքր Մասիսների և Գեղամա լեռների միջև ծաղկում էր հայկական այս գյուղ: Ուրեմն, ինչո՞ւ գոհ չլիներ:

...1988 թվական: Հայոց ոգին զարթոնք ապրեց. Արցախի միացումը Հայաստանին դարձավ օրախնդիր: Պայքարի կայծը բազում սրտեր հրդեհեց: Հայոց ազատատենչ ոգին արթնացավ Նորիկի հոգում. զինվորագրվեց ազգափրկիչ այդ պայքարին:

Շատերն են հայրենասեր, բայց եկեք խոստովանենք, որ ընտրյալնե՛րը միայն կխիզախեն լինել ռազմադաշտում: Այդ խիզախներից էր Նորիկ Ղազարյանը: Մի՞թե ակներև չէ փաստը, որ գյուղում Նորիկն առաջինն էր: Նա չերկնչեց, անվարան զինվորագրվեց՝ քաջ գիտակցելով, որ գուցե անդարձ լինի ուղին...: Բայց ընտրել էր, և դա էր իր բաժին ճակատագիրը: Մեկնեց ռազմադաշտ:

Սկզբում մասնակցեց Երասխավանի պաշտպանական մարտերին, այնուհետև մեկնեց Մարտակերտ: Թշնամու նկատմամբ վրեժով լցվեց, իր օրինակով քաջագործության մղեց զինակիցներին. շուտով դարձավ վաշտի հրամանատար: Սիրում էին զինվորներն իրեն. հոր նման սրտացավ էր նրանց նկատմամբ, ամեն հայ զինվորի կորստից խոցոտվում էր սիրտը:

Ռազմադաշտում հեշտ չի եղել նրա և իր զինակիցների համար, բայց ոչինչ չի կարողացել ընկճել հայրենիքի առյուծասիրտ զավակների ոգին, որովհետև կարճ ժամանակում, մեկը մյուսի հետևից նրանք ազատագրում էին Մարտակերտի շրջանի Հակոբ Կամար (Վարնկաթաղ), Տոնաշեն, Մաղավուզ, Մատաղիս գյուղերը: Ահեղ մարտեր էին մղվում: Թշնամին ամեն գնով ուզում էր պահել այն գյուղերը, որոնց տիրել էր ենթագրեն: Իսկ հայ մահապարտ կամավորականները եկել էին կռվելու, ազատագրելու և հաղթելու: Բարձրունքներ, ձորակներ, անտառնե՞ր, անտառնե՞ր... Հայ քաջերը քայլ առ քայլ առաջ էին շարժվում: Արցախի հյուսիսային ծայրում Թալիշ գյուղն էր՝ լեռների մեջ ծվարած: Հենց այս գյուղի ազատագրման ժամանակ նահատակվեց Նորիկը: Հոռեկիս սարի ծաղկուն փեշերին թափվեց քաջի արյունը: Նա զոհվեց ամենագեղեցիկ ամսին՝ ապրիլին... Ափսո՜ս, հազա՜ր ափսոս, քաջասի՛րտ զինվոր:

Փա՛ռք քեզ, զինվո՛ր, փա՛ռք, որ միակդ, միամորիկդ ճակատդ լուսապսակով զարդարեցիր: Անցած ուղիդ՝ կյանքդ, դարձավ նվիրման վառ օրինակ, ցույց տվեցիր, որ անցողիկի մեջ մարդը կարող է կերտել գալիք հավերժականը...

1997 թվականի սեպտեմբերի 20-ին Հայաստանի Հանրապետության նահագահի թիվ 810 հրամանագիրը փաստում է՝ «589-րդ առանձին մոտոհրաձգային գնդի ինժեներասակրավորական վաշտի հրամանատար, ավագ լեյտենանտ Նորիկ Սոկրատի Ղազարյանը հետմահու պարգևատրվում է «Արիության մեդալով»»:

ՄԿՐՏԻՉ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ԿՈՍՈՎՈՅԻ ԱՆԿԱԽԱՑՈՒՄՆ ԱՆԽՈՒՍԱՓԵԼԻ, ԲԱՅՑ ՈՉ ՆԱԽԱԴԵՊ

«Կոսովոն անկախ կդառնա, դա անխուսափելի է»,- «Ազատություն» ռադիոկայանին տված հարցազրույցում հայտարարել է ՄԱԿ-ում Միացյալ Նահանգների նախկին դեսպան, հարավսլավական խնդրի լուծման «ճարտարապետ» Ռիչարդ Հոլբրուքը:

Ինչ վերաբերում է Կոսովյան հարցի լուծումը նախադեպ օգտագործելու մասին խոսակցություններին, ապա այդ առնչությամբ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Յասպ դե Հոոպ Սիեֆերը «Նովոյե իզվեստիային» տված հարցազրույցում հայտարարել է, որ ՆԱՏՕ-ն պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը և Կոսովոն չի կարող նախադեպ լինել ոչ Հարավային Օսիայի, ոչ Աբխազիայի, ոչ էլ, ասենք, Սերբական Հանրապետության (Բոսնիայի և Հերցեգովինայի կազմում) կամ Չեչնիայի համար, եթե դրանք ցանկանան անջատվել: Հետաքրքրական է, թե արդյոք ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղարը դիտավորությա՞մբ չի ընդգրկել Ղարաբաղի անունը որևէ տեղ: **(15. 03. 2007թ., «Ազգ»)**

ԱՂԱՎՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՐԱՆՏ ԴԻՆՔՆ ՈՒ ՀԱՅՈՑ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍԻ ԿԵՐՊԱՐԸ

Սույն թվականի հունվարի 19-ին Ստամբուլում սպանվեց «Ակոս» թերթի խմբագիր, հայազգի լրագրող Հրանտ Դինքը:

Կատարված ողբերգությունն անմիջապես արձագանք գտավ և լայնորեն լուսաբանվեց արևմտյան լրատվամիջոցներում՝ Թուրքիայի վրա ճնշումներ գործադրելու նպատակով: Դա հասկանալի դարձավ սպանության հենց առաջին իսկ օրերից, երբ դեռ դիակը հողին չհանձնած և այդ ցնցումից ուշքի չեկած հասարակությանը հրամցվում էր այն թեզը, թե Հրանտ Դինքի սպանությունը նոր հեռանկարներ և հնարավորություններ է ընձեռում երկու կողմերին (հայերին ու թուրքերին) հաշտվելու և, ամենակարևորը, հայ-թուրքական սահմանը վերաբացելու համար: Այդ մասին իր ելույթներում շեշտում էր ՀՀ-ում ԱՄՆ փոխդեսպան Էնթոնի Գոդֆրին:

Տպավորությունն այն է, որ անհրաժեշտ էր նման մի ողբերգություն, որպեսզի հայությունը հասկանար, որ իր թշնամին ոչ թե թուրք ժողովուրդն է, որը դուրս էր եկել Ստամբուլի փողոցներ և վանկարկում էր՝ «Մենք բոլորս Հրանտ Դինք ենք, մենք բոլորս հայ ենք», այլ Թուրքիայի կառավարությունն ու փոքրաթիվ թուրք ազգայնամոլները, որ խոչընդոտում են երկրի դեմոկրատացմանն ու ազատ խոսքի արտահայտմանը:

Ստամբուլ, 22. 01. 2007թ.

Դեռ պետք է պարզել, թե Ստամբուլի փողոցներ դուրս եկած, հարյուր հազարանոց երթի մասնակիցների ո՞ր մասն էր թուրք: Չմոռանանք, որ Ստամբուլում ապրում է 50.000-70.000 հայ, կան քրդեր, հույներ, որոնց մի մասն, անկասկած, պիտի այդ օրերին գտնվեր քաղաքի փողոցներում: Չենք բացառում, որ այդ բազմության մեջ կային նաև թուրքեր: Դրանք հավանաբար որոշ ձախակողմյան ուժերն էին, նաև տարբեր իրավապաշտպան կազմակերպությունների, ՀԿ-ների, ԶԼՄ-ի ներկայացուցիչներ, որոնք Թուրքիայի ներքաղաքական կյանքում գերակայող դիրքեր, գոնե առայժմ, չեն գրավում:

Մի կողմ թողնելով խնդրի աշխարհաքաղաքական ենթատեքստը՝ նշենք, որ այսօր, ազգային խնդիրների լուծման ուղիների փնտրտուքի ճանապարհին, հայ հասարակական-քաղաքական միտքը երկփեղկված է երկու հիմնական մարտավարական ուղղությունների հետևորդների միջև.

1.Հակառակորդի հետ բանակցելու և երկխոսության (այդ թվում՝ մեր կողմից ինչ-ինչ զիջումների) միջոցով տանելի պայմաններ ստեղծել հայության համար, փորձել վերափոխել հակառակորդին, քաղաքակրթել և դարձնել մարդասեր՝ բարձրացնելով նրա ինքնագիտակցությունը:

2.Օգտագործել հարմար առիթը հզոր ուժերի ուշադրությունը հայության հիմնախնդիրներին բևեռելու համար, որի արդյունքում վերջիններս ճնշում կգործադրեն Թուրքիայի վրա, և հայերս որոշակի ձեռքբերումներ կունենանք:

Առաջին ուղղության ներկայացուցիչների ձայնն առավել լսելի էր, մանավանդ, որ այդ ձայնին միանում էր արևմտյան մամուլի մի զգալի հատվածը: Այդ օրերին մեր հեռուստաընկերություններն ուղղակի մեջբերումներ էին անում արևմտյան մամուլի էջերից, որոնցում հիմնական գաղափարն այն էր, որ այս սպանությունը պետք է նպաստի հայ-թուրքական երկխոսությանը, սկիզբ դառնա բարիդրացիական հարաբերությունների հաստատմանը և, ամենակարևորը՝ հայ-թուրքական սահմանի բացմանը:

Այս գաղափարական դիրքորոշման հետևորդների ելույթները հիմնականում արտածվում էին այդ օրերին շրջանառվող «Մենք բոլորս Հրանտ Դինք ենք, մենք բոլորս հայ ենք» կարգախոսից, որը ծնունդ առավ Ստամբուլի փողոցներում, այնուհետև սահուն կերպով տեղափոխվեց Հայաստան:

Ընդհանրապես, այն քաղման արարողությունը, որի ականատեսը դարձանք մենք, բազմաթիվ հարցադրումներ է առաջացնում: Մասնավորապես, ինչպես ցուցարարներին հաջողվեց մի քանի ժամերի ընթացքում պատրաստել նման քանակությամբ պաստառներ, ընդ որում ոչ թե թղթից, այլ մետաղյա շրջանաձև ձուլվածքից կամ, եթե այս ոճրագործությունն այդքան ցնցել էր թուրք ժողովրդին, ապա ինչո՞ւ ցուցարարները հայտնվեցին միայն Ստամբուլում...

Ինչևիցե... Մի քանի օր շարունակ հայ հասարակությունը, Դինքի թաղման թափորի անընդհատ ցուցադրվող տեսարանի ազդեցության տակ, նորից հույսով լցվեց, թե այսօրվա թուրքերն այլևս այն ցեղասպան թուրքերը չեն, թե նրանք քաղաքակրթվել են, թե մենք պետք է գնանք նրանց ընդառաջ և այլն, և այլն:

Հայ հասարակության ընկալումներում ընթացող գործընթացները, թերևս, հիշեցնում էին 1908 թվականը: Համիդյան վարչակարգի տապալումից հետո Կ.Պոլսի փողոցներում հայերը, քրդերը, հույները, թուրքերը գրկախառնվում էին, ողջագուրվում, որ տապալել են արյունոտ վարչակարգը, որ իշխանության են եկել «նոր» թուրքեր՝ երիտասարդ, քաղաքացիական, եվրոպական համալսարաններում ուսանած, և բոլոր ազգային փոքրամասնություններն այլևս կապրեն հաշտ ու խաղաղ, այսօրվա տերմիններով՝ կստեղծեն քաղաքացիական հասարակություն: Հետո եկավ 1909-ը՝ 30.000 հայերի կոտորածն Ադանայում, հետո՝ 1915-ը...

Զավեշտալին այն է, որ այս անգամ մենք պետք է շնորհակալ լինենք հենց թուրք հասարակության ազգայնամոլ հատվածին, որ կարողացավ մի փոքր արթնացնել քաղման թափորի տեսարանի ազդեցության ներքո գտնվող հայ հասարակության բթացած զգոնությունը: Սպանությունից հետո դեպքերի զարգացումը ցույց տվեց, որ իրական Թուրքիան ամենևին էլ Ստամբուլի փողոցներում ազատ խոսքի իրավունքի պաշտպանները չեն, այլ հակահայկական պաստառներով՝ «Բոլորս տրապիզոնցի ենք, բոլորս՝ թուրք ենք, բոլորս Մուսթաֆա Քեմալն ենք» փողոցներում և ֆուտբոլային մրցախաղերին հայտնված ազգայնամոլները: Այժմ արդեն հայ հասարակական-քաղաքական միտքն առաջադրեց այն տեսակետը, որ, թերևս, գործ ունենք երկու տարբեր Թուրքիաների հետ՝ ժողովրդավար և ազգայնամոլ:

Տեսականորեն, երբ քննարկում ենք հասարակության ներսում զսպվածության, երկու հասարակությունների միջև խաղաղ համակեցության ներուժը, նախ՝ անհրաժեշտ է մանրամասն ուսումնասիրել նշված սոցիումներում միմյանց հանդեպ հանդուրժողականության աստիճանը: Այն դեպքում, երբ, ընդհանուր առմամբ, անհանդուրժողականության աստիճանը բարձր է, ի սկզբանե վտանգված է խաղաղ համակեցության գաղափարը: Խաղաղ համակեցությունը վտանգվում է այն դեպքում, երբ այդ փոխըընկալումները համարժեք չեն:

Այսօր արդեն ակնհայտ է, որ Հ. Դինքի սպանությունը թուրք հասարակության ազգայնական հատվածին դարձրել է առավել ագրեսիվ և ազգայնամոլ: Մինչդեռ հայ հասարակությանը այն բաժանել է երկու հակադիր մասերի. գերակշռող հատվածը դարձել է ավելի հանդուրժող, նրանք կոչ են անում շարունակել Դինքի սկսած գործը և հեղեղել են մամուլը այդ ոգով գրված տարբեր հրապարակումներով, իսկ եթերը՝ հեռուստահաղորդումներով: Իսկ հայ հասարակական-քաղաքական մտքի մյուս հատվածը փորձում է հնարավորինս օգտվել ստեղծված իրավիճակից Ցեղասպանության ճանաչման հարցի առաջխաղացման ուղղությամբ:

Այսպես, մինչև Դինքի սպանությունը, 2006թ. անցկացված սոցիոլոգիական հարցումների համաձայն, Թուրքիան որպես

Հայաստանի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող երկիր էր համարում հայերի 27.6 %-ը, իսկ Հայաստանը, որպես Թուրքիայի համար պոտենցիալ վտանգ ներկայացնող երկիր համարում էր թուրքերի 20.6%-ը: Եթե հետևենք այս թվերին, ապա կտեսնենք, որ թուրք հարցվողներն առավել հանդուրժող են հայերի հանդեպ: Բայց չմոռանանք, որ թե՛ ՀՀ-ն, թե՛ Սփյուռքը (հատկապես՝ Ստամբուլի հայ համայնքը) իրավամբ վտանգ չեն ներկայացնում ՆԱՏՕ-ի անդամ որևէ երկրի նկատմամբ, թեկուզ դա լինի Թուրքիան: Այս տրամաբանությունն ասում է, որ այդ 20.6 %-ը նույնպես ծանրակշիռ թիվ է:

Կասկած չկա, որ սպանությունից հետո Թուրքիայի հանդեպ Արևմուտքի ճնշումները կխորացնեն թուրքական հասարակությունում Հայաստանի և հայերի՝ որպես Թուրքիայի համար սպառնալիք ներկայացնող պետության և ազգի, իմիջը, ինչն իր հերթին հրատապ է դարձնում Թուրքիայում ապրող հայերի անվտանգության խնդիրը:

Երևան, 22. 01. 2007թ.

Անդրադառնանք հայ հասարակական-քաղաքական մտքի երկրորդ ուղղությանը, որի համաձայն՝ պետք է, որքան հնարավոր է մեծ աղմուկ հանել այս սպանությունից, որպեսզի աշխարհի հզորները, վերջապես, հասկանան, որ Թուրքիան այն ցեղասպան երկիրն է, որը մինչև այսօր չի ընդունում մարդկության և քաղաքակրթության հանդեպ իր կատարած հանցանքը:

Խոսում ենք այն մասին, որ, վերջապես, Արևմուտքը համակվեց մեր խնդիրներով (մասնավորապես, «ԵվրոՆյուզի» հաղորդումից հետո, որը բազմիցս հեռարձակվեց մեր լրատվամիջոցներով) և այլն: Սա նույնքան վտանգավոր մտայնություն է, որքան և առաջինը: Մեծ տերությունները Թուրքիայի հետ իրենց հարցերը լուծելուց հետո հաճախ են մոռացել Հայկական հարցը:

Անկասկած, կա մի ուղի, որը պետք է գա ու բացառի այս երկուսը, դա Հայաստանի Հանրապետության հզորացումն է: Պետք է ստեղծել այնպիսի Հայաստան, որը Թուրքիային կպարտադրի իր ազգային շահերը, բայց ոչ «երրորդ ուժի» միջոցով և, որի իրապես անկախ մտավորականությունը իր ներուժով կարողանա գաղափարական ուղենիշ դառնալ Սփյուռքում ապրող հայ մտավորականների համար, որպեսզի վերջիններս էլ մոլորության մեջ չընկնեն, կարծելով, թե կարելի է լինել հավասարապես նվիրված թե՛ հայ ազգին և թե՛ թուրքական պետությանը:

Սա ամենևին էլ չի նշանակում, որ Հայաստանի հասարակական-քաղաքական միտքը և մտավորականությունը ներկա փուլում անելիք չունեն: Այսպիսով, մտավորականության կոչումը ճիշտ ուղի նախանշելն է:

Դառնանք Դինքին և նրա ողբերգական ճակատագրին: Հայտնի է, որ նա իր գործունեությունը դիտարկում էր հանուն Թուրքիայի, այդ երկրի ապագայի ու ժողովրդավարացման և այս ճանապարհի մեջ էր տեսնում հայկական խնդրի լուծումը: Եվ նա նահատակվեց իր այդ հայացքների (կամ ավելի պարզ ասած՝ մոլորությունների) համար: Այսպիսով, Դինքը մոլորված հայ մտավորական էր՝ անօգնական ու մշտապես ներողամիտ, լի քրիստոնեական հույսով ու հավատով:

Հայերիս անընդհատ հետապնդում է այն մտայնությունը, թե մեր պատմական առաքելությունը քաղաքակրթություն տարածելն է, և այդ առաքելության համար մենք անընդհատ պիտի նահատակվենք, թե մենք թուրքերի (նաև ադրբեջանցիների) ժողովրդավարացման վեհ գաղափարի համար պիտի մշտապես զոհաբերենք մեր կյանքը՝ հուսալով, որ մի օր առաջադեմ ու քաղաքակիրթ մարդկությունը կգնահատի ու կփոխհատուցի մեզ այդ կորուստները:

Հիշենք 20-րդ դարի սկզբին թաթար (ադրբեջանցի) առաջնորդ Ահմեդ բեկ Աղաևի խոսքերը. «Հայերը չափազանց առաջադիմելով՝ վազում են արագորեն և երբեք չեն մտածում իրենց հարևան թաթարների մասին: Այդ հանգամանքը պետք է գիտակցեն իրենք՝ հայերը և աշխատեն քարշ տալ իրենց հետ թաթարներին, և կամ թաթարները պիտի կանգնեցնեն հայերի առաջխաղացումը այնքան ժամանակ, մինչև որ իրենք ևս կը հասնեն հայերին»: Թե ի՞նչ է նշանակում «կանգնեցնել հայերի առաջխաղացումը», պարզ է բոլորիս:

Ստամբուլի հայ մտավորական Հրանտ Դինքի մահը զգոնության ու սթափության ահազանգ պիտի լինի հայության այն հատվածի համար, որոնք այս օրերին փորձում են համայն հայության համար ազգային հերոսի նոր կերպարներ կերտել:

Ցավոք սրտի, դեռ երկար ժամանակ է պետք, որպեսզի մեր ազգային հերոսները դառնան Հ. Դինքի նման խաղաղասեր, մարդասեր, ուսյալ մտավորականները: Անդրանիկը, Գևորգ Չավուշը, Սողոմոն Թեհլերյանը, Արցախյան ազատամարտի հերոսները… սրանք են մեր ազգային հերոսները և այդպես կլինի այնքան ժամանակ, քանի դեռ մենք ակնածանք չենք լինելու նման ոճրագործությունների:

ԹԱՄԱՐԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ԿՈՂԱԿՑԻ՝ ՏԻԿԻՆ ՌԱՔԷԼ ՏԻՆՔԻ ՀՐԱԺԵՇՏԻ ՆԱՄԱԿԸ

...Եղբայրներս, Անոր ճշմարտութեան սէրը, լուսաւորութեան սէրը, իր բարեկամին հանդէպ ունեցած սէրն է, որ հոս բերաւ մեզ: Վախի ասպարեզ կարդացող սէրն է, որ զինք բարձրացուց: Կըսեն, որ ան մեծ մարդ մըն էր: Չեզի կը հարցնեմ. «Ան մե՞ծ ծնաւ»: Ո՛չ, ան ալ մեզի պէս ծնաւ: Ան երկինքէն չէ, ան ալ հողեղեն էր, մեզի նման ապականացու մարմին մը: Բայց ապրող հոգին, կատարած գործը, կիրարկած կերպը, աչքերուն, սիրտին սէրը զինք մեծցուց: Մարդ ինքնիրմէ չի մեծնար, այլ մարդ իր ըրածներովը կը մեծնայ: Այո՛, ան մեծ եղաւ, որովհետեւ մեծ խորհեցաւ, մեծ խոսեցաւ:

Ան այսօր Թուրքիո մեջ նոր շրջան մը բացաւ: Դուք ալ այդ սկիզբին կնիքը հանդիսացաք: Անով վերտարութիւններ, ուղերձներ, անով արգելքներ փոխուեցան: Անոր համար անձեռնմխելիութիւններ կամ արգիլեալ բաներ չկար: Աստուծոյ Խօսքին ըսածին պէս սիրտէն յորդեցաւ: Այս գինը կարելի է հատուցանել Հրանդները սիրելով, Հրանդներուն հաւատալով: Մեծ գին մը վճարեց: Ատելութեամբ, անարգանքով, արիւնը արիւնէն նախամեծար համարելով, կարելի չ'ըլլար ապահովել այդ առաջընթացը:

Ոչ մէկէն նախանձող, ոչ մէկուն ունեցածին աչք տնկող սէրը, եղբօրը նկատմամբ աչք չունեցող սէրն է կարեւորը:

Ըրածներդ, խօսածներդ ո՞վ կրնայ մոռնալ, սիրելիս, ո՞ր մթութիւնը կրնայ մոռցնել տալ, սիրելիս: Եղածները ո՞վ կրնայ մոռցնել տալ, սիրելիս: Վախը կարելի՞ է մոռցնել, կեա՞նքը, չարչարա՞նքը, աշխարհի շուայտա՞նքը, եթէ ոչ մա՞հը մոռցնել պիտի տայ, սիրելիս: Ո՛չ, որեւէ մթութիւն չի կրնար մոռցնել տալ, սիրելիս: Սիրելիներէդ բաժնուեցար, զաւակներէդ, թոռնիկներէդ բաժնուեցար, հոս քեզ ճամբու դնողներէն բաժնուուեցար, գիրկէս բաժնուեցար: ԵՐԿԻՐԷԴ ՉԲԱԺՆՈՒԵՑԱՐ: **(Թարգմանեց ՀՐԱՆԴ ԿԻՒՉԷԼԵԱՆԸ)**

→

ՄՏԱՎՈՐԱԿԱՆԻ ԽՈՍՔԸ ՊԵՏՔ Է ՍՊԵՂԱՆԻ ԼԻՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԵՐՔԻՆ

- Պարոն Աղաբաբյան, մի փոքր պատմեք Ձեր մասին:

- Ծնվել եմ 1964-ին, Նոյեմբերյանի շրջանի Կողբ գյուղում: 1986-ին ավարտել եմ Երևանի պետական մանկավարժական ինստիտուտի նկարչագծագրական բաժինը: 1986-88թթ. Պտղավան գյուղի դպրոցում ուսուցիչ եմ եղել: Հայաստանի Հանրապետությունում և աշխարհի տարբեր երկրներում մասնակցել եմ անհատական և խմբակային ցուցահանդեսների:

- Ձեր նկարների գլխավոր թեման ո՞րն է:

- Աշխարհը.... Տիեզերքը.... Այն տեսանելին և անտեսանելին, որ ինձ շրջապատում են: Նկարիչն ազատ է, նկարում է այն, ինչ ուզում է: Նրա առաքելությունն այն է, որ ստեղծագործության մեջ բարի լույս լինի, որպեսզի մարդիկ նկարներին նայելիս, դրական լիցքերով լցվեն և իրենց հետ տանեն բարի լույսը:

Ստեղծագործողի գերխնդիրն աշխարհում դրականը, սերը, ներդաշնակությունը, բարությունն ավելացնելն է: Եթե քարոզիչները Աստծո խոսքը ուղղակիորեն հասցնում են մարդկանց, ապա ստեղծագործողները դա անում են անուղղակիորեն. գրողները՝ գրականության միջոցով, երաժիշտները՝ հնչյունների, նկարիչները՝ պատկերների: Ստեղծագործողները միջնորդ են Աստծո և մարդկանց միջև. ցավով պետք է նկատեմ, որ ժամանակակից շատ նկարիչներ մոռացել են իրենց այս կարևոր առաքելության մասին: Փոխարենը, մտածում են, թե կվաճառվի՞ իրենց այս կամ այն նկարը, կդառնա՞ն հայտնի: Սակայն ո՞ւմ է պետք դա, եթե արվեստը չի ծառայում ժողովրդին: Նկարչությունը ինքնանպատակ չէ, դա վերևից շնորհված պարգև է: Նկարում եմ և՛ պեյզաժ, և՛ նատյուրմորտ, և՛ դիմանկար՝ կախված կյանքի փուլից, իմ ներաշխարհից, ինձ շրջապատող երևույթներից: Նախընտրում եմ նկարել ինքնանկար: Երբ փորձում եմ նկարել դիմացս նստած մարդուն, անպայման վերապահումով եմ մոտենում նրան, ակամայից ընկնում եմ դիմացինիս բիոէներգիայի ազդեցության տակ: Ինքնանկարներ ստեղծելիս՝ ավելի ազատ եմ, և ինձ ոչինչ չի խանգարում:

- Ինչպե՞ս են ստեղծվում Ձեր նկարները:

- Նկարս ստեղծվում է, երբ առաջանում է դրա անհրաժեշտությունը. դուրս եմ գալիս տանից և գնում անհայտ ուղղությամբ: Այդպես հարյուրավոր կիլոմետրեր կարող եմ անցնել՝ փնտրելով իմ ներսում եղածի համար համահունչ, համապատասխան վայր, որպեսզի նկարեմ: Նկարելուց հետո եմ միայն հասկանում, թե ինչ էր կատարվում իմ ներսում, փորձում եմ վերծանել ստացած ինֆորմացիան: Նկարիչը պետք է հասկանա իր ստեղծագործությունը: Իմ կարծիքով, գիտակցությունը չպետք է խանգարի ստեղծագործելուն: Երբեք չգիտեմ ծառ եմ նկարելու, դաշտ, թե դիմանկար. պարզապես նկարում եմ: Կարելի է ասել, որ ամեն մի նկարի հետ նորից նկարել եմ սովորում:

Ինձ համար թանկ ու հարազատ է «Արարատի շուրջպարը» նկարը: Այն վերերկրյա նախախնամություն ուներ. սովորականի պես նկարում էի, և զարմանալի բան տեղի ունեցավ. բազմերանգ գույները կարծես լցվեցին կտավի վրա, ուրվագծվեցին մարդիկ: Երբ մարդիկ որոշակիացան, սկսեցի ուսումնասիրել մեր հայկական ազգային պարը: Պարզվում է, որ մեր ազգային պարի մեջ գաղտնագրված է մեր պատմությունը, ժամանակագրությունը: Դրանով է պայմանավորված, որ գոյություն ունեն ռազմական, պաշտպանական, հարձակողական, խնջույքի, ուրախության պարեր: Դհոլը խորհրդանշում է մեր ժողովրդի կյանքի ճիշտ ռիթմը, հաղթանակը, զուռնան, կարծես, Աստծո ձայնը լինի վերևից: Նկարում մարդիկ կրում են Հայաստանի տարբեր գավառների տարազները: Արարատ լեռը, անխոս, խորհրդանշական է, չէ որ այն Երկրի խորհուրդն է, որտեղ արարվեց մարդկությունը…

Աշխարհի բոլոր ժողովուրդները տարբերվում են իրենց մշակույթով, իրենց ստեղծագործական մղումով. երբ ազգը ստեղծագործում է, ազգայինը դառնում է համամարդկային:

- Եթե չլիներ նկարչությունը, ապա ինչո՞վ կզբաղվեիք:

- Երևի կգրեի: Ունեմ պատմվածքներ, հեքիաթներ, բայց այդ ամենին լուրջ չեմ վերաբերվում:

- Ազգային ազատագրական պայքարը արվեստագետի կյանքում:

- Ապրելով սահմանամերձ գյուղում՝ Կողբում, իմ մասնակցությունը Արցախյան պատերազմին ակամայից եղավ: Շատ ընկերներ կորցրեցի պատերազմի ժամանակ...: Մենք պարտական նրանց. պետք է հզորացնենք Հայաստանը: Յուրաքանչյուր ոք՝ մտավորական, նախարար, ղեկավար, շինական, պարտադիր պետք է ներդրում ունենա այս գործում:

- Ո՞ր արվեստագետի խոսքը կցանկանայիք լսել «Ուխտ Արարատի» ամսագրի էջերում:

- Կցանկանայի լսել Տիգրան Մանսուրյանի, Արկադի Բաղդասարյանի, Վարդուհի Իսաբեկյանի, Սոս Սարգսյանի, Անահիտ Գրիգորյանի խոսքը. բոլորն էլ առողջ մտավորականներ են և ասելիք ունեն: Կցանկանայի, որ զրուցեիք նաև Հրաչյա Մաթևոսյանի հետ, նա իմ կարծիքով ամենաակտիվ մտավորականն է, իրեն պահում է ճիշտ մտավորականի պես, արձագանքում է բոլոր դրական և բացասական երևույթներին: Մտավորականի խոսքը պետք է սպեղանի լինի ժողովրդի վերքին:

Զրույցը վարեց ԴԻԱՆԱ ՄԱԿԻՆՅԱՆԸ

Արվեստագետի գեղանկարները տես գունավոր էջում:

← ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ՄՈՒԹԱՖԵԱՆԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԱՓՈՒՆԻՍ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՆՎԻՐՎԱԾ ՀՐԱՆԴ ՏԻՆՔԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Կեանքը, դժուարութեանց հետ մաքառելով, հասակ նետած Հրանդ Տինքին մէջ կերտեց յախուռն նկարագիր մը, որով ան դարձաւ մարդկային իրաւանց, արդարութեան եւ խղճի ազատութեան համամարդկային իրաւունքներու դրօշակիրը: Ան այնքան բարձր պահեց իր քաղաքացիական պատկանելիութիւնը, որքան՝ իր ծագումը: Սիրեց իր ծննդավայրը, իր սնած երկիրը, իր երկրին մարդը, առանց դրժելու իր ծագումին արժէքները: Իր ունեցած խիզախ ելոյթները կը դրսեւորէին ուղղամիտ գաւառացիի նկարագիրը, որ խորքին մէջ արտացոլացումն էր մարդասիրութեան, առանց նկատի ունենալու մարդոց կրօնքի, ցեղի եւ ծագման տարբերութիւնները:

Հրանդ Թուրքիոյ Հանրապետութեան հայազգի քաղաքացի էր եւ իբր այդ գործեց իր կեանքի ամբողջ տեւողութեան ընթացքին: Այս առթիւ թող ներուի մեզի հարցնել, թէ յատկապէս նման մահափորձերու հետեւանքով իրենց հոգին աւանդած հանգուցեալ անձանց պատանքը քաղաքական նպատակներով շահագործել ի՞նչ աստիճանի կը համապատասխանէր համամարդկային բարոյական սկզբունքներուն: **(Թարգմանեց ՀՐԱՆԴ ԿԻԻԶԻԼԵԱՆԸ)**

ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՅՔ

3. Ա. ՉՕՊԱՆԵԱՆ. ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԳԻՏԱԿՑՈՒՄԸ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԻ ՃԱՆԱՉՄԱՄԲ

(Սկիզբը՝ «Ուխտ Արարատի» թիվ 10-ում)

Իր պատմամշակութային գործունեությունը նկատի ունենալով է Յ. Օշականը համոզված, որ «Որակի այս կայունութիւնը պիտի քննուի երբ շինուի գրագէտի իր դէմքին համադրումը... ՀԱՅ աշուղներէն հատընտիր երգերու երեք հատոր թարգմանութիւնն է եւ այդ հեղինակներու մասին ամփոփ-պայծառ նշմարներով, որոնք իրարու կապուելով ՀԱՅ ՀՈԳԻԻՆ վրայ բաւարար ԼՈՅՍ մը կը նետեն»:[15] Իսկ այդ ամենը՝ մոտենալով Չօպանեանի երկրորդ հզոր զգացողութեան գիտակցմանը. ազգային ազատագրական պայքարին, երբ ՀԱՅԻ համար իրական կյանքն այն աստիճան էր կորցրել իր նշանակությունը, որ Չօպանեանը հայրենապաշտության ԼԱՔՈՎ եւ իր հոգու հնարամտությամբ թարմացնում էր նույն հենց այդ կյանքը՝ ՀԱՅԻ մեջ եւ... ուր բուն բնազանցականը Չօպանեան-գրագետի մեջ եւ «համար» կայացել է բազմատեսակ գիտելիքների ձեռքբերմամբ եւ ներկայում տիրող հայ հոգին պղտորող զզվանքներից անմիջական ձեւում ազատագրմամբ, նաեւ շնորհիվ, որպիսի հոգեկան դրսեւորուամբ էլ, ըստ Յ. Օշականի, Հայ գրագետը հասավ իր եւ մեր նպատակին, քանզի այդ ամենը դադարեցին իրեն հավասարակշռությունից հանել... իսկ, ավելորդ չէ շեշտել այն էականը, որ չնայած սեփական ստեղծագործականի տեսանկյունից ինչ-որ չափով նա զրկվեց արվեստագիտական երեւակայությունից, բայց ԱԶԳԱՅԻՆԻ առաջադրման հարցում՝ որպես համամարդկայինի գիտակցում, «իր վրայով իմ մէջ բարձրացաւ այդ հսկայ վաստակը մեր նոր կամքին...»,- առաջադրում է իր համոզմունքը Յ. Օշականը եւ ընդհանրացնում. «Եւ մէկ մարդ երբեմն ամբողջ պատմութիւն մը է: Ու Արշակ Չօպանեան մէկն է անոնցմէ»:[16]

Ըստ այդմ էլ, օտարների մեջ, թե Պոլսում, նա ծառայել է իր ժողովրդին, որը ինչպես արդեն ասել ենք, դպրոցի արժեք է ձեռք բերել: Եվ նրա գործունեությունը՝ «իբրեւ քանակ ու որակ» ո՛չ միայն ամենապատկառելիների թվին է դասվում՝ (հայորդիների կողմից գիտակցված), այլեւ Հայության երկու հատվածների միասնական գրականության ու մշակույթի ճանաչման հիմք դնում, որը եւ առաջնայիններից առաջնայինն է:

Որոնելով ՀԱՅԻ ՀՈԳԻՆ, առաջադրելով ԱՐՄԵՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ ու հայրենապաշտություն՝ իր գործունեությամբ Չօպանեանը մեր առջև փռել է ՀԱՅԻ «մօտ դար մը կանխող հոգեբանութիւնը, մէր իմացական բարեխառնութիւնը»: «ՀՈՆ է ԿԵԴՐՈՆԸ Ա. ՉՕՊԱՆԵԱՆԻ քննադատական չեմ ըսեր դրութեան, այլ գործին»,[17] ուր որպես հիմնատարրեր՝ ՆԱՐԵԿԱՑԻՆ եւ ՔՈՒՉԱԿԸ կազմում են իր ցեղապաշտական գրության էական կողմերը:[18] Այն է՝ Չօպանեանը, երբ ընդհանրացրել է ՀԱՅ ՀՈԳՈՒՆ վերաբերող էական առանձնահատկություններ, դեռ իր օրերին հայեցողական ձեւի մեջ առաջադրել է զուտ ազգային վիճակ, որը մեր օրերում իր գերգիտական հիմնավորումն է նաեւ գտել «ՀԱՅԵՐ ԵՒ ՀԱՅՔ» գրության հեղինակի կողմից:

ՆԱԽ կրկին ՉՕՊԱՆԵԱՆԱԿԱՆ առաջադրման մասին՝ որպես հոգեբանական վիճակ՝ հենվելով Յ. Օշականի խորհրդին. «Նարեկացին եւ Քուչակը» հիմնատարրերը կը պարունակեն անոր ՑԵՂԱՊԱՇՏԱԿԱՆ դրութեան»:

Իսկ մեր օրերի հեղինակը (է. Աթայան), հարաբերած ՀԱՅՔԻ առաջադրմանը՝ տիեզերաքաղաքական խաբուսիկ գրավչության նախամիջավայրին, գտնում է, որ հնարավոր է ամեն բանի դիմագրավել՝ միայն այն դեպքում, եթե համամարդկայինը սահմանագծելիս ելակետ ընդունվի ո՛չ թե մարդու էութենական վերացական ըմբռնումը, որը հարկ է ասել, որ 18-րդ դարի ֆրանսիական նյութապաշտների առաջադրումներից է, այլ սեփական մշակույթի, տարբեր մշակույթների ու մշակութատիպերի հիմնանյութը հնարավորին չափ լայն ու խոր ընդգրկմամբ: Այս տեսակետը,- համոզված է պրն. Աթայանը,- հավասարազոր է ժողովրդական գիտակցության վերափոխմանը՝ ազգային ինքնագիտակցությանը, որը ո՛չ այլ ինչ է եթե ո՛չ ՑԵՂԱՅԻՆ-ԱԶԳԱՅԻՆ-ՀԱՄԱՄԱՐԴԿԱՅԻՆԸ ընդգրկել տեսլականի (իդեալական) կաղապարի մեջ, որպիսին են եղել ասենք Սասունցի Դավթի կերպարը, Թումանյանի գրվածքները՝ դիտված մշակութաբանականի դիրքից, եւ այսօրինակ ամբողջականության խոր տեսաբան ու հզոր քարոզիչ Նժդեհը, Փոքր Մհերը եւ Նարեկացին՝ մի կողմից եւ մյուս կողմից Նահապետ Քուչակը եւ Պետրոս Դուրեանը՝ անհատապաշտական հոգեխառնվածքի առավել չափով համապատասխանողները,[19] ուր հայ հոգու ինքնագիտակցման հիմքից Նարեկացին եւ Քուչակը՝ ինչպես չօպանեանական ծավալումի մեջ, նույն եւ միեւնույն ժողովրդի հոգում են գոյավորվում՝ լինելով նույն միասնականի տարբեր բեւեռները:

Այս տեսակետից, երբ անցնում են տարիները եւ անմեռ է մնում խորհուրդը,[20] մշակույթը որպես ազգի հոգու արտահայտություն որոշակի հարաբերության մեջ է մեր բուրգի գագաթին գտնվող «քաղաքական սպասումին համար»:[21]

...Եւ այդպես. Ալիշանից ու Պէշիկթաշլեանից՝ ինչպես գիտի ամեն խոսող ու խորհող ՀԱՅ, Չօպանեան, իսկ 1930-ականներից Չօպանեանի դրոշը, իսկ ավելի հստակ՝ «կարավանին» ղեկը[22] անցավ Կոստան Զարեանի ձեռքը[23] եւ ՀԱՅԿԱԿԱՆի ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ որպես նոր օրերի կարգախոս, հայտնվեց ո՛չ միայն իր որոնումների, այլեւ հզոր «յայտարարութիւնների մեջ, որ հնչեց մէր առջեւ նետուած ոսկի ու կախարդական բանալիի մը պես»:[24]

ՎԱՐԴԱՆ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ ԵՒ ՃԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ

15. Օշական Յ., Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, տասը հատորով, Երուսաղեմ, 1952, հ. 5, էջ 321:
16. Նույն տեղում, էջ 312:
17. Նույն տեղում, էջ 343:
18. Նույն տեղում, էջ 344:
19. Տե՛ս Աթայան է., «Հոգի եւ ազատություն», Երեւան, «Սարգիս Խաչենց» ,2005, էջ 205:
20. Օշական Յ., Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, տասը հատորով, Անթիլիաս, 1982, հ. 10, «ՎԿԱՅՈՒԹԻՒՆ», էջ 406:
21. Նույն տեղում, էջ 406-407:
22. Կարավան, կարավանի ղեկ վերցնել, դառնալ կարավանապետ. ի սկզբանե այս բառը պետք է այսօրվա հայը գիտակցի ԿԱՐ արմատի ծիրի մեջ, որ նշանակում է «ՈՒԺ», «ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆ», որից հետո առաջացել են «սաստկութիւն, շատութիւն եւ հնարավորութիւն, զորութիւն» բառերը. տե՛ս, Աճառյան Հր., «Հայերենի արմատական բառարան» չորս հատորով, Երեւան, 1973, հ. Բ, էջ 542: Այսօրինակ իմաստային հիմքից բուն «ԿԱՐԱՒԱՆ»-ը նույն Աճառյանի մոտ ունի հետեւյալ իմաստը. «Ճամփորդներու խումբ», «Բանակ», երբ զինված կռվելու պատրաստները ճամփորդել են. տե՛ս, նույն տեղում, էջ 547: Եվ իր նոր բնական-առօրեական իմաստով, ուր ԿԱՐԱՎԱՆ նշանակում է իջեւանատուն, որի պետն է՝ տվյալ դեպքում, նույն հնքը Ա. Չօպանեանը: Այս տեսակետից նա այն աստիճան ՀԱՅԵՐԻ «ՊԵՏՆ» ու հայրն է եղել, ՀԱՅՐՈՒԹԻՒՆ արել, որ դեռեւս 1948-ին ԱՄՆ-ի «Հայաստանի Կոչնակ» թերթի խմբագիր Հովհաննես Ավագեանին դիմել է նոր, սկսնակ երգիչ Շառլ-Վաղինակ Ազնավուրին օգնելու հարցում, որին դեռ ո՛չ ոք չէր ճանաչում, եւ այդ «ո՛չ ոքից» ինքը՝ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԸ, տարբերվում է նրանով, որ, իսկ ավելի ճիշտ, թող որ ԻՆՔԸ՝ ԿԱՐԱՎԱՆԱՊԵՏԸ, խոսի. «Սիրելի պն. Ավագեան գրաբերս պ. Շառլ-Վաղինակ Ազնաւուրը, Փարիզ ծնած երիտասարդ արժէքաւոր արուեստագէտ մըն է. ֆրանսերէն կը գրէ կամ կ'երգէ տաղանդով... հրաւիրուած է Նոր-Իւորք մէկ մեծ cabaret- ի մէջ երգելու ֆրանսերէն երգեր, որոնց մէջ վարպետ է: Քանի մը ամիս պիտի մնայ այդտեղ: Կը խնդրեմ, որ հաճիք ՁԵՐ բարոյական աջակցութիւնը չզլանալ պ. Ազնաւուրին այդտեղ գտնուած միջոցին....». տե՛ս, ավելի մանրամասն, Չօպանեան Ա., «ՆԱՄԱԿԱՆԻ», Երեւան, «Սովետական գրող» ,1980, էջ 326-327:
23. Օշական Յ., Համապատկեր Արեւմտահայ գրականութեան, տասը հատորով, Անթիլիաս, 1982, հ. 10, «ՎԿԱՅՈՒԹԻՒՆ», էջ 406-407:
24. Տե՛ս Սարաֆեան Նիկողոս, «Տեսարանները, մարդիկ եւ ես», Երեւան, «Երկ» 1994, էջ 242:

ՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ


Արտաշես Շահինյանի դիմանկարը, գործ՝ Մարտիրոս Սարյանի

Մտնում եմ վարպետի տուն:

Տիկին Կատարինեն նշան է անում, թե եղբայրը վերև է՝ արվեստանոցում:

Նկարում է մի մարդու, որին տվել է «Ասպետ հայ» բնորոշումը,- մաթեմատիկոս Արտաշես Շահինյանին: Ըստ սովորության և՛ նկարում է, և՛ բնորդի հետ զրուցում է նրան հուզող հարցերի շուրջ:

- Փաստերի տրամաբանությամբ՝ հայ ժողովուրդը պետք է վաղուց դուրս եկած լիներ պատմության թատերաբեմից: Թվում է, թե հայի հետ քաղաքակրթական ճանապարհի անցած ասորաբաբելոնցիները, խեթերը, մյուսները… Ինչո՞վ բացատրել, ուրեմն, որ դեռ կա՛նք: Ու մնացել ենք սրա-նրա կոկորդում: Ինչո՛վ բացատրել ոմանց համար անցանկալի այդ կենսունակությունը: Դուք՝ սիրելի Արտաշես Լիպարիտի (ի՛նչ հիանալի անուն ազգանուն է,- շրջվում է դեպի ինձ), այդ հարցը պարզել եք Ձեզ համար: Համենայն դեպս, ինչպե՞ս է եղել, որ փոքրաթիվ մեր ժողովուրդը չի խեղդվել, իսպառ չի ոչնչացել պատմության մահաբեր ջրհեղեղների ընթացքում…

- Մենք՝ քիչ, մեր ձեռագրերը շատ,- տևական թվացող լռությունից հետո պատասխանում է Շահինյանը: - Ամեն անգամ, երբ հեղեղը եկել-լցրել է երկիրը և սկսել աստիճանաբար բարձրանալ՝ ամեն մեկը կառչել է մի մատյանի ու ջրի երես ելել՝ չի խեղդվել: Այսպես՝ մինչև մեր օրերը…

- Ուրեմն, ճիշտ էր Վահանը (Տերյան) «Հոգևոր Հայաստանի» իր գաղափարով (իհարկե, այս գաղափարը միայն նրա մտքում չէր ծնվել), որ նա նկատի ուներ թե՛ իբրև մեր անցյալի պատմության փիլիսոփայությունը բացահայտելու բանալի, թե՛ որպես հայ ժողովրդի ապագա գոյության ծրագրային ելակետ: Եվ գիտեք, ոչ միայն Տերյանի կենդանության ժամանակ, այլև մեր օրերում կարծես շատերն են ճշմարտացի և արդիական համարում այդ գաղափարը:

- Ինձ համար ևս հոգևոր Հայաստանի գաղափարն իմաստազուրկ չէ,- ասում է Շահինյանը: - Պետք է միայն հստակ որոշել դրա առավել ակտիվ, կասեի՝ մարտական գործադրման ուղղությունն ու նպատակը: Պասիվ հայեցողական հոգևոր վիճակը, ձգտումները, գաղափարները մեզ փրկել չեն կարող: Ընդհակառակը, դրանք կարող են կործանել: Մենք, փաստորեն, բնական մեծածավալ ռեսուրսներ էլ շատ քիչ ունենք: Ուրեմն, քանակի միջոցով մեծ խնդիրներ լուծել չենք կարող (իսկ մեր ամեն ինչը չվճռված մեծ խնդիր է): Հետևաբար, մենք պետք է ապավինենք մեր որակական ուժին՝ հազարամյակների մեր պատմական-մշակութային փորձին և, ինչու չասենք, մեր ինտելեկտուալ-ստեղծագործական անսպառ պոտենցիալին՝ հանուն ազգի ֆիզիկական նպատակների իրականացման (իմիջայլոց, խիստ գործնական նպատակների իրագործման ընթացքում էլ, ընդհանուր առմամբ, ծնունդ են առնում տաղանդները և արվեստի, գիտության, փիլիսոփայության, տեխնիկայի մեծ արժեքները, նշանակալից գաղափարներն ու հիպոթեզները, էսթետիկական ու գեղարվեստական սկզբունքները): Տվյալ պարագայում արդեն հոգևոր Հայաստանի գաղափարը կգործի որպես մեր ժողովրդի տնտեսական, քաղաքական ու կուլտուրական կյանքի ռեալ ընթացքը խթանող գործոն: Եվ այդ դեպքում միայն մեր հոգևոր դրսևորումը նյութականացված հզոր ուժ կդառնա, ու մեզ հետ, ուզած թե չուզած, հաշվի կնստեն: Ես համոզված եմ, որ հազարամյակներ շարունակ, մինչև Զաքարյանների և Կիլիկիայի անկման ժամանակները, հենց այդպես ակտիվ էլ եղել է հայոց «հոգևոր»-էությունը:

- Իսկ գիտե՞ք, թե ինչով է պայմանավորված Հայաստանի «հոգևոր»- էությունը, - հարցնում է վարպետը և ապա ինքն էլ պատասխանում: - Մեզ հորիզոնականով ծավալվելու հնարավորություն են տվել: Համենայն դեպս՝ Տիգրանից հետո չորս կողմից անընդհատ սեղմել են: Դե մենք էլ աճել-բարձրացել ենք դեպի վե՛ր, դեպի՝ լույսը…

Հետևում է ծանր ու մի տեսակ մտահոգ լռություն:

Ապա Վարպետը վրձինը ավելի ուժգին է քսում կտավին, հետն էլ նույնքան հատու շեշտերով ընդհատ-ընդհատ ասում՝ «Ես ձեր հե՛րն եմ անիծել», «արյունարբու ավազակներ»…

Հետո կտրուկ հետ է քաշվում կտավից և ձայնը բարձրացնելով՝ ասում.

- Մենք, ախր, բարոյական իրավունք չունենք վերանալու: Հին միջագետքյան և հարակից պատմա-աշխարհագրական միջավայրի՝ մեծ քաղաքակրթության առաջին աստիճանները դնող էթնիկական կազմից թերևս մենք ենք մնացել: Եվ վաղուց ի վեր մե՛նք ենք հանդիսանում այդ ամբողջ կազմի միասնական-հավաքական ներկայացուցիչը, ինչպես ցեղային, անտրոպոլոգիական, այնպես էլ քաղաքակրթական տեսակետից: Չի կարող պատահել, որ մեր արյունը խառնուրդ չունենա շումերների և մյուսների արյան հետ: Որ մեր արտաքինում նրանցից գծեր կան, ցույց են տալիս, օրինակ, խեթական, ասուրաբաբելոնական քանդակները: Դե քաղաքակրթական կողմի մասին խոսելն ավելորդ է: Ուրեմն, մենք մեզ չէ միայն, որ այսօր ներկայացնում ենք, այլ նաև նրանց: Թե ինչպիսին է եղել մեր և նրանց փոխհարաբերությունը ինչ-որ պահի, այժմ կարևոր չէ, նրանք մեզ հետ միասին նույն օջախում ծնված ու հետո մեռած մեր եղբայրներն են: Կրկնում եմ՝ եղբայրնե՛րը: Ո՞վ պիտի նրանց հիշատակը պահի, եթե ոչ մենք՝ բախտի բերումով կենդանի մնացած նրանց եղբայրը: Նրանց թողած մշակութային ժառանգությունը դեռ մենք պիտի ուսումնասիրենք ու բացենք նոր աշխարհներ. ո՞վ կարող է եղբայրներին ավելի լավ հասկանալ: Մենք բարոյակա՛ն իրավունք չունենք մեռնելու…

Աշխատանքն ավարտված է, ստորագրված՝ Մ. Սարյան, 1960:

Բայց դեռ պատկերակալին է:

Ամենայն որոշակիությամբ՝ կտավն արտացոլում է բնորդի նկատմամբ նկարչի համակրանքը, վերաբերմունքը, որը, իհարկե, փոխադարձ էր: Բնորդի հասարակական վարքագծի, քաղաքացիական պահվածքի և զուսպ մարդկային անձնական կերտվածքի մեջ հատկանիշներ (առաքինություններ) շատ կային Վարպետին սիրելի լինելու համար: Ասենք՝ անսահման հայրենասիրությունը. ո՛չ տարերային, ո՛չ ցուցադրական, ո՛չ մակերեսային, այլ արմատապես գիտակցված, գիտակցակա՛ն: Երկուսն էլ հայրենասիրությանը մոտ ու հեռու թվացող ամեն մի հարց արծածում էին հենց հայրենասերի հոգեբանությամբ, թերևս ավելի ճիշտ լինի ասել՝ հայրենասիրակա՛ն մտահոգությամբ: Օրինակ՝ պրոֆեսիոնալիզմի խնդիրը: Երկուսն էլ գտնում էին, որ պրոֆեսիոնալիզմը գնալով արագորեն նվազում է մեզանում: «Եվ, ինչպես երևում է, նվազում է բոլոր կարևոր ասպարեզներում՝ գիտության, արվեստների, արտադրության, մանկավարժության,…»,- ասում է Վարպետը: «Սիրողականությունը այսօր չարիքներից մեծագույնը կարող է լինել յուրաքանչյուր ժողովրդի զարգացման խանգարիչներից: Ես, առանց չափազանցության, ֆիզիկապես, ֆիզիկապե՛ս վախենում եմ այդ չարիքից»,- ասում է մաթեմատիկոսը: «Այսպես ո՞ւր կհասնենք», - լրացնում է Սարյանը: «Չնայած դիլետանտիզմը տարածված է հատկապես երիտասարդության շրջանում, իմ հույսը էլի երիտասարդների վրա է: Նրանք պե՛տք է որ հասկանան այդ չարիքի վտանգավորությունը: Նրանք կհասկանա՛ն, որ դա մի օր ազգային աղետի կարող է բերել»,-ասում է Վարպետը:

ՎԻԼՅԵԼՄ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

«Երեկոյան Երևան», N-206 (10178),
11 նոյեմբերի 1999թ.:

ԳԻՏՆԱԿԱՆԸ ՏԵՍՆՈՒՄ Է ՍԿՍԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԺԱՆԱՎՈՐ ՇԱՐՈՒՆԱԿՈՂՆԵՐԻ

«Մարդ պետք է լինի աշխատասեր և արհեստավարժ իր աշխատանքում». սա ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳԱԱ թղթակից անդամ Արամ Շահինյանի նշանաբանն է:

Արամ Շահինյանն ականավոր ակադեմիկոս, Հայաստանում ժամանակակից մաթեմատիկական գիտության, մաթեմատիկական գիտական դպրոցի, մաթեմատիկայի և մեխանիկայի ինստիտուտի հիմնադիր Արտաշես Շահինյանի որդին է: Սակայն նա, ի տարբերություն հորը, մաթեմատիկայի փոխարեն ընտրել է ֆիզիկան, քիմիան ու կենսաբանությունը: Սովորել է ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետում: Ապա վերջին կուրսում ուսանել է Սանկտ Պետերբուրգի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետում, որն ավարտելով, 1962թ. Մոսկվայում ընդունվել է ասպիրանտուրա և ուսումը շարունակել Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում: Այստեղ Ա. Շահինյանը ականավոր քիմիկոս Նիկոլայ Ենիկոլոպյանի ղեկավարությամբ ուսումնասիրել է «Պոլիմերման պրոցեսները»: Սա մի գործընթաց է, երբ փոքր մոլեկուլների միմյանց միանալու միջոցով առաջանում են մեծ մոլեկուլներ, որոնք ունեն յուրահատուկ հատկություններ: Պոլիմերներ են՝ ռետինը, կաուչուկը և այլն:

Արտաշես Շահինյանի որդին՝ Արամ Շահինյան

«Ես ուսումնասիրում էի քիմիական պրոցեսների ֆիզիկական երևույթները: Իմ ուսումնասիրության առարկան հատուկ դասի պոլիմերներ էին, որոնք մեծ կիրառություն ունեին տարբեր բնագավառներում: Իմ թեզը՝ «Հետերոատոմ պարունակող մոնոմերների պոլիմերացման պրոցեսները», պաշտպանել եմ Մոսկվայի Ֆիզիկատեխնիկական հայտնի ինստիտուտում և ստացել ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան»,- ասում է պարոն Շահինյանը: Հետո նա վերադարձել է Երևան, աշխատել է Օրգանական քիմիայի ինստիտուտում, ապա՝ ՀՊՃՀ-ում, հետո՝ Գորիսում բացված ԳԱԱ-ի ֆիզիկատեխնիկական կենտրոնում և, վերջապես, ինչպես գիտնականն ինքն է նշում, հանգրվանել է ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտում: «Այստեղ իմ հետաքրքրությունները սկսեցին ավելի ընդարձակվել. ներթափանցեցի կենսաբանության ոլորտ: Սկսեցի ուսումնասիրել բջիջների թաղանթները»,- հիշում է Ա. Շահինյանը: Թաղանթները ապահովում են արտաքին միջավայրի հետ բջիջների փոխազդեցությունը, չեն թողնում, որ բջիջները քայքայվեն: Բացի այդ, դրանք փոքր գործարաններ են, որտեղ արտադրվում են սպիտակուցներ, ԴՆԹ-ի մոլեկուլներ և այլն: Օգտագործելով իր գիտելիքների հարուստ պաշարը՝ Ա. Շահինյանն ուսումնասիրեց «միցել» կոչվող փոքր թաղանթները, որոնք և՛ շարժման մեջ են, և՛ կարգավորված՝ հեղուկ-բյուրեղական վիճակում են: Այսինքն՝ նրանք և՛ հեղուկ են, և՛ բյուրեղ, որովհետև երկուսի հատկություններն էլ ունեն: Օրինակ՝ հեղուկ-բյուրեղից են պատրաստում հարթ էկրանով համակարգիչների էկրանները, ժամանակակից ժամացույցները, տափակ հեռուստացույցների էկրանները: Այս ուսումնասիրությունների արդյունքներն ամփոփվեցին Ա. Շահինյանի «Միցելային համակարգերի կառուցվածքները և այնտեղ տեղի ունեցող քիմիական պրոցեսները» դոկտորական թեզում, որը նա պաշտպանեց Մոսկվայում՝ ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի Քիմիական ֆիզիկայի ինստիտուտում, և ստացավ քիմիական գիտությունների դոկտորի աստիճան: Ապա վերադարձավ Հայաստան և այս անգամ սկսեց ուսումնասիրել թաղանթների բեկորներում տեղի ունեցող ֆիզիկական երևույթները, որի արդյունքում պաշտպանեց երկրորդ թեզը և դարձավ նաև ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր: Այսօր Ա. Շահինյանը Հայաստանում միակ գիտնականն է, որ ունի երկու դոկտորական աստիճան և երկու դոկտորական դիպլոմ:

«Իմ ուսուցիչը՝ ակադեմիկոս Ենիկոլոպյանն ասում էր, որ գիտնականը տասը տարին մեկ պետք է փոխի գիտական իր ուղղությունը: Քանի որ, եթե տասը տարի աշխատում ես նույն ուղղությամբ, ապա սկսում ես մանրանալ և մանրուքներով զբաղվել: Այդ պատճառով պետք է դա թողնել նոր, թարմ ուժերի ուսումնասիրությանը և փոխել ուղղությունը: Եվ ես փոխեցի իմ ուղղությունը»,- ասում է Ա. Շահինյանը: Այսօր նա զբաղվում է գիտական մի ուղղությամբ, որը կոչվում է «21-րդ դարի գիտություն»: Սա նշանակում է, որ այսօր գիտնականները կարող են գիտափորձեր կատարել համակարգչի միջոցով: Այժմ գիտնականն իր փոքր խմբի հետ ուսումնասիրում է համակարգչային կենսաբանություն և քիմիա: Օրինակ, քիմիկոսը կոլբայի մեջ ցանկանում էր ինչ-որ դեղ սինթեզել և դրա համար փորձում է տարբեր մոլեկուլներ միացնել իրար, որպեսզի ստանա ցանկալի նյութը: Եթե դա նրան չէր հաջողվում, ապա փորձում է այլ եղանակներով և այդպես, այնքան ժամանակ, մինչև գտնում է խնդրի ճիշտ լուծումը: Այժմ այս նոր՝ «21-րդ դարի գիտությունը» թույլ է տալիս այդ փորձը կատարել համակարգչի միջոցով՝ խնայելով և՛ ժամանակ, և՛ մեծ գումարներ թանկարժեք նյութերը գնելու համար: Սակայն մեկ համակարգիչը կարճ ժամանակում չի կարող լուծել իրեն առաջադրված խնդիրը, քանի որ գոյություն ունեն հարյուր հազարավոր մոլեկուլներ և ատոմներ, և յուրաքանչյուրի փոխազդեցությունը հաշվելու համար մեքենային շատ ժամանակ է անհրաժեշտ: Այդ պատճառով աշխարհում սկսել են մշակել գերհամակարգիչներ, որոնցում տեղադրված են հարյուրավոր համակարգիչներ: Դրանցից յուրաքանչյուրը լուծում է առաջադրված խնդրի իր մասը, ապա այդ ամենը համադրվում է և ստացվում վերջնական լուծումը: Մի քանի տարի առաջ այդպիսի գերհամակարգիչ իր 128 պրոցեսորներով ստեղծվեց նաև ՀՀ ԳԱԱ-ի Ինֆորմատիկայի պրոբլեմների և ավտոմատիկայի ինստիտուտում, որի միջոցով աշխատում է Ա. Շահինյանն իր խմբի հետ: «Համակարգչային գիտափորձերի միջոցով մենք ուսումնասիրում ենք երևույթները շատ կարճ ժամանակում: Օրինակ, եթե աշխարհում նմանատիպ երևույթներ ուսումնասիրում են 40-50 նանովայրկյանում, ապա մենք այն ուսումնասիրում ենք 100 նանովայրկյանի ընթացքում: Սա շատ մեծ բան է: Երբ մեր աշխատանքներն ուղարկում ենք արտասահման տպագրելու, ստանում ենք մեծ արձագանք՝ որ այդ բնագավառի առաջատարներից ենք»,- նշեց Ա. Շահինյանը:

Արտասահմանյան մի շարք ընկերություններ, որոնք նմանատիպ համակարգչային ծրագրեր են պատրաստում և վաճառում, կապ են հաստատել ՀՀ ԳԱԱ-ի հետ Ա. Շահինյանի ղեկավարած խմբի հետ համագործակցելու առաջարկով: Արամ Շահինյանը հույս ունի, որ համագործակցությունը տեղի կունենա, և ժամանակակից այս գիտությունը Հայաստանում ավելի կզարգանա, քանի որ Հայաստանում նա շարունակում է հանդիպել խելացի երիտասարդների և տեսնում է սկսած աշխատանքի արժանավոր շարունակողների:

ՎԻԿՏՈՐՅԱ ԲՈՒՌՆԱԶՅԱՆ

ՔԱՐՏԵԶԸ ԵՎՍ ՊԻՏԻ ԼԻՆԻ ԱՆՍԽԱԼ

Հսկայական է տպագիր խոսքի ուժը, և որևէ հեղինակի անգամ ակնհայտ ներկայացրած սխալ միտքը, տեսակետը, փաստն ընդունվում են որպես աներկբա ճշմարտություն, երկար մնում շրջանառության մեջ: Բազմիցս նման իրավիճակների պատճառով ուսանող երիտասարդների և մասնագետների միջև ծագած վեճերի ականատեսն ու մասնակիցն եմ դարձել, ուստի, հարկ եմ համարում անդրադառնալ քարտեզներում տեղ գտած որոշ սխալների:

Վերցրեք հայ հեղինակների Անդրկովկասի և Հայաստանի 18-րդ դարի և 19-րդ դարի առաջին կեսի իրադարձություններին նվիրված աշխատությունները, օրինակ, «Հայկական սովետական հանրագիտարան»-ը[1], և դրանց բովանդակությունը լուսաբանող քարտեզներում կտեսնեք Ադրբեջանի Հանրապետության Ղազախ քաղաքը, այդպիսի բնակավայր մինչև 19-րդ դարի ավարտը չի եղել այդ տեղում: Պարզապես, մեր մասնագետները թյուրիմացաբար պատմություն են ստեղծել օտարի համար:

Հայտնի է, որ պարսից շահն իր թիկունքն այլադավան և խռովարար հայերից ու վրացիներից ապահովելու նպատակով 16-րդ դարի կեսերին տերության կենտրոնական նահանգներից Անդրկովկաս է վերաբնակեցնում թաթարական շամշադին, ղազախ և բորչալլու մեծաքանակ ցեղերին, որոնց հաստատում է հայոց Ուտիք աշխարհի Գարդմանք և Տավուշ, Գուգարք աշխարհի Ջորափոր, Կանգարք, Կողբափոր և Ծորափոր գավառներում: Իրենց հայրենիքից բնիկների՝ հայերի դուրս մղման պայմաններում, եկվոր ցեղերի անունով նորահաստատ գավառները սկսել են կոչվել Ղազախ, Բորչալլու և Շամշադիլ (ապագայում՝ Շամշադին): Այդ ցեղերը երկար ժամանակ չեն ամրացել որոշակի տեղում, քանզի շարունակել են իրենց նախնիների վաչկատուն կյանքը՝ զբաղվել արոտային անասնապահությամբ: Իսկ դրա էությունը կայացել է հետևյալում. աշնան կեսից մինչև մայիս ամիսը թաթարական այդ ցեղերն իրենց խաշները պահել են Կուր գետի աջափնյակում տարածվող ձմեռային արոտներում, իսկ մայիսին քշել Հայաստանի զովասուն սարերը: 18-րդ դարում Դաղստանի լեռնականների չդադարող անողորմ արշավանքների հետևանքով գրեթե հայաթափվում են Հայաստանի հյուսիսարևելյան գավառները, հատկապես՝ ներկայիս Տավուշի մարզը: Սակայն այդ դարավերջին սկսում է դրանց վերաբնակեցումը հայերով:

1801թ. Արևելյան Վրաստանը, որի կազմում էին այդ պահին Բորչալլուն, Ղազախը և Շամշադիլը միանում է Ռուսաստանին: Դրանք կոչվում են թաթարական դիստանցիաներ և մտնում Լոռվա գավառի կազմի մեջ, բայց նստավայրի համար փոքրիշատե հարմար բնակավայր չգտնելու պատճառով երկար ժամանակ գավառապետն իրեն վստահված վարչական միավորը ղեկավարում է Թիֆլիսից[2]: Նաև ավելացնենք, որ ռուսական իշխանությունների 1802թ. մայիսի 8-ին անցկացրած աշխարհագրում և 1806, 1817, 1839, 1853 թվականներին կազմած կամերալ ցուցակներում չկա Ղազախ անունով բնակավայր: 1840-ականների կեսերին, շինարարություն իրականացնելուց հետո, նորաստեղծ Ղազախի գավառի կենտրոն են դարձնում թաթարական Դաղքյասաման գյուղը, որը գտնվում է ներկայիս Ղազախ քաղաքից 4 կմ հյուսիս-արևելք:

1860-ականների ավարտին կառուցվում են Թիֆլիս-Ելիզավետպոլ ճանապարհը և դրա միջնամասից՝ Աղստև գետի աջ ափից, սկիզբ առնող խճուղին, որը ձգվում էր դեպի Երևան: Ճանապարհների այդ խաչմերուկը շատ հարմար են գտնում նոր բնակավայր հիմնելու համար: Քաղաքի հիմնարկեքը տեղի է ունենում 1881թ. փետրվարի 13-ին[3] և կոչում են Ղազախ: Հիմնական բնակիչները հայեր, պարսիկներ և ռուսներ էին: 1890-ականների սկզբին Դաղքյասաման գյուղից այստեղ են հաստատվում գավառապետը, հաշտարար դատավորը, հիվանդանոցը, զորանոցը, փոստը, հեռագրատունը, գանձարանը, երկդասյա քաղաքային ուսումնարանը, շուկան և արհեստանոցները: Այդ ժամանակ Մկրտիչ Ջաղեթյանի (Բանանց գյուղից) միջոցներով կառուցվում է Սբ. Վարդան Մամիկոնյան եկեղեցին: Ուրեմն, քարտեզներում 1881թ. վաղ Ղազախ քաղաք այդ տեղում ցույց տալը սխալ, իսկ շարունակելու դեպքում՝ միայն ջուր լցրած կլինենք օտարի ջրաղացին:

Մեր օրերում՝ Հայաստանի անկախացումից և վարչատարածքային փոփոխություններից հետո, անհրաժեշտ է դրանց բովանդակությունը լուսաբանող քարտեզների ստեղծումը: Այսպիսիք տարբեր մոտեցումներով նվիրվել են նաև մարզերին: Փաստը, անշուշտ, ողջունելի է: Սակայն դրանք զերծ չեն սխալներից, շտապողականության կնիք են կրում և շփոթության մեջ են գցում մանկավարժներին, ուսանողներին և քարտեզներից օգտվողներին: Օրինակ, «Տավուշի մարզ» քարտեզը, որը 2003թ. լույս է ընծայել «Պարմանի» հիմնադրամը, հեղինակները Տիգրան և Արամազդ Բաբայանները են: Աշխատության մեջ խախտված են Գուգարաց լեռնահամակարգին պատկանող Պաղակն, Պայտաթափ, Գյոգդաղ գագաթների, Ոսկեպարի Աստվածածին, Կողբի Մշկավանք, Լուսահովտի Մորո Ջորո վանքերի, Կայան գյուղի տեղադրությունները: Չգիտես, ինչու բացակայում է Ոսկեպար գետը և Ոսկեպար է անվանված նրա վտակ Քարահան (Կիրանց) գետը: Իսկ Քարահանի վտակ Խնձորկուտը (Սամսոն) բերված է թաթարական Ակսիպարա անունով: Տավուշի մարզում բացակայում է նաև Աղստև գետի աջակողմյան Գետիկ վտակը: Դրան հակառակ, մարզի տարածքում նշվել են նոր բնակավայրեր՝ Գետկաձոր և Քարագյուղ: Անխնամ է կազմված քարտեզի «Բնակավայրերի բարձրությունը ծովի մակարդակից» աղյուսակը, որի պատճառով Աղստևի հովտի ամենացածրադիր կետում գտնվող Կայան գյուղի դիմաց նշված է 1050 մետր թիվը, իսկ նրանից բարձր՝ սարավանդին թառած, Դիտավանի դիմաց՝ 780 մետր թվերը: Նաև անհասկանալի է, թե ինչու «Պայմանական նշաններ» բաժնում դրանց բացատրությունների համար բերված են Փամբակ, Արմավիր, Արարատ, Տաթև, Հանքաջուր, Արագած, Սպիտակի լեռնանցք տեղավայրերի անունները, երբ այդ տերմիններն արտացոլված չեն քարտեզում:

Միով բանիվ, քարտեզագրությունը ևս համարելով գրավոր խոսքի մի կարևոր տեսակ և գիտություն, նրան պիտի մոտենալ պատասխանատվությամբ և քարտեզներից օգտվողների նկատմամբ՝ հարգանքով:

ՌՈՒԲԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՇԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հայկական սովետական հանրագիտարան, Երևան, 1987, 128-րդ էջից հետո քարտեզը:

2. Ռուբեն Սիմոնյան, Տավուշի մարզ, Երևան, 2003, էջ 198:

3. Մակար եպս. Բարխուտարեանց, Արցախ, Երեւան, 1999, էջ 190-191:

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԻՎԱՅՐ ԾՐՑՈՒՄՆ ՈՒ ԽԵՂԱԲԵԿՈՒՄԸ ՄԵՐ ՕՐԵՐՈՒՄ

Սկիզբը՝ թիվ 9-րդ համարում

4. Մեր բազում հարգամեծար նախնիների հայերենին տրված վեհապանծ գնահատականների առկայության դեպքում, հնարավոր չէ հանդուրժել անկախություն ու ազատություն հռչակած Հայաստանում՝ լեզվի նկատմամբ կիրառվող քաղաքականությունը: Յոթ տասնյակ կուսակցություն ունենք, բայց ազգի՝ հոգու, արյան, պատվի, ինքնության և այլ բարեմասնություններով բնութագրվող ազգային լեզվի մասին օրենք չունենք: Հրապարակի վրա է 1993թ. ապրիլի 17-ին ընդունած օրենքը, որը ժամանակին նզովվեց, որի մասին շատ հոդվածներ գրվեցին, ես էլ գրեցի. «Լեզվի մասին օրենքը ամեն բանի կնմանի, բայց օրենքի չի նմանի» վերնագրված հոդվածը:

Ողջ ազգի սեփականությունը՝ լեզուն «փեշքեշ» էր տրվել «պաշտոնատար անձանց», իսկ լեզվի անաղարտության պահպանումը՝ պարտավորիչ էր սպասարկման որոշ ոլորտներում աշխատողներին:

Ազգային ժողովում հայերենը, նրա բոլոր բաժինները՝ քերականությունը, բառագիտությունն ու բառակազմությունը, շարահյուսությունն ու շարադասությունը, հնչյունաբանությունը, առոգանությունը տակնուվրա անելու մի հսկայական «փաթեթ» ունեն ձեռքերում:

Ազգային Ժողովի լեզուն գրագետ հայերեն չէ: Լեզուն, հաղորդակցման բացառիկ, ամենակարևոր միջոցը լինելով, նաև տրամաբանության, մտածողության հայելին է: Մարդն, ինչպես մտածում, տրամաբանում, այնպես էլ խոսում է: Ազգային ժողովում անմիտ, տրամաբանությունից զերծ խոսքերից նշենք եզակի օրինակներ (առանց հեղինակների անունները տալու)՝ «Մենք, պատգամորներս մեր դեմ դրած կոճակը չենք ընդունում որպես պատասխանատվություն», «Շուկայի պայմաններում չի կարելի մարդկանց ստիպել, մի տեղից, գրիժայի նման, դուս կտա», «Իրական ռեսուրսների անտեսման հետևանքով մենք գնում ենք տասնապատիկ նշանակություն ունեցող ռեսուրսների անտեսմանը: Ուզում եմ, որպիսզի մեր ռեսուրսները չդիտենք որպես ռեսուրսներ», «Հարկային տեսչությունը սկսել է շնչել փոքր քայլերով», «Գինը չի նշանակում ի օգուտ բանակցությունների, նայած, թե ի՞նչ մարժա ենք տալիս, ուրեմն գինը պետք է հանենք» և այլն, և այլն:

Ազգային ժողովում մայրենի լեզուն խեղաթյուրելը առավելագույնս դատապարտելի է, որովհետև ազգային կոչվող այդ ժողովը նաև օրինաստեղծ է: Կարդում ես ԱԺ-ի «ընդունած և շրջանառության մեջ դրած» օրենքները (իրենց արտահայտությունն է, օրենքը ապրանք չէ, դրամ չէ, որ «շրջանառության մեջ դրվի», օրենքը ընդունվում, հաստատվում, կատարվում կամ չի կատարվում), կարդում ես «հեռուստատեսության ու ռադիոյի մասին», «գովազդի մասին» օրենքները ու զարհուրում անգրագետ, խառնիճաղանջ, անհասկանալի լեզվից: Օրենքները ողողված են բանական մտածողությանը միանգամայն խորթ, վնասաբեր «մտքերով»: Նշեմ դրանցից միայն մեկը. «Գովազդի բառացի ճշմարտացիությունը չի պաշտպանում՝ այն անբարեխիղճ համարելուց, եթե գովազդի ընդհանուր բովանդակությունը հասկացվում է այլ իմաստ» (Հայաստանի Հանրապետության օրենքը ընդունված Ազգային ժողովի կողմից, 1996թ., 30 ապրիլի, 18 հոդ., 5 կետ):

Ամոթ է: Բառացի ճշմարտացիությունը լեզվի, խոսքի երանելագույն վիճակի հավաստիքն է, այդ դեպքում, բացառվում է այլ իմաստով հասկացվելը:

Շուտով կբոլորեմ կյանքիս 9-րդ տասնամյակը, հաճախ ստիպված նայում եմ հեռուստացույց ու ոչ մի կերպ չեմ հասկանում, թե ինչո՞ւ է հանրապետության հեռուստատեսությունը Ազգային կոչվում: Ինչո՞ւ է հեռուստատեսությունը այդքան հրապուրված արևածոր, հրազենների կրակոցներով ունկնդրին խլացնող ամերիկյան, անմեղսունակներին սազական բրազիլական և այլ ֆիլմերով:

Ինչո՞ւ է ամբողջ օրը էկրանը ողողված օտար լեզուներով, ինչո՞ւ ոչ ոք պատասխանատվություն չի կրում հաղորդումների և հաղորդավարուհիների հեղաբեկված հայերենի համար: Լեզուն այնքան են աղավաղում, որ օրեկան հարյուր անգամ լսելով՝ «Մի հապաղիր, սնիկերսիր» պատգամը, երկյուղում ես, որ հեռուստատեսության բառապաշարում անհապաղ կհայտնվեն խորովածիր, քյաբաբիր, հերիսայիր, տոլմայիր և նման այլ բառեր: Հեռուստատեսությունները ազատորեն դուրս են մղել հայերենը: Հաղորդվում են կրկնօրինակված ֆիլմեր, որտեղ լեզվական բազմաթիվ սխալների հետ հայերենը այնքան անարգված է, որ օտար բնագրի հետ միաժամանակ առաջ ու ետ ընթանալով, դառնում է բոլորովին անհասկանալի: Ամբողջ օրը հայերենի փոխարեն ռուսերենով կամ այլ լեզուներով գովազդներ, հայտարարություններ են հրամցվում հեռուստադիտողին:

Հոգնեցնում, նաև զայրացնում են անկողնային մերկությամբ երգչուհիների օտարալեզու, երկարատև ճոճողոցները:

Ազգի ինչի՞ն են պետք «Թաքնված տեսախցիկ», «Վերվարածները», «Նէվերայատնի պյանա», «Մեր բակ 1, 2, 3», «Էլի մի ծայն», զանազանանուն շոուները, որոնցում բակերից մեկում բուրդ չփխող դերասանի նման, չփխում են ազգային լեզուն:

Շատ ու շատ բաներով է հեռուստատեսությունը խաթարում, աղավաղում հայերենը: Անհրաժեշտ եմ համարում ընդգծել, որ հայերենին հատուկ է հստակ, կայուն հավասարակշռված առոգանությունը: Զայրացուցիչ է, որ մեր գեղատես հաղորդավարուհիները այն վերափոխում են ելևէջող, երգեցիկ, օտար, հայերենին խորթ առոգանությամբ և բավական ժամանակ լսելուց հետո միայն գլխի ես ընկնում, որ խոսքը հայերեն է:

Ինչո՞ւ Ազգային ժողովը հետամուտ չի լինում «իր ընդունած և շրջանառության մեջ դրած» օրենքը կատարելուն, որտեղ սահմանել է, թե հայրենական արտադրության հեռարձակումը չի կարող եթերաժամի 65 տոկոսից պակաս լինել: Վերջապես հեռուստաընկերությունները պարտավոր են ապահովել իրենց հաղորդումների լեզվի անաղարտությունը:

Ի՞նչ ասեմ, խոսքս, ինչպես ժողովուրդն է ասում, «ջոջ» (մեծ) պասից երկարեց», բայց թեև շատ բան մնաց ասելու, այդուհանդերձ ավարտենք հիշելով մշեցիների մի առածը. «Զմփզմփան ջրին ըսին, հօ՞րի (ինչո՞ւ) ձենդի գիքա, (աղմկում ես) ըսէց. «Տակսի քարոտ է»:

Թալինի շրջանի մշեցիներով բնակեցված գյուղերից մեկում էի: Զրուցում էի կյանքի բեռան տակ կքած մի գյուղացու հետ: Չէի կարող չհամաձայնել անառարկելի հետևյալ մտքի հետ. «Լաօ, (որդյակ) ազատություն ուզեցինք, անտերություն ստացանք» ճշմարտաշող, անառարկելի մտքի հետ:

ՍԻՐԱՆՈՒՇ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ-ԹԱՓԱԼՑՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու

Մի նետվիր կանանց վրա,
ինչպես շունն է նետվում ուտելիքի վրա,
Որ գցում են նրան:

Ժամանակից շուտ տրվելով կնոջը,
Մի դառնա շան նման,
Որն ուտում է և կուլ է տալիս այն,
Ինչ գցում են նրան:

Եթե դու ցանկանաս կանանց,
Ապա համբերիր, զսպիր քո սիրտը,
Մինչև չդառնաս ամուր ու
ավարտուն տղամարդ:

Իմացիր, որ եթե մեղր ստանալու համար
Բացեն խակ ագավան,
Նա հյութ չի ունենա ու մեղր չի տա,
Այլ կփչանա միայն:

Մեղրը հանելու համար, նախքան նրան բացելը,
Թողնում են, որ աճի, հասնի կատարելության:
Եվ միայն այդ ժամանակ է ստացվում մեղրը:

Դու էլ պետք է այդպես վարվես:
Նախքան կնոջ հետ հանդիպելը, դու պետք է
Աճես ու ամրանաս:

Եվ այդ ժամանակ դու պատրաստ կլինես
Ամուսնության,
Կունենաս բարձրահասակ, ամուր
Արագաշարժ ու գեղեցիկ որդիներ...
Հանուն մեր Հայրենիքի,
Հանուն մեր Ազգի փառքի ու պատվի,

Հանուն մեր Մեքսիկական կայսրության,
Հանուն մեր Աստված ու Տիրակալ Հուիթցիլոպոչթլիի
Եվ ի պատիվ նրա Հավերժ Հիշատակի...

(Հին ացտեկյան պոեզիա)

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԽՄԲԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Խորիմաստ ու գեղեցիկ վերլուծությամբ այս գրական ժառանգությունը, հիրավի, հուշում է այն բարձր մակարդակի կրթադաստիարակչական ինստիտուտի մասին, որ առկա էր Ացտեկյան կայսրությունում: Այն մեզ հուշում է նաև, որ հզոր պետական մեքենան ինքնին պետք է ենթադրի հասարակության բարոյական բարձր ցենզ, որի շնորհիվ առողջ դաստիարակության մթնոլորտում ծնվում ու զարգանում է ֆիզիկապես և հոգեպես առողջ սերունդ...

Արտասահմանյան և այժմ նաև տեղական, անբարո լուսանկարներով ու բովանդակությամբ, «ազատ սիրո» խորհրդատու ամսագրերի հեղեղը երկար ժամանակ է ինչ ընդունել է մեր ազգային անվտանգությանը սպառնացող չափեր: Այսօր ամեն քայլափոխի աչքի են զարնում կնոջը «կնոջ» միջոցով վարկաբեկող, նրա արժանապատվությունը ամենաստոր ձևով վիրավորող պատկերները: Բանը հասել է այնտեղ, որ ստեղծվել է դրանց վաճառքի «սեղանիկային» ցանց, որի գործունեության համար վաճառողներ, պարզ բան է, միշտ էլ կգտնվեն: Իսկ մամուլի կրպակները վերածվել են դրանց գովազդման կատարյալ ասպարեզի...

Նման բարձիթողության պայմաններում շարունակում է խեղվել հայ մարդու հոգևոր աշխարհն ու աշխարհընկալումը: Եվ առաջին հերթին՝ երիտասարդության և այն մանուկների, որոնք գայթակղված աչքերով անցնում են այդ կետերի կողքով: Քանզի գովազդի օրենքին համաձայն, տեսադաշտում անընդհատ կրկնվող, թող որ, միօրինակ պատկերները իրենց ազդեցությունն են թողնում զգայական (ըստ Ֆրեյդի՝ ենթագիտակցական), ապա և գիտակցական մակարդակներում:

Այս ամենը հակասում է մեր Ազգային արժեքային համակարգին, մեր Բարոյականին: Խաթարվում և խեղվում է Տեսակի սեռային և սեռական ընկալման կերպը, դրանով իսկ աղճատելով Տեսակն ինքնին: Խնդրո առարկա ամսագրերի միջոցով, հաճախ կեղծ բժշկագիտականության շղարշի ներքո, քարոզվում է կնոջ (տվյալ դեպքում՝ հայ կնոջ) ոչնչացումը, որպես կենսափիլիսոփայական և գեղագիտական բնատուր արժեքային համալիր՝ իր գործառութային համակարգով: Փորձ է արվում կնոջը զրկել կանացիությունից, վերածելով նրան լայն, զանգվածային սպառման ապրանքի, իսկ ընթերցողից ձևավորել այդ ապրանքի սպառողի կամ նմանակողի... Եվ այս ամենն արվում է ինչ-որ կասկածելի ազատության, ավելի ճիշտ՝ իմիտացված ազատության կոչերի ներքո: Ցանկացած հոգեբան կնշի, որ ֆոնը ինքնին ձևավորում է այդ կոչը, ընկալման համապատասխան կետը:

Գիտակից մարդկանց դրանք տհաճության և անհարմարության զգացումներ են պատճառում՝ իրենց ամենքայլափոխյա տեսադաշտային ներխուժման:

Այսքանից հետո դժվար է հեռու մնալ այն մտքից, որ գործ ունենք մեր հասարակության նկատմամբ իրականացվող ռազմա-հոգեբանական արշավի հետ...

Տեղին է այստեղ հիշատակել, որ արդեն գոյություն չունեցող Խորհրդային Միության վերջին տասնամյակում խնդրո առարկա նմանատիպ արատավոր երևույթի դեմ պայքարը ղեկավարության խոր ուշադրության կենտրոնում էր: Խոսքը ընդհատակյա «սովետական պոռնոինդուստիայի» մասին է: Պատահական չէ, որ կարևորելով հարցի ողջ լրջությունը, նրա դեմ պայքարում հատուկ և առանցքային դեր հատկացվեց ՊԱԿ-ին (ÊÃÁ): Ավելին, այդ պայքարում իր ողջ զինանոցով ներգրավված էր նրա Երկրորդ գլխավոր վարչությունը (ÁÃÓ)՝ ներքին անվտանգության ու հակահետախուզության պատասխանատուն... Բանն այն է, որ համաձայն որոշ, ըստ որում, արևմտյան աղբյուրների հրապարակումների, հիմնականում ոչ-սլավոնական ծագում ունեցող (վրացի, չեչեն, հրեա, թաթար, ադրբեջանցի) քրեական հեղինակությունների կողմից ղեկավարվող ու «սովետական պոռնոգրաֆիայի» ձևավորմամբ ու զագացմամբ զբաղվող կազմակերպված հանցագործ խմբավորումները (Î Ï Ã) անուղղակի, որոշ դեպքերում էլ ուղղակի, կապի մեջ էին NATO-ի երկրների, հատկապես ԱՄՆ-ի, հատուկ ծառայությունների հետ... Սա ոչ ի միջի այլոց...

Այսպիսով, խնդիրը կայանում է հասարակության, հատկապես մանկապատանեկան խմբի, հոգեբանական աշխարհահայացքային անվտանգության ապահովման, որով և մարդկային իրավունքների պահպանման մեջ: Սակայն, դրա համար թերևս պահանջվի բոլորիս վերադաստիարակությունը: Իսկ դրա առարկայական ապացույցն ու հետևանքը կարող է լինել այն, որ իրադրությունը ճիշտ գնահատելուց հետո, օրենսդրորեն կանոնակարգվի հիշյալ վաճառակետերի գործունեությունը (նման մի փորձ ՀՀ Ազգային Ժողովը կարծես փորձեց անել): Եվ հավանաբար նաև դրանք նկատի ունեն, երբ խոսում են գործազրկության կրճատման մասին: Ի դեպ, քաղաքակիրթ աշխարհում նման վաճառակետերի գոյությունը օրենսդրորեն խիստ կանոնակարգված է... Ճիշտ կլինի հատուկ կետեր (եթե ոչ՝ մեկը) սահմանել քաղաքում նմանատիպ ամսագրերի վաճառքի համար: Նույնը վերաբերվում է և մեր մյուս քաղաքներին, ընդհուպ, և հատկապես միչև Ստեփանակերտ...

Արժե այստեղ հիշել մեծ մտածող Խոմեյնիի խոսքերը, թե «Վտանգավոր ազատությունները պետք է սահմանափակել», թե «դաստիարակությունը և բարոյական մաքրումը լուսավորությունից կարևոր են»: Եվ խնդիրը ոչ միայն երեխաներին ու պատանիներին է վերաբերում, այլև մեզ՝ բոլորիս...

ՄՈՒՇԵՂ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԻ ՔԻՉ ՊՂՊԵՂ՝ ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ՄԵՋ

Սկիզբը՝ թիվ 9-րդ համարում

ՄԱՅՐԱԿԱՆ ՍԻՐՈ ԱՎԵԼՑՈՒԿԸ ՈՐԴՈՒ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ

Մայրական սիրո բացառիկության ծայրահեղ դրսևորում կարող է դիտվել այն փաստը, երբ կինը սկսում է արժեզրկել կին-տղամարդ հարաբերությունները որպես այդպիսին: Այս դեպքում ամուսնու նկատմամբ վերաբերմունքը կարող է ստանալ հետևյալ արտահայտություններից որևէ մեկը.

ա) Կինը պայմանականորեն, իմիջայլոց է կատարում իր պարտականությունները, ցուցադրելով անտարբերություն, ծայրահեղ դեպքերում՝ նաև արհամարհանք ամուսնու նկատմամբ: Ինչն արտահայտելիս, երբ անգամ նա վախ է զգում և փորձում է զսպել է դա, միևնույնն է, նրա վերաբերմունքի մեջ գերակշռում է անտարբերությունը:

բ) Կինը ագրեսիվ է տրամադրվում ամուսնու նկատմամբ՝ անընդհատ քննադատելով նրա յուրաքանչյուր արարքը:

Նման վերաբերմունքը կանայք արդարացնում են անցյալում կրած վիրավորանքներով, հիասթափություններով և անգամ բռնության դեպքերով: Սակայն այս վարվելաձևը ոչ միայն չի նպաստում դրական փոփոխություններին, այլև ի զորու է վերացնել ընտանեկան խաղաղության վերջին մասունքները: Ուշադրությունից ու հարգանքից զրկված տղամարդկանց մեծ մասը կարող է անգամ առաջացած տարիքում դիմել այնպիսի բացասական սովորությունների, ինչպիսիք են՝ ալկոհոլի չարաշահումը, թմրամոլությունը...:

«Եթե կանայք գիտակցեին տղամարդու սիրո նկատմամբ մայրական սիրո գերազանցության բացասական ներգործությունը և արգելեին դա, աշխարհում ամեն ինչ այլ կերպ կլիներ: Կնվազեին պատերազմները (հիմնականում տղամարդկանց կողմից հրահրվող), երեխաների և ամուսինների մահվան դեպքերը: Իսկապես, հարբեցողությունը, հիվանդությունները, տղամարդկանց վաղաժամ մահվան դեպքերը հաճախ իրենց հիմքում ունեն կանանց նկատմամբ սիրո չբացահայտվածություն, կամ այդ սիրո փոխակերպումը մայրական սիրո: Որոշ ազգերի մոտ մայրական սերը առավել վառ է արտահայտված»,- ասում է «Ուրախության գիտություն» գրքի հեղինակը:

ԵԼՔԵՐԻ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ

Երբ որդին, հաղթահարելով մայրական սերը, կարողացել է զարգացնել իր հատկանիշները, գտնել սիրած էակին և բացվել սիրո մեջ, իսկ մայրը չի փոխում իր մայրական վերաբերմունքը, բաց չի թողնում իր հասուն որդուն (օրինակ՝ միջամտում է, ասում է, որ նա անհասկացող է, ու այդ կինն իրեն երջանիկ չի դարձնի, կամ եթե տեսնի խնդիր ունեն, կբաժանի) այդ ժամանակ խնդիրներ են առաջանում նաև մոր մոտ. անխուսափելի են ծանր հիվանդությունները, որոնց հետևանքով զավակը ստիպված է լինում մեծ ուշադրություն դարձնել նրան: Հաճախ դրան է գումարվում նաև մեղքի զգացումը՝ «անուշադիր էի և...»: Եվ տուժում է իր կինը՝ դառնալով քավության նոխազ. խնդիրները որդու ընտանիքում շատանում են: Այստեղից հետևում է ավագ սերնդի հոգևոր զարթոնքի չափազանց մեծ կարևորությունը թե՛ իրենց և թե՛ իրենց զավակների ու թոռների համար: Չէ՞ որ արդեն հասունացած ու ինքնուրույնության ճանապարհի առաջին քայլերը կատարած տղամարդու համար նման վիրավորանքները, սեփական կամքի, ցանկության ու կարողությունների անտեսումը ստորացուցիչ է: Սա էլ, իր հերթին, կարող է ավելորդ գործոն հանդիսանալ հարսի կողմից սիրո նվազման համար:

Հաճախ թվում է, թե հայրը անտարբեր կամ չափազանց սառն է երեխաների նկատմամբ: Սակայն, եթե այդ զգացմունքները թվացյալ չեն, դրանք բացատրվում են միմիայն խանդի առկայությամբ, որ առաջանում է այն բանի հետևանքով, որ կինը հենց նրանց, այլ ոչ թե տղամարդուն է մեծ սեր ու ուշադրություն դարձնում: Իսկ կինը չի հասկանում, վիրավորվում է, խրատում նրան, որ քիչ է սիրում երեխաներին:

Հատուկ դիտարկում է պահանջում մոր և դստեր փոխներգործությունը: Մեծ բարդություններ են առաջանում, երբ հասուն դուստրը ապրում է միայնակ մոր հետ: Ի դեպ, ինչպես վկայում են հոգեբանական պրակտիկայում հանդիպող բազում դեպքերը, երբեմն բավական է, այսպես կոչված՝ հոգեբանական միայնակության զգացողությունը: Այսինքն՝ մայրը կարող է ունենալ ամուսին, այլ զավակներ, որոնք նրա հետ մի հարկի ներքո են ապրում, սակայն չեն կիսում նրա բոլոր համոզմունքները, կամ, ինչպես նրան է թվում, հաշվի չեն նստում նրա հետ: Ու եթե դստերը չի հաջողվում բացահայտել իր կանացի հատկանիշները, ընտանիք կազմել, ապա նա կարող է «խաչ քաշել» իր ճակատագրի վրա: Այս իրավիճակից ելքը հետևյալն է. մոր և դստեր հոգևոր զարթոնքը (երբեմն սա չափազանց բարդ, բայց ոչ անհուսալի ճանապարհ է): Անհրաժեշտ է, որ դուստրը ավելի կանացի դառնա և սկսի ինքնուրույն կառուցել իր կյանքը, նաև օգնի մորը նրա կյանքը կառուցելու հարցում:

Որոշ աղջիկների մոտ վաղ հասակից վառ արտահայտվում է մայրական սկիզբը: Եթե հատուկ միջոցներ չնախաձեռնել նրա դաստիարակության հարցում, ապա մեծանալով, նա կարող է ետ մղել մորը ընտանիքից՝ «երկու մայրեր» դժվարությամբ կարող են համատեղ ապրել մի կտուրի տակ: Բայց և դուստրը այդ դեպքում կարող է մնալ առանց ընտանիքի: Նրա համար միակ ընտանիք են դառնում եղբայրները, քույրերը, հայրը...

Վերը ներկայացվածից կարող է տպավորություն ստեղծվել, որ կյանքում տեղի ունեցող բոլոր իրադարձությունների համար պատասխանատվություն են կրում կինը: Ինչ-որ առումներով դա այդպես է. նրա յուրաքանչյուր քայլն ի զորու է անդառնալի ազդեցություն թողնել զավակի ողջ հետագա կյանքի վրա: Շատ են նման օրինակները պատմության ու գրականության մեջ: Օրինակ՝ ռուս հեղինակ Բ. Եֆրեմովը իր գրքերից մեկում, որպես Ալեքսանդր Մակեդոնացու ողջ հետագա կյանքի նախահիմք, ներկայացնում է մի դրվագ. երիտասարդ Ալեքսանդրը սիրահետում է ոչ ազնվական տոհմի մի աղջկա: Մայրը, իմանալով այդ մասին, արտաքսում է աղջկան, որից հետո էլ Ալեքսանդրը սկսում է իր անվերջ ճանապարհորդությունները...

Նույն տեղում հեղինակը պատմում է, որ հին հույները և շատ այլ ազգերի ներկայացուցիչներ 4-5 տարեկան արու զավակին աշխատում են հեռու պահել մորից՝ նրան առնական դաստիարակելու նպատակով:

Մյուս կողմից **անգերազանցելի ու անգնահատելի է տղամարդու դերը, քանի որ հենց նա է այն միակ հզոր ուժը, որն ի զորու է կնոջ մեջ կանացիություն արթնացնել և նպաստել վերջինիս գոյությանն ու զարգացմանը:**

Ինչպես հոգեբանական շատ երևույթներ, այս երևույթը ևս դժվար հաղթահարելի մի շրջան է հիշեցնում՝ կին-տղամարդ-մայր-զավակ: Այս շրջանի յուրաքանչյուր օղակ կարող է խույս տալ իր պարտականությունից, ասելով, որ իրեն հանդիպած տղամարդը ճիշտ չի վարվում իր հետ, տղամարդը կարող է մեղադրել իր մորը և այլն: Սակայն սա խնդրի լուծում չէ: Յուրաքանչյուրն իր հերթին կարող է ստանձնել պատասխանատվության այն բաժինը, որը վերահսկելի է իր կողմից: Մայրը կարող է սկսել ճիշտ դաստիարակության հիմքեր դնել իր և երեխաների հարաբերությունների միջև: Տղամարդը՝ նպաստել կնոջ մոտ սիրո ուժգնացմանը: Նույնն էլ կարող է անել կինը՝ վերահսկելով իր մայրական ու ամուսնական զգացմունքների ներդաշնակ բաշխումը:

ՆԱՐԻՆԵ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ
Հոգեբան

ՏԱՐԱՏԵՐԵՎ ԲԱՐԴԻ

Հնում ուռենին գեղանազ աղջիկ է եղել, իսկ բարդին՝ սիգաճեմ պատանի: Նրանք սիրում էին իրար: Բայց մի իշխանավոր որոշում է բարդու գրկից խլել ուռենուն և կնության առնել: Փախչելով բռնավորից՝ ուռենին ու բարդին մտնում են Արաքս գետը՝ լողալով հեռանում հայրենի եզերքներից: Իշխանը, շարժվելով գետեզերքով, ընկնում է նրանց հետևից: Տղան ու աղջիկը գիտեին, որ բռնավորի ձեռքը կընկնեին՝ հենց ափ դուրս գան: Բայց և այնպես հեռու գնալ չկարողացան, ուժասպառ եղան և Մեղրի ավանի մոտ դուրս եկան գետից: Տղան գիրկն առավ աղջկան և իր քղամիդի տակ այնպես ծածկեց նրան, որ երբ բռնավորը մոտեցավ, ուռենուն չտեսավ: Կարծելով, թե աղջիկը շարունակում է լողալ ջրում, իշխանը սկսեց չափչփել գետեզերքը: Գնաց-հասավ ծովափ, ետ եկավ Մեղրի և մնաց զարմացած. տղայի գետափ դուրս եկած տեղում մի բարդի է խշշում: Աղջիկն ու տղան, սիրո ուժով գրկախառնված, բարդու կերպարանքով ծառ են դարձել:

Հիմա Մեղրիում այդ ծառից վերընձյուղված տարատերև շատ բարդիներ կան: Ճաքճքված կեղևով նույն ծառի վրա կան և՛ ուռենու, և՛ բարդու ամենաբազմազան ձևի տերևներ: Մեղրու տարատերև բարդին Հայոց ծառաշխարհի հրաշալիքներից է:

ԲԱՐԴԻՆ ՉԵՆ ԿՌԱՑՆՈՒՄ

Բարդին կռացնես՝ քեզ վրա կընկնի:
Հայկական ժողովրդական առած

Բարձր Հայքում Բարդի անունով մի գյուղ է եղել: Հայոց աշխարհում ամենաշատ ու ամենաբարձր բարդիներն աճում էին այս գյուղի կողքին: Սրբազան ծառաստան էր: Քրմերը շինականներին համոզում էին, թե բարդիների կատարներին ապրում են աստվածները, որոնք մարդկանց հանդեպ բարեհաճ են դառնում, հենց որ նվեր են ստանում: Ով ինչ կարող էր՝ մի բան էր նվիրում այս կամ այն աստծուն և տանում ու դնում բարդիների տակ: Մեկը մի տիկ գինի էր դնում, մյուսը՝ նրբահյուս գուլպա ու խրաց, երրորդը մի ամիկ էր կապում ծառի բնին, չորրորդը որդան կարմիրով ներկված պատմուճան էր կախում ծառից: Նվիրատուն հաջորդ օրը գնում էր ծառի մոտ՝ իմանալու՝ աստվածները ընդունել են իր նվերը, թե ոչ: Գնում էր ու տեսնում, որ նվերը տեղում չէ, ուրախանում էր՝ կարծելով, թե աստվածներին հայտնած իր այս կամ այն ցանկությունը կիրագործվի: Քրմերը իրենք ընդունում էին այդ նվերները, շինականներին էլ հավատացնում էին, թե աստվածներն են տանում:

Մի անգամ շինականներից մեկը քրմապետին ասաց.

- Աստվածներն ո՞ւր են տանում մեր նվերները:
- Բարձրացնում են բարդիների կատարները:
- Իմ նվիրած ո՞ւմն էլ:
- Այո:
- Բայց որտեղից էլ նայում եմ, կատարների վրա ոչինչ չեմ տեսնում:
- Չես տեսնի, բարձր է բարդու կատարը:

Իսկ եթե կատարը կռացնենք, կտեսնե՞նք:

- Բարդին կռացնես՝ քեզ վրա կընկնի:

ՀԱՅԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԱՐԱՐԱՏ ԼԵՌԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ՎԵՐՀՈՒՐԸ

Սկիզբը՝ թիվ 10-րդ համարում

16

Շատ անգամ քո մոր և եղբայրներիդ հետ իրար սիրտ տալով,
Ուզեցինք հպվել, շոշափել ձեռքով շինվածքին այդ նոր:
Դեռ չմոտեցած, տեղնուտեղն ընկանք, գետնին տապալվելով,
Նրանից բխող լույսի ցոլքերից խելամաղ լինելով:

17

Տարակուսած քո մայրը և ես՝ ծերունիս բան չհասկանալով,
Միշտ հեռվից ողբալով դեգերում ենք լալով:
«Չէ՞ որ մենք տնկեցինք այգին, խաղողը, որթատունկերն այդ». ասում ենք լացով,
«Մի՞թե մերը չեն աշխարհը, շարժվող կենդանի ու սողուն, այս երկիր ու ծով»:

18

Արի՛, տե՛ս, որդյակ, ահա Արկուռին, ուր արկանեցինք որթը խաղողի,
Ահ՛ա և Մարանդ, ուր որ քո մայրն է շիրմաքարի տակ այն:
Այստեղ մեր հովիտն էր, այն՝ մեր կացարանն, այնտեղ՝ մեր արոտն,
Այստեղ զոհասեղանն էր մեր, այնտեղ՝ ծորի մեջ, վրաններն հովվական:

19

Մինչդեռ տեսնում ես՝ այստեղից անպետք, անշուք թվացող մի փայտի կտոր,
Ծակում, ծակծկում է, չի թողնում անգամ մոտիկ էլ գնալ»:
Պատմում էր ու ողբում ծերը զառամյալ, գրկովս ընկած,
Մեր շուրջ եղածն էր իր օրհնված մատներով մատնացույց անում:

20

«Փայտի կտոր չէ՛, ո՛չ էլ անպիտան, մի չնչին շինվածք,
Ինչպես դու ես կարծում, ազգերի հայր համայն»- պատասխանեցի նրան:
«Նա զինանիշ է, վահան, զենք ու զրահ փառքերի Արքայի,
Որով փշրվեցին մահվան զորագլուխ իշխանի դևերի ժանիքներն ամեհի»:

(շարունակելի)

Թարգմանությունը՝ ԱՐԱ ԶՈՀՐԱԲՅԱՆԻ

ԱՆԱՆԻԱ ՆԱՐԵԿԱՑԻ

«Հոգեզարդ փիլիսոփա» և «հռչակավոր հռետոր»՝ այսպես են համարել իրենց ուսուցչին՝ Անանիա Նարեկացուն մեծանուն բանաստեղծ Գրիգոր Նարեկացին և պատմագիր Ուխտանեսը: Անանիա Նարեկացի. 10-րդ դարի հայ մատենագիր, աստվածաբան, փիլիսոփա, մեկնիչ, մանկավարժ, Նարեկավանքի առաջնորդ ու դպրոցի հիմնադիր: Նա հեղինակ է մի շարք խրատների, ճառերի՝ «Նորին բանք Աղաւթից», «Վասն համբերութեան եւ խաղաղութեան», «Վասն խոնարհութեան», «Խրատք քահանայից», «Յաղագս զղջման եւ արտասուաց», ինչպես նաև «Հաւատարմատ» երկի: Անանիա Նարեկացին Գրիգոր Նարեկացու ազգականն է և նրա ուսուցիչը:

Հայ ուխտավորները Նարեկա վանքի քարայրի մոտ

Ա. Նարեկացու խրատներում քննվում են վանական կենցաղավարության ու բարոյագիտությանն առնչվող հարցեր: Սակայն 10-րդ դարի հայ իրականության, վանական միջավայրի և մշակույթի պատկերը երևան հանելուց զատ հեղինակը անդրադառնում է մարդու ներքին հոգևոր կյանքին: Նա իր ինքնատիպ խորհրդապաշտական աշխարհընկալմամբ քննության է առնում մարդ-արարածի մաքրագործման, կատարելագործման և Աստվածության հետ հաղորդակցվելու գաղափարները: Մարդու մաքրագործումն ուղեկցվում է ներքին աղոթքով, որը ներանձնային ապրում է: Ա. Նարեկացին մեզ է ներկայացնում հոգևոր կյանքի կարևորագույն մի պահի՝ աղոթքի քննությունը, որը կարևոր է յուրաքանչյուր հավատացյալի համար, քանի որ աղոթքի ոչ այլ ինչ է, քան մտքի զրույց Աստծո հետ: «Զկարգեալ աղօթէն հասարակաց զտուընջեան եւ զգիշերոյ բնաւ մի անտես առնէր: Զքո սահմանեալ առանձնական կարգն անխափան կատարեայ զաղօթից եւ զպահոց»: Նարեկացին կոչ է անում աղոթքը հյուսել զղջումով, ջերմեռանդ արտասուքով, քանի որ արտասուքը հաշտեցնում է մարդուն Աստծո հետ: Աստվածացումը և նրան հասնելու միակ ուղին հոգևոր սխրանքների ճանապարհն է՝ ուղեկցված աշխարհուրացումով, ճգնակեցական ինքնախարազանումով, հոգու նյութազերծումով, հոգևոր ինքնակատարելագործմամբ: Նարեկացու համար փրկությունը անհատական սխրանք է: Սակայն այս ամենի հիմքում ընկած է մարդու ինքնազննությունը, մարդու ընտրության արվեստը, որը ներկայանում է որպես բազում ջանքերի, ինքնակատարելագործման ու ինքնահաղթահարման ընթացք, որի նպատակը ներքին մարդու մաքրագործումն է, և որը մարդն անցնում է իր փորձառության ճանապարհին: Ընդհանրապես, հեղինակը մարդկային առաքինություններն ու բարքերը բաժանում է երկու մասի՝ երևելի, այսինքն՝ տեսանելի բարքեր և աներևույթ՝ անտեսանելի բարքեր, որն էլ հենց ներքին մարդն է: Ընտրության արվեստի նպատակն է ոչ միայն երևելի, այլև աներևույթ բարքերի մաքրագործությունը: Սա մարդու փրկության ուղու անբաժանելի մասն է. ներքին մարդու մաքրագործումն ու միայն արտաքին պաշտամունքն ու ճգնակեցական կենցաղը: Մարդկային աներևույթ բարքերի մեջ Նարեկացին առանձնահատուկ տեղ է հատկացնում սիրուն, որը խոնարհության և խաղաղության կողքին դիտվում է որպես աստվածային սկիզբ, զգացմունք և ունակություն մարդկային հոգում, զորություն Աստծո հետ հաղորդակցվելու և Նրանից շնորհներ ստանալու ճանապարհին:

Խոնարհության մասին խոսելիս՝ կարևորվում է ներքին ու արտաքին դրսևորումների ներդաշնակությունը, իսկ մեղսագործությունից խուսափելու համար պետք է զգուշանալ արատավոր զգայություններից, գայթակղություններից ու մտքերից, քանի որ դրանք նախորդում են մեղքերին: Անանիա Նարեկացին մեղադրվել է միջնադարյան Հայաստանում տարածված աղանդավորական շարժումներից մեկի՝ թոնդրակեցիներին հարելու մեջ, որը հերքելու համար նա գրել է «Գիր խոստովանութեան»-ը: Հայտնի է, որ Անանիա Նարեկացին Անանիա Ա Մոկացի կաթողիկոսի պատվերով գրել է թոնդրակեցիների մոլորությունները դատապարտող աշխատություն՝ «Հակաճառութիւն ընդդէմ թոնդրակեցւոց», որը չի պահպանվել: Սակայն Գրիգոր Նարեկացին իր աշխատություններից մեկում անդրադարձել է այդ գրությանը և որոշ տեղեկություններ հաղորդել թոնդրակյան աղանդի որդեգրած ուսմունքի մասին, որը աղանդի գաղափարների ուսումնասիրության համար կարևորագույն աղբյուր է:

ԱՇԽԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Օգտագործված գրականության ցանկ

1. Մ. Մ. ձեռագիր թիվ 2335, Անանիա Նարեկացի, «Նորին բանք Աղաւթից»:
2. Հ. Թամրազյան, «Անանիա Նարեկացի», Երևան -1986:
3. Քրիստոնյա Հայաստան Հանրագիտարան, Երևան -2002:

Կ Ո Չ

Արցախյան ազատամարտի մասնակիցներին

Ձեզ եմ դիմում, Արցախյան ազատամարտի մասնակից մեր ժողովրդի խիզախ զավակներ, մեր ինքնապաշտպանական բազմանուն ջոկատներում ադրբեջանցիների դեմ կռված քաջ մարտիկներ:

Դուք, որ եղել եք Արցախյան ազգային ազատագրական պայքարի մասնակիցներ և ականատեսի աչքերով տեսել եք ռազմաճակատում ծավալվող իրադարձությունները, ամենից ճշմարիտ ու ճշգրիտ դուք կարող եք նկարագրել ձեր տեսած դեպքերն ու իրողությունները, ուր արտացոլված կլինի թշնամու իրական դեմքը՝ նրա դաժանություններն ու վայրագությունները, որոնք ստիպել են ձեզ զենք վերցնել ու պաշտպանել ձեր տունն ու պատիվը, ձեր հայոց հողը և ազգային արժանապատվությունը: Ձեր գրած իրական փաստերը իրենց էությամբ այսօրվա և գալիք սերունդների համար կդառնան ականատեսի անհերքելի վկայագրեր:

Ես և դուստրս՝ բանաստեղծուհի Լիլիթը, կոչ ենք անում, ձեզ ձեր գրավոր հուշերը, գրառումները, դեպքերը, եղելությունները, օրագրային նշումները, բանաստեղծությունները, որոնք ռազմաճակատում կատարվածի վկայություններ են, ներկայացրեք մեզ՝ կազմելու և հրատարակելու մի ալմանախ, որի խորագրին է «Արցախյան հերոսամարտը՝ ականատեսների աչքերով»:

Թանկագին քաջորդիներ, խնդրում ենք ձեզ, նյութերը հանձնել մեքենագիր: Ներկայացնել կրճատ կենսագրություն, նշել զինվորական կոչումը, մեկ լուսանկար, ձեր հասցեն և հեռախոսահամարը:

Մեր հասցեն է՝ Մարշալ Բաղրամյան 3, Հայաստանի Գրողների միություն, երկրորդ հարկ, «Սամվել Շահմուրադյանի հուշասենյակ»: Ժամը 13-ից մինչև 16-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից: Հեռ. 56-21-90 աշխ.:

Բանաստեղծուհիները
ՄԵՏԱՔՍԵ ԵՎ ԼԻԼԻԹ

Լեռնային Կիլիկիայի բերդերից մեկն էր Ամուդան (հիմա կոչվում է Հեմեդիեկալեսի), որը գտնվում էր Ջահան գետի հովտում՝ կոնաձև լեռան գագաթին: Ունենալով քառակուսի դղյակ՝ այն հարավարևմտյան և հյուսիսարևելյան կողմերից ամրացվել է պարիսպներով ու աշտարակներով: Ամուդան հսկել է Ջահանի գետանցի և Ամանոսի լեռնային ուղիների հանգույցը, արևելքից պաշտպանել Անաբարզա քաղաքը: Արաբ պատմիչները վկայում են, թե Ամուդան գտնվում էր Ջահանի գետաբերանին: Վիլլեբրանդ ուղեգիրը, որ այցելել էր Լևոն մեծին, ասում է, թե Ջահանը Ամուդայի ստորոտից է անցնում: Լանկլուան ճգնում է այն նույնացնել Թումլու բերդի հետ, որն Անարզաբայի հարավում էր գտնվում:

Թորոս Բ իշխանը, երբ վերադառնում էր գերությունից, Ասորիքի կողմից մոտենալով Կիլիկիային, այնտեղ գտնում է իր եղբայր Ստեփաննեին, նրա հետ միասին գրավում է նախ՝ Ամուդան, ապա՝ Վահկան: 1145-ին բյուզանդացիներից ազատագրված Ամուդան Կիլիկիայի հայկական իշխանությանն էր միացել:

«Նախ զԱմուտայն եղեն առեալ, ապա նովաւ այլոց տիրեալ»,- գրում է Վահրամ տաղասացը: Թորոս Ա-ի գրաված բերդերի թվում էին նաև Սիմանկլան և Առյուծը:

Միքայել Ասորին գրում է, թե Թորոս Բ-ն՝ Լևոն իշխանի որդին, Պոլսից փախչելով (որտեղ հույները 1125-ին գերեվարել էին իրեն և հորը), Կիլիկիա հասնելուն պես, նախ՝ գրավում է Ամուդան. «Եկն յերկիրն Կիլիկեցւոց եւ ետ նմա զիւր ձին եւ երկոտասան այր… եւ ած զնա յԱմուտայն, որ կայր ընդ ձեռամբ նորա, եւ ի վաղիւն տեսին զնշանակս նորս եւ ծանեան թէ ողորմութիւն Աստուծոյ եհաս ի վերայ քրիստենէից… եւ անդուստ ընդարձակեցաւ եւ էառ զբազում տեղիս»:

12-րդ դարի վերջերին Ամուդայի բերդատերը Սիմոն անունով մեկն էր, Լևոն Ա-ի թագավորության օրոք Սմբատ Սպարապետը նրան չի հիշատակում:

Լևոն մեծագործը 1212-ին մասնավոր պարգևագրով (զինվորական ծառայության համար) Ամուդա բերդը՝ հարակից մի քանի գյուղերով, նվիրեց Տևտոնյան ասպետներին: Լևոն Ա-ն այս նվերը մասնավոր կոնդակով վավերացրեց, և այն հաստատեց Իննովկենտիոս Գ Պապը 1213-ի փետրվարի 27-ին:

Վերևում հիշատակված Վիլլեբրանդը, որ Լևոն Մեծի մոտ մնացել էր շուրջ կես ամիս և հետո անցել Ամուդա՝ Տևտոնների ամրոց, երբ նկարագրում է Ջահան գետը, ասում է, թե հայոց բարձր լեռներից է իջնում և Ամուդա բերդի ստորոտից անցնում է՝ քսվելով նրա պարիսպներին:

Կես դարից ավելի Ամուդան մնում է Տևտոնյան ասպետների ձեռքում, սակայն, երբ 1266-ին սկսվում է եգիպտական մամլուքների արշավանքը դեպի Կիլիկիա, Լևոն Բ-ի գերությունից և նրա եղբոր՝ Թորոսի մահից հետո, եգիպտական սուլթանը մտնում է Կիլիկիա և բազմաթիվ բերդերի հետ գրավում է նաև Ամուդան. սրի են քաշել բերդի բնակիչներին՝ 2200 տղամարդկանց ու կանանց, իսկ երեխաներին՝ գերեվարել:

1298-ին եգիպտացիները դարձյալ հարձակվում են, սակայն, Ջահան գետի ջրերն այդ ժամանակ բարձրացել էին, նրանք գետի հունով անցնել չեն կարողանում, ուստի, ավերում ու կողոպտում են Ամուդայի շրջակայքը:

Ամուդա բերդի դիմաց՝ Ջահան գետի աջ ափին, գտնվող Հեմեդիե գյուղն ամբողջությամբ բնակեցված էր հայերով:

Հեմեդիե գյուղի մոտ դեռ կանգուն են բերդի ավերակները:

ՋԵՄՄԱ ԲԱՂԴԱԴՅԱՆ

«ՉՄԻՋԱՄՏԵԼ ՔԻՐՔՈՒՔԻ ԴԵՊՔԵՐԻՆ, ԱՅԼԱՊԵՍ ՔՐԴԵՐՆ ԷԼ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԳՈՐԾԵՐԻՆ ԿԽԱՌՆՎԵՆ ԴԻԱՐԲԵՔԻՐՈՒՄ»

Նախազգուշացնում է քրդական վարչակարգի ղեկավար Մասուդ Բարզանին

Ապրիլի 7-ին Հյուսիսային Իրաքում քրդական վարչակարգի ղեկավար Մասուդ Բարզանին «Ալ Արաբիա» հեռուստատեսությանը տված հարցազրույցում Քիրքուքն անվանել է քրդական քաղաք: Ինչպես նշում է թուրքական հանրային հեռուստատեսությունը, նա միաժամանակ նախազգուշացրել է. «Եթե Թուրքիան Քիրքուքի հաշվով հանկարծ միջամտի Հյուսիսային Իրաքի իրադարձություններին, ապա Իրաքի քրդերն էլ Դիարբեքիրում և այլ քաղաքներում կխառնվեն Թուրքիայի գործերին»:

Բարզանիի այս նախազգուշացումը Թուրքիայում ընկալվել է իբրև ամբարտավանության դրսևորում և բուռն հակազդեցություն է առաջ բերել ինչպես քաղաքական և հասարակական շրջանակներում, այնպես էլ մամուլում: Ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական, «Ճշմարիտ ուղի», «Մայր հայրենիք», «Մեծ միասնություն» կուսակցությունները խստագույնս դատապարտել է Բարզանիին, պահանջելով էրդողանի կառավարությունից արժանի հակահարված տալ նրան: Իսկ քրդամետ «Ժողովրդավարական հասարակարգ», «Մասնակցային ժողովրդավարություն», «Իրավունքների և ազատությունների» կուսակցությունները, որոնք գործում են Թուրքիայում, հավանություն են տվել Բարզանիին:

Ավելին, «Մասնակցային ժողովրդավարություն» կուսակցության նախագահ Շերաֆեթդին Էլչին ասել է. «Թուրքիան ցեղակիցների պատրվակով այլ երկրների ներքին գործերին միջամտելու հիվանդությամբ է տառապում: Պետք է ձերբազատվել այդ հիվանդությունից, որովհետև Թուրքիայում էլ կան էթնիկ այլ խմբավորումներ: Եթե Թուրքիան Քիրքուքի պատճառաբանությամբ փորձի միջամտել Հյուսիսային Իրաքի զարգացումներին, ապա քրդերը հազիվ թե մնան հանդիսատեսի դերում»:

Նրան է լրացրել «Իրավունքների և ազատությունների» կուսակցության նախագահ Սերթաչ Բուջաքը, նշելով. «Եթե փոքրաթիվ թուրքմենների առկայությունը Քիրքուքում Թուրքիային տալիս է միջամտության իրավունք, ապա նույն իրավունքը պետք է վերապահվի նաև Բարզանիին»:

Ապրիլի 8-ին նոր հայտարարություն է արել Մասուդ Բարզանին. «Թուրքիան Քիրքուքը ներկայացնում է իբրև ներքին խնդիր: Իրականում Թուրքիայի խնդիրը ոչ Քիրքուքն է, ոչ էլ PKK-ն, այլ քուրդ ժողովրդի գոյությունը: Քրդերն ունեն անկախ պետականության իրավունք: Չպետք է դրանից սարսափել: Այդ պետությունը սակայն հնարավոր կլինի ստեղծել 10-15 տարի հետո միայն»: **(10. 04. 2007թ., «Ազգ»)**

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Ջոհասեղանին են դրված Լոռվա մարզի Թեղուտ և Շնող գյուղերն իրենց հարակից անտառներով

ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության տված արտոնագրով «Արմենիան Քափըր Փրոգրամ» ՓԲԸ-ին արտոնվել է լրացուցիչ ուսումնասիրել և նպատակահարմարության դեպքում շահագործել Լոռվա մարզի Թումանյանի շրջանում գտնվող Թեղուտի պղնձամոլիբդենային հանքավայրը: Ըստ ընկերության ներկայացրած նախագծի, հանքավայրի ռելիեֆը բարդ է, կտրտված չորս կիրճով, որոնցով հոսող Շնող, Կռունկ, Պականաջուր (Խառատաձոր), Դուքանաձոր գետերը մշտական ջրհոսք ունեն: Կենդանիներից այդտեղ առկա են միջատների ..., սողունների 10, երկկենցաղների 2, թռուչնների 86, ձկների 5, կաթնասունների 55 տեսակներ: Այդ կենդանիններից շատերը գրանցված են Հայաստանի և Միջազգային Կարմիր գրքերում:

Թեղուտ և Շնող գյուղերի խմելու և ոռոգման ջրի մատակարարման միակ աղբյուրը Շնող գետն է, իսկ դրա վտակները սնվում են հանքահանման համար նախատեսվող տարածքներից:

Ուսումնասիրության նպատակով ընկերությանը տրամադրվել է 1970 հա, որից 1589,6-ը՝ անտառային ֆոնդի, իսկ 380,4-ը՝ համայնքային հողեր են: Հանքարդյունաբերության տակ դրվելիք, ոչնչացվելիք տարածքը բնության հրաշալիքներից է: Այդտեղի անտառը, թերևս, մեր հանրապետության ամենալավ պահպանված ու ամենահարուստ կենսաբազմազանություն ունեցող հատվածն է: Այդ տարածքում կան հնագույն և այլ ժամանակաշրջանների հնագիտական ու պատմամշակութային բազում հուշարձաններ:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության բաժնետոմսերի 81%-ը պատկանում է Լիխտենշտեյնում գրանցված Vallex F.M. Establishment ընկերությանը, իսկ 19%-ը՝ Ռուսաստանի քաղաքացի Վալերի Մեջլումյանին:

«Արմենիան Քափըր Փրոգրամ» ընկերության կողմից ներկայացված Թեղուտի հանքավայրի շահագործման նախագիծը կազմվել է ՀՀ օրենքների կոպիտ խախտումներով: Չնայած դրան, ՀՀ բնապահպանության նախարարությունը փորձաքննության է ընդունել այդ նախագիծը և, առանց փորձաքննություն իրականացնելու, նախագծին դրական եզրակացություն է տվել:

ՀԱԿՈԲ ՍԱՆԱՍԱՐՅԱՆ
Թեղուտ, Երևան, 2007թ.

Գեղանկարները՝ Նիկոլ Աղաբաբյանի:
Արվեստագետի հետ հարցազրույցը
կարդացեք էջ 26-ում: